



# Զիաց Մեր Հանապազորդ

ՀՈՒՆԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021



...Ինձ համար կյանքը Քրիստոսն է,  
իսկ մեռնելը՝ շահ:

Փիլիպպեցիներ 1. 21

Հարգելի՛ բարեկամ,

Սույն գրքույկում Աստվածաշունչ գրքի Հին Կտակարանի բաժնի մեջբերումներն արվել են Աստվածաշունչի՝ Մայր Աթոռ Ս.

Էջմիածնի – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած արելահայերեն թարգմանությունից (2007), իսկ Նոր Կտակարանի մեջբերումները՝ Հայաստանի Ավետարանական եկեղեցիների միության – Հայաստանի Աստվածաշնչային ընկերության հրատարակած Նոր Կտակարանից (2003):

## **Շապիկի առաջին էջին՝ Սբ. Հռիփսիմե վանքը**

Սուրբ Հռիփսիմե տաճարը հայկական ճարտարապետական հանճարի գլուխգործոցներից է: Այն կառուցվել է 7-րդ դարում և գտնվում է Վաղարշապատ քաղաքում: Ավանդության համաձայն՝ Հռիփսիմեն քրիստոնյա կույսերի հետ, խուսափելով հռոմեական Դիոկղետիանոս կայսեր (284-305) հալածանքներից, փախչում է Հայաստան և քրիստոնեություն քարոզում: Բայց հայոց Տրդատ Մեծ արքայի կողմից նույնպես հալածվում է և իր հավատակից 32 կույսերի հետ միասին սպանվում: Կույսերի նահատակման վայրում Տրդատ արքան և Գրիգոր Լուսավորիչը կառուցել են վկայարան՝ կիսագետնափոր հանգստարան, վրան՝ քարաշեն չորս սյուներով ամպիովանի: Վ դ. այն ավերել են պարսիկները: Սահակ Պարթևը կառուցել է նորը: Հետագայում՝ 618 թ. Կոմիտաս Ա. Աղցեցի կաթողիկոսն այդ վայրում կառուցել է եկեղեցին: Պահպանված է ավագ խորանի արձանագրությունն այն մասին, որ կաթողիկոսն իրեն անվանել է «Շինող սրբոյ Հռիփսիմեի»: 1653-ին Փիլիպոս կաթողիկոսն այն վերանորոգել է և արևմտյան մուտքի դիմաց կառուցել բաց գավիթ: Հետագայում եկեղեցին շրջափակվել է աղյուսաշեն պարսպով ու բուրգերով (1776), գավթի վրա կառուցվել է զանգակատունը (1880): Զգալի նորոգումներ են կատարվել 1898-ին: Սուրբ Հռիփսիմե տաճարը պատկանում է միջնադարյան Հայաստանի եկեղեցական կառույցների առավել կատարելագործված տիպին: 1958-ին կատարված վերանորոգման աշխատանքների և պեղումների ժամանակ պարզվել է, որ եկեղեցին կառուցված է հեթանոսական տաճարի տեղում: Սուրբ Հռիփսիմե տաճարը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում: ([www.wikipedia.org](http://www.wikipedia.org))



# Ձիաց մեր հանապազորդ

ՀՈՒԼԻՍ | ՕԳՈՍՏՈՍ | ՍԵՊՏԵՄԲԵՐ 2021

**ԼՔ. ՏԱՐԻ**

**Գ. ԵՌԱՄՍԵԱԿ**

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Radio Bible Class ընկերությունը, որի թույլտվությամբ Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ էջերի խորհրդածությունները:

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: [amaa@amaa.org](mailto:amaa@amaa.org), Website: [www.amaa.org](http://www.amaa.org)

---

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)

Կայքէջ՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Հանդարտվե՛ք ու իմացե՛ք, որ ես Աստվածն եմ: (Սաղմ.45.11)

## ԱՆՇՏԱՊ ԱՐՈԹՔ

**Ա**յլիս Կահոլուսանան պատմում է, որ Հավայի նահանգի մարդիկ տաճար մտնելուց առաջ ժամեր շարունակ սպասում են դրսում, նախապատրաստվում: Իսկ ներս մտնելուց հետո էլ իրենց աղոթքն անելու համար ծնկահոգ են մոտենում խորանին: Իրենց աղոթքների միջոցով «կյանք ստանալու» համար դրսում երկար նստում են նաև տաճարից դուրս գալուց հետո: Երբ միսիոներները առաջին անգամ եկան այստեղ, Հավայացիների համար նրանց աղոթքները շատ տարօրինակ էին թվում: Նրանք ոտքի էին կանգնում, մի քանի նախադասություն ասում, վերջում՝ Ամեն և ավարտում էին: Միսիոներների աղոթքները հավայացիներն անվանում էին «աղոթք առանց շունչ քաշելու»: Այլսի պատմությունն այն մասին է, թե ինչպես Աստծո ժողովուրդը առիթն օգտագործում է «հանդարտվելու և իմանալու համար» (Սաղմ. 45.11): Չսխալվե՛նք, Աստված մեր աղոթքները միշտ է լսում, ասված լինեն դրանք արագ, թե դանդաղ: Բայց մեր կյանքի ընթացքը հաճախ ընդօրինակում է մեր սրտին, և մենք կարիք ենք ունենում շատ ժամանակ տրամադրելու, որպեսզի Աստված մեզ հետ խոսի ոչ միայն մեր, այլև մեր շրջապատում եղողների կյանքի ընթացքում:

Մենք հաճախ ենք տարբեր հարցերում շտապում, անհամբեր ենք: Բայց հավատում եմ, որ Աստված Իր բարությունը կասի: «Հանդարտվի՛ր: Շունչ քաշիր: Դանդաղ գնա ու հիշի՛ր, որ նեղություն ժամանակ քո օգնությունը, ուժն ու պահպանը ես եմ՝ Աստված»: Այդպես վարվելը նշանակում է ճանաչել Աստծուն, վստահել նրան ու ապրել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ թե՛ բարի, և թե՛ չար ժամանակներում Քո օգնությունը միշտ կա: Ինձ շնորհք տուր հանգիստ մնալու և իմանալու, որ Աստված Դու ես: Ամեն:

**Մտքերի՛ր մի տղահ, երբ հանգիստ լսում էիր Աստծո ձայնը: Մի՛ շատիր, կանգ առ ու իմացի՛ր, որ Աստծո ներկայությունն ես վայելում:**

Սրբի հետ սուրբ կլինես, Տե՛ր, անարատ մարդու հետ՝ անարատ: (Սաղմ. 47.26)

## **ԸՆՏՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ ՊԱՏՎԵԼԸ**

**Լ** և Տոլմտոյի «Ընտանեկան երջանկություն» վեպի գլխավոր հերոսները՝ Սերգեյն ու Մաշան, հանդիպում են, երբ վերջինը շատ երիտասարդ էր ու գրավիչ: Իսկ Սերգեյը բավական տարիքով վաճառական էր, որը շատ էր ճամփորդել ու լավ ծանոթ էր Մաշայի գյուղական միջավայրից հեռու աշխարհին: Նրանք սիրահարվեցին, ամուսնացան և բնակություն հաստատեցին երկրի ծայրամասում: Որոշ ժամանակ անց Մաշան սկսեց ձանձրանալ, և Սերգեյը ճանապարհորդություն ձեռնարկեց դեպի Սանկտ-Պետերբուրգ: Այնտեղ Մաշայի գեղեցկությունն ու հմայքը նրան ավելի մեծ ճանաչում բերին: Զույգը պատրաստվում էր տուն վերադառնալ, երբ մի իշխան ցանկություն հայտնեց հանդիպել Մաշային: Սերգեյը գիտեր, որ կարող էր պարտադրել կնոջը՝ վերադառնալ իր հետ, բայց թույլ տվեց, որ նա ինքը որոշի: Մաշան ընտրեց իշխանին, և նրա դավաճանությունը կոտրեց Սերգեյի սիրտը:

Սերգեյի նման Աստված էլ մեզ չի պարտադրում հավատարիմ լինել իրեն: Քանի որ սիրում է մեզ, թույլ է տալիս ինքնուրույն որոշել՝ իրեն կո՞ղմ, թե հակառակ լինել: Մեր առաջին ճիշտ ընտրությունն այն կլինի, երբ իր Որդի Հիսուս Քրիստոսին ընդունենք որպես մեր մեղքերի քավություն գոհ (Ա.Հովհ. 4.9-10): Դրանից հետո մենք կունենանք երկար կյանք՝ որոշումներ ընդունելու համար:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, օգնիր՝ կարողանամ իմ որոշումներով պատվել Քեզ: Շնորհակալ եմ ամբողջ կյանքումս հավատարմորեն ինձ սիրելուդ համար: Ամեն:

**Հաճախ կարող եմ հայցնվել դժվարին որոշումներ ընդունելու պիճակում, բայց կարևոր է ընտրել այն, ինչը ամրացնում է մեր հարաբերությունը Հոր հետ:**

Մաքրեցե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտե՛րը մաքրեցե՛ք, ո՛վ երկմիտներ: (Հակ. 4.8)

## ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

**Փ**ոքրիկները ձեռքերը լվանալու ընթացքում երկու անգամ երգում էին «Ուրախ տարեդարձ» երգը: Նրանց մայրը բացատրել էր, որ այդքան պետք է տևի մանրէներից ազատվելը: Դեռ թագավարակից առաջ նրանք արդեն սովորել էին հիգիենայի այդ կանոնը:

Համաճարակի ընթացքում մենք տեսանք, որ բավական հոգնեցուցիչ է ամեն ինչի մաքրությունը հետևելը: Իսկ քերթելով մեղքը հանելը նշանակում է կենտրոնացած հետևել Աստծուն:

Հակոբոսը Հիսուսին հավատացողներին, որոնք տարածված էին Հռոմեական կայսրությունում, հորդորում էր հպատակվել Աստծուն: Խառնված լինելով վեճերի ու կոիվների մեջ՝ աշխարհիկ հաճույքների, փողի ու համբավի համար պայքարում նրանք դարձել էին Աստծո թշնամիներ: Եվ Հակոբոսը զգուշացնում էր. «Հնազանդվեցե՛ք Աստծուն, հակառակ կացեք սատանային, ու նա ձեզանից կփախչի:... Մաքրեցե՛ք ձեր ձեռքերը, ո՛վ մեղավորներ, և ձեր սրտե՛րը մաքրեցե՛ք, ո՛վ երկմիտներ» (Հակ. 4.7-8): Բայց ինչպե՞ս:

«Մոտեցե՛ք Աստծո՛ւն, և նա կմոտենա ձեզ» (Հմ.8): Սրանք մաքրող խոսքեր են, որ նկարագրում են Աստծոն դառնալու, մեղքի աղտը մեր կյանքից մաքրելու անհրաժեշտությունը: Հակոբոսն ավելի կոնկրետ է բացատրում այդ մաքրության ձևը. «Տառապեցե՛ք և սո՛ւգ արեք ու լացե՛ք. ձեր ծիծաղը թող սուղ դառնա, և ձեր ուրախությունը՝ տրամուլթյուն: Խոնարհվեցե՛ք Տիրոջ առաջ, և նա ձեզ կբարձրացնի» (Հմ.9-10):

**Աղոթք** - Սուրբ Աստված, շնորհակալ եմ մաքրության քո ձևերի և ինձ Քեզ մոտ ձգելուդ համար: Երբ կդառնամ դեպի Քեզ, լվա՛ ձեռքերս ու մաքրի՛ր սիրտս: Ամեն:

**Մեղք ծնունդ է մեզ, բայց կարելի է դառնալ Աստծուն, և Նա մեզ կմաքրի:**

Երբ դարձի գաս և հոգոց հանես, այն ժամանակ կապրես և կիմանաս, թե որտեղ ես գտնվում: Հույսդ դրել էիր սնտոի բաների վրա, դրա համար էլ սնտոի դարձավ և ձեր զորութունը: (Ես. 30.15)

## **ՎԱՏԱՀՈՒՄ ԵՆՔ ԱՍՏՕՈՒՆ**

**Ա**մերիկայի հեղափոխությունից ժամանակ սկզբում Քվեբեկում արշավանք սկսվեց բրիտանական ուժերի դեմ: Մասաչուսեթսի Նյուբերիպորտ քաղաքով դեպի Կանադա անցնելիս զինվորներն այցելեցին Հայտնի ավետարանիչ Ջորջ Ուայթֆիլդի դամբարան: Ուայթֆիլդի դագաղը բաց էր, հոգևորականի օձիքն ու բազպանը՝ հանված: Մնահավատության պատճառով՝ նրա հագուստը պատառոտել ու բաժանել էին՝ իբրև զինվորներին հաջողություն բերող ուժ: Արշավանքը ձախողվեց: Իսկ զինվորների արածը ցույց է տալիս դրամին ու կրոնական սովորույթներին վստահելու մեր մարդկային հակումը, որը պակաս է հանուն մեր բարեկեցության՝ Աստծո հետ մեր հարաբերությունից: Աստված Իր ժողովրդին զգուշացրել էր այդ բանից, երբ ասորիները սպառնում էին գրավել, և նրանք, փոխանակ իրենց մեղքերից հրաժարվելու և Աստծուն դառնալու, փարավոնին դիմեցին: «Այսպես է ասում Տերը՝ Իսրայելի սուրբ Աստվածը. «Երբ դարձի գաս և հոգոց հանես, այն ժամանակ կապրես եւ կիմանաս, թե որտեղ ես գտնվում: Հույսդ դրել էիր սնտոի բաների վրա, դրա համար էլ սնտոի դարձավ և ձեր զորությունը: Դուք չէիք կամենում լսել, այլ ասում էիք. «Մենք կփախչենք մեր երկվարներով»: Դրա համար էլ փախստական պիտի դառնաք» (Ես. 30.15-16): Այդ արշավանքը նույնպես ձախողվեց, ինչպես ասել էր Աստված, և ասորիները գրավեցին Հուդայի երկիրը: Բայց Աստված ասաց Իր ժողովրդին. «Բայց Տերը պիտի սպասի և ողորմի քեզ»: Նույնիսկ երբ մենք ավելի ցածր բաների վստահենք, Աստված ներողամտորեն կմեկնի Իր ձեռքը, որպեսզի օգնի մեզ՝ դառնալու դեպի Ինքը:

**Աղոթք** - Տեր, վստահում եմ Քեզ: Խնդրում եմ՝ օգնիր ինձ, որ վստահեմ Քեզ, որովհետև Դու միշտ հավատարիմ ես: Ամեն:

**Փորձում եմ մեր հույսը դնել սին բաների վրա: Բայց ավելի լավ է վստահել ու աղավինել Աստծուն:**

Իմ խոսքն ու քարոզչությունը ոչ թե մարդկային իմաստության համոզիչ խոսքերով եղան, այլ Դոգու և զորության ապացուցումով: (Ա.Կորնթ. 2.4)

### **ՄԵՐ ՎՍՏԱՅՈՒԹՅՈՒՆ ԶԱՅՏՆԵԼՈՒ ԹԵՄԱԼ**

**Ա**լենը եկել էր խորհուրդ հարցնելու, թե ինչպես հաղթահարելու էր իր գլխավոր խնդիրը՝ մարդկանց առջև խոսելու վախը: Շատերի նման նա էլ երբ սկսում է խոսել, սիրտն արագ է աշխատում, բերանը չորանում է, դեմքը՝ շիկնում: Այդ վախը ամենատարածված զգացումներից է: Շատերը նույնիսկ կատակում են, թե մահից ավելի վախենում են հանրության առջև խոսելուց: Ալենին օգնելու համար առաջարկեցի, որ ելույթների ժամանակ կենտրոնանա ոչ թե այն բանի վրա, թե ինչպես է ներկայացնում նյութը, այլ խորանա դրա բուն էությունը մեջ:

Կենտրոնացման ուղղությունը փոխելը նման է Պողոսի՝ մարդկանց դեպի Աստված առաջնորդելու մոտեցմանը: Երբ նա գրում էր Կորնթոսի եկեղեցուն, նկատեց, որ «Իր խոսքն ու քարոզչությունը մարդկային իմաստության համոզիչ խոսքերով չեղան» (Ա.Կորնթ.2.4): Փոխարենը նա որոշեց կենտրոնանալ միայն Հիսուսի և Նրա խաչելության վրա (Հմ.2)՝ վստահելով, որ իր խոսքերը կգորացնի ոչ թե պերճախոսությունը, այլ Սուրբ Հոգին :

Երբ մենք ճանաչում ենք Աստծուն, ցանկություն է առաջանում նրա մասին խոսել ուրիշների հետ: Բայց երբեմն ամաչում ենք, որովհետև վախենում ենք, թե չենք կարողանա պատշաճ բառերով ու ճիշտ ձևով Նրան ներկայացնել: Կենտրոնանալով այն թեմայի վրա, թե ով է Աստված ու իր սքանչելի խոսքերը, մենք էլ Պողոսի նման կարող ենք Աստծոն վստահել մեր խոսքերը զորացնելու գործը և առանց վախի նրա մասին խոսել ուրիշների մոտ:

**Աղոթք** -Տե՛ր, շնորհակալ եմ, որ Աստվածաշնչի միջոցով հայտնվում ես ինձ ու իմ կյանքում եղողներին: Խնդրում եմ օգնի՛ր ինձ՝ հայտնեմ ուրիշներին այն վստահությունը, որ Դու կգորացնես ինձ: Ամեն:

**Շահ բաներ կարող են խանգարել, որ բարի լուրը հայտնենք ուրիշներին: Թող առաջալի խոսքերը խթանեն մեզ Իր քաղվածքները լինելու:**



Նույն ինքը Հոգին վկայում է մեր հոգուն, որ մենք Աստուծու որդիներ ենք: (Հռոմ. 8.16)

## **ԱՆՉԱՅՐ ՉԵՄ**

**Զ**ոն Սոուկերսը «Անհայր սերունդ» խորագրով գրքում գրում է. «Որևէ սերունդ չի տեսել այսքան անհայր երեխաներ, որքան ներկա սերունդը, որի 25 միլիոն մանուկներ առանց հոր են մեծանում»: Իմ անձնական կյանքում էլ կա այդ խնդիրը. եթե հորս գրստում հանդիպեի, չէի ճանաչի, որովհետև ծնողներս ամուսնալուծվել էին, երբ ես փոքր էի: Հորս բոլոր լուսանկարներն էլ այրված են: Ուստի տարիներ շարունակ ես ինձ անհայր էի համարում: Տասներեք տարեկանում լսեցի Տերունական աղոթքը (Մատթ. 6.9-13) և ինքս ինձ ասացի.«Իու կարող ես չունենալ երկրային հայր, բայց հիմա ունես Աստված՝ որպես երկնային Հայր»:

Մատթեոս 6.9-ում մենք սովորում ենք աղոթել.«Հայր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի քո անունը»: Նախքան այդ, 7-րդ կետում էլ ասում է. «Աղոթք անելիս շատախոս մի՛ եղեք»: Այս համարներն ի՞նչ կապ ունեն միմյանց հետ: Ես հասկացել եմ. քանի որ Աստված հիշում է, մենք կարիք չունենք կրկնելու: Նա ամեն ինչ հասկանում է, հետևաբար ավելորդ խոսքերի կարիք չկա: Նա կարեկից սիրտ ունի, ուստի չպիտի կասկածենք Իր բարությանը: Եվ որովհետև ինքը գիտի վախճանը, ի սկզբանե գիտենք, որ Իր ժամանակը կատարյալ է:

Որովհետև Աստված մեր Հայրն է, կարիք չունենք Նրա ուշադրությունը գրավելու համար շատախոսելու (Հմ.7): Աղոթքով մենք խոսում ենք մեր Հոր հետ, որը սիրում ու հոգում է մեր մասին և Տեր Հիսուսի միջոցով մեզ դարձնում Իր զավակները:

**Աղոթք** - Սիրելի՛ Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ինձ դարձնում ես Քո զավակը և լինում ես Հայր, որն ինձ ընդունում է Իր սուրբ ներկայության մեջ: Ամեն:

**Մի՛ փորձիր ավելորդ խոսքերով զրավել Աստծու ուշադրությունը: Պարզապես վստահի՛ր Իրեն՝ որդես քո Հայր:**

Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է: (Առ. 1.7)

## **ՄԵՁ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՍՏՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Է**լենը նամակ էր ստացել մտերիմ բարեկամից: Մի քանի օր առաջ նրա հետ խոսել էր իրեն տանջող մի խնդրի մասին: Մեծ հետաքրքրությամբ բացեց ծրարը և այնտեղ գտավ սովորական թելի վրա անցկացված գունավոր ուլունքներով մի մանյակ՝ վրան իմաստուն պատգամով քարտ. «Փնտրի՛ր Աստծո ճամփաները»: Էլենը մանյակը կախեց վզին ու ժպտաց:

Առակաների գիրքը իմաստուն խոսքերի հավաքածու է: Դրանց մեծ մասը գրված են ժամանակի իմաստուն թագավոր Սողոմոն Իմաստունի ձեռքով(Գ. Թագ.10.23): Գրքի երեսունմեկ գլուխները ընթերցողին կոչ են անում հետևել իմաստունությանը և խուսափել հիմարությունից՝ սկսելով շատ կարևոր ու հական մի պատգամով. «Իմաստության սկիզբը Տիրոջ երկյուղն է» (Առ.1.7):

Իմաստունությունն այն է, երբ գիտես՝ ի՞նչ անել և ե՞րբ: Իսկ դա հնարավոր է դառնում Աստծուն պատվելով, այն է՝ Իր ճամփաները փնտրելով: Խրատի սկզբում կարդում ենք. «Լսի՛ր, որդյա՛կ, հորդ խրատը և մի՛ մերժիր մորդ պատվիրանը, որպեսզի շնորհի պսակ կրես քո գլխին և ոսկի մանյակ՝ քո պարանոցին (Հմ.8-9):

Էլենի բարեկամը ուղարկել էր Իմաստունության աղբյուրից բխած ամենաանհրաժեշտ պատգամը՝ փնտրի՛ր Աստծո ճամփաները: Ստացած նվերը պատճառ դարձավ, որ Էլենը կարողանա իր ուշադրությունը դարձնել այնտեղ, որտեղ կարող էր գտնել իրեն անհրաժեշտ օգնությունը: Երբ պատվենք Աստծուն ու փնտրենք Իր ճամփաները, կստանանք մեզ անհրաժեշտ իմաստունությունը:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, խնդրում եմ հիշեցրու՛ ինձ, որ Դու ես ինձ անհրաժեշտ բոլոր իմաստնությունների աղբյուրը: Ուզում եմ միշտ փնտրել այն: Ամեն:

**Ասծո խրատները մեր վզին կրելի՛ք մանյակի իմաստության ուլունքներն են:**

Եվ երբ կանգնեք, աղոթք անեք, ներեցե՛ք, եթե մեկի դեմ բան ունենաք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ձեր հանցանքները ների: (Մարկ.11.25)

### ԱՐԳԵԼԱՓԱԿՎԱԾ ԱՂՈԹՔՆԵՐ

**1** 4 տարի շարունակ Մարս մոլորակի վրա պտտվող Հնարավորությունն անունով հետազոտական սարքը պարտաճանաչորեն հաղորդակցվում էր ՆԱՍԱ-ի՝ ռեակտիվ շարժիչների լաբորատորիայի մասնագետների հետ: Սարքը շրջել էր Մարսի մակերեսին, արել հազարավոր լուսանկարներ, վերլուծել բազմաթիվ երևույթներ: Սակայն 2018-ին, երբ փոշու հսկայական ամպը ծածկեց դրա արևային մարտկոցները, գործիքը հոսանքազրկվեց, և հաղորդակցությունը գիտնականների հետ դադարեց:

Հնարավոր է արդյոք, որ որևէ «փոշի» արգելափակի աշխարհից դուրս եղող Մեկի հետ մեր հաղորդակցությունը: Աղոթքով Աստծու հետ հաղորդակցվելու պարագայում ինչ որ քաներ կարող են խանգարել մեզ:

Աստվածաշունչն ասում է, որ մեր հարաբերությունը Աստծո հետ կարող է արգելափակել մեզքը: «Եթե սրտումս մեղք տեսնեի, Տերն ինձ չէր ունկնդրի» (Սաղմ. 65.18): Հիսուսն ասում է. «Եվ երբ կանգնեք, աղոթք անեք, ներեցե՛ք, եթե մեկի դեմ բան ունենաք, որպեսզի ձեր Հայրն էլ, որ երկնքում է, ձեր հանցանքները ների» (Մարկ.11.25): Աստծո հետ մեր հաղորդակցությունը կարող է խաթարվել նաև կասկածի ու անխոհեմության (Հակ. 1.5-7, Ա.Պետ.3.7) պատճառով:

Երբ խոստովանենք մեր մեղքերը և դառնանք դեպի Աստված, իր շնորհիվ կունենանք տիեզերքի մեծագույն հաղորդակցության՝ Աստծո հետ դեմառդեմ աղոթելու հնարավորություն:

**Աղոթք** - Հայր, խնդրում եմ՝ առաջնորդի՛ր ինձ, որ կարողանամ գտնել այն, ինչը սահմանափակում է իմ հաղորդակցությունը: Շնորհակալ եմ, որ օգնում ես ինձ Քեզ հետ կապ հաստատել: Ամեն:

**Այս Եվանջելիում մեր աղոթքները՝ բարելավելու մեր հաղորդակցությունը Տիրոջ հետ:**

Ամեն ջանք թափելով ձեր հավատով ներկայացրե՛ք առաքինությունը և առաքինությամբ՝ գիտությունը: (Բ. Պետ. 1.5)

### **ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀԻՎ ԱՃԵԼ**

**Ա**նգլիացի հայտնի քարոզիչ Չարլզ Հ. Սփերջընը (1834-1892) շատ հագեցած կյանք է ապրել: Տասնինը տարեկանում արդեն հոգևոր հովիվ էր ու քարոզներ էր կարդում մեծ լսարանների առջև: Ինքն էլ խմբագրել է իր քարոզները, որոնք 63 հատոր են դարձել, գրել է բազմաթիվ մեկնաբանություններ, աղոթքի մասին գրքեր և այլ գործեր: Նա շաբաթական վեց գիրք էր կարդում: Իր քարոզներից մեկում նա գրել է. «Ոչինչ չանելը ամենամեծ մեղքն է, որովհետև պարունակում է գրեթե բոլոր մյուս մեղքերը»: Աստված փրկի սարսափելի պարապությունից: Չարլզ Սփերջընն իր հոգևոր աճի համար ապրեց աշխատասիրություն, «ամեն ջանք թափելով» (Բ. Պետ.1.5), Աստծո շնորհքով ու Նրա համար: Եթե մենք Քրիստոսի հետևորդներ ենք, Աստված կարող է մեր մեջ սերմանել աճելու, Հիսուսին նմանվելու այդ նույն փափագն ու կարողությունը. «ամեն ջանք թափելով ձեր հավատով ներկայացրե՛ք առաքինությունը և առաքինությամբ՝ գիտությունը, գիտություն՝ ժուժկալությունը, ժուժկալություն՝ համբերությունը և համբերություն՝ աստվածապաշտությունը, աստվածապաշտություն՝ եղբայրասիրությունը և եղբայրասիրություն՝ սերը» (Հմ.5-7): Մեզանից յուրաքանչյուրն ունի տարբեր հակումներ, կարողություններ և իմացական տարբեր աստիճաններ: Ոչ բոլորը կարող են և պետք է ապրեն Սփերջընի նման: Բայց երբ հասկանանք Հիսուսի արածները, մենք էլ աշխատասիրության ու հավատարիմ ապրելակերպի ցանկություն կունենանք: Եվ Աստծո տված հնարավորություններով ապրելու և Իրեն ծառայելու շնորհիվ ուժ կգտնենք մեր մեջ: Իսկ մեր մեծ կամ փոքր ջանքերում Աստված իր Հոգու միջոցով կգորացնի մեզ:

**Աղոթք** -Ո՛վ Աստված, օգնի՛ր, որ լինեմ աշխատասեր և իմ բոլոր գործողություններով ապրեմ Քեզ համար: Շնորհակալ եմ, որ Քո Հոգու միջոցով ինձ տվել ես այդ անելու կարողությունը: Ամեն:

**Հարկավոր է լինել Քրիստոսի նման և ավելացնել Աստծո ցնորհները: Դրա համար ջանք թափենք ու գործի լծվենք:**

Իմացի՛ր, որ Աստծու բոլոր գործերն էլ ընտրյալ են, և նա ինքն է իրենից երկյուղ կրողների վերակացուն: (Առ. 30.5)

## **ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ՝ ԱՍԵՐ**

**Ա**ստվածաշունչը դրեցի ամբիոնին ու սկսեցի նայել անհամբերությամբ ինձ նայող դեմքերին: Ելույթից առաջ ազոթել էի, բայց ինչու՞ չկարողացա խոսել:

«Դու անարժան ես, ոչ մեկը քեզ չի լսի, հատկապես, որ գիտեն անցյալը: Եվ Աստված էլ քեզ բոլորովին չի օգտագործի»,- ինքս իմ հասցեին ասած այս խոսքերը անընդհատ պտտվում էին մտքումս, այժմ էլ գլուխ բարձրացրին, ու ես մի պահ անվստահ ու վախեցած զգացի: Ուստի բացեցի Աստվածաշունչի Առ. 30.5-ը և կարդացի. «Իմացի՛ր, որ Աստծու բոլոր գործերն էլ ընտրյալ են, և նա ինքն է իրենից երկյուղ կրողների վերակացուն»: Աչքերս փակեցի, խաղաղվեցի ու սկսեցի վկայությունս:

Մեզանից շատերն են ունեցել թերարժեքության կամ մեր մասին ուրիշների բացասական կարծիքի ջլատող զգացողությունը: Սակայն «անթերի» են միայն Աստծո խոսքերը՝ կատարյալ ու բացարձակապես առողջ: Մեր կամ մեր նպատակի մասին վատ կարծիքներ լսելիս, որպես Աստծո զավակներ, Աստծո անսխալական ու հարատևող ճշմարտությունը կպաշտպանի մեր մտքերն ու սրտերը: Մենք կարող ենք արձագանքել այնպես, ինչպես սաղմոսերգուն է գրել. «Քո հավերժական օրենքները հիշեցի, Տե՛ր, ու մխիթարվեցի» (Սաղմ. 118.52):

Պայքարենք Աստծո, մեր և ուրիշների մասին մեր ընդունած ստերի դեմ և փոխարինենք դրանք Աստվածաշունչի խոսքերով:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, խնդրում եմ՝ օգնիր՝ կարողանա՞մ աղոթքով սովորել խոսքդ, երբ օգնում ես ինձ կյանքը տեսնել ճշմարտության Քո ոսպնյակի միջով: Ամեն:

**Ասեր ու անճճություններ կարող ենք ընդունած լինել, բայց կարելի է Ասվածաճնչի լույսի ներքո գտնել ու վերցնել ճճմարտությունները:**

Զեներ կամենում, եղբայրներ, որ նմջեցյալների նկատմամբ տգետ լինեք ու չտրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն: (Ա.Թես. 4.13)

### **ՀՈՒՅՍ՝ ՎՇՏԻ ՄԵՁ**

**Լ**ոնդոնի Հիթրո օդանավակայան գնալու ճանապարհին տաքսու վարորդը պատմեց, որ ինքը, խոսափելով պատերազմից ու զրկանքներից, դեռ տասնհինգ տարեկանում եկել է Միացյալ Թագավորություն: Տասնմեկ տարի է անցել, այժմ ունի ընտանիք, որին կարողանում է պահել ավելի նպաստավոր պայմաններում: Սակայն իր համար մեծ ցավ է, որ դեռ բաժանված է ծնողներից ու մյուս հարազատներից: Նա ասաց, որ իր կյանքը լիարժեք կլինի միայն ընտանիքի հետ վերամիավորվելու պարագայում:

Միրելիներից բաժանված լինելը դժվար է, բայց ավելի դժվար է սիրելիին մահվան պատճառով կորցնելը: Այդ կորուստը անուղղելի է, քանի դեռ չենք միացել նրա հետ: Երբ Թեսաղոնիկեի նոր հավատացյալները ուղեցին ավելին իմանալ նման կորստյան մասին, Պողոսը գրեց. «Ձենք կամենում, եղբայրներ, որ ննջեցյալների նկատմամբ տգետ լինեք ու չտրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն» (Ա.Թես. 4.13): Ապա բացատրեց, որ, որպես Հիսուսին հավատացողներ, մենք կարող ենք ունենալ սքանչելի վերամիավորման, Քրիստոսի ներկայութայամբ հավիտյան միասին լինելու ակնկալիք» (Հմ.17):

Կյանքում այդպիսի կորուստները մեզ հուսահատություն են մատնում, բայց Հիսուսը մեզ կրկին միանալու հույս է տալիս: Ուստի վշտի ու կորստի պահին կարող ենք մխիթարվել Նրա հաստատուն խոստմամբ (Հմ.18):

**Աղոթք** - Հայր, չկա սիրելիի կորստյան պատճառով առաջացած բացը լրացնող որևէ բան: Ինձ ձգի՛ր Քեզ մոտ ու մխիթարի՛ր Քո սիրով ու շնորհքով: Ամեն:

**Միրելիների կորստյան դաժառուկ մեծ ցավ ու վիճակունենանք, բայց Տերը մեզ հավիտենության հույս է տալիս:**

Տեր Աստված Ադամի ու Երա կնոջ համար կաշվից զգեստներ պատրաստեց եւ հագրեց նրանց: (Ծն.3.21)

### **ՀԻՍՈՒՍԸ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄ Է ՄԵՁ**

**Թ**եև Սեմը որևէ սխալ բան չէր արել, բայց կորցրեց մեքենաշինական արտադրամասի իր աշխատանքը: Մեկ այլ բաժանմունքում թույլ տրված անփութություն պատճառով իրենց արտադրած մեքենաներում խնդիրներ առաջացան, զգուշավոր հաճախորդներն սկսեցին խուսափել այդ տեսակի մեքենաներ գնելուց, և ընկերությունը հարկադրված եղավ կրճատումներ անել: Փաստորեն մարդիկ «անուղղակիորեն» վնաս կրեցին, որն արդար չէր: Ու երբեք էլ արդար չէ:

Պատմության առաջին անուղղակի վնասը պատահեց առաջին մեղքից անմիջապես հետո: Երբ Ադամն ու Եվան ամաչեցին իրենց մերկությունից, Աստված նրանց համար «կաշվից զգեստներ պատրաստեց և հագրեց նրանց» (Ծն.3.21): Դրա համար մորթագերծ արվեցին պարտեզում ապահով ապրող կենդանիներ: Եվ դրանից հետո նույնպես: Աստված Իսրայելի ժողովրդին ասաց. «Նա Տիրոջը, որպես ողջակեզ, կմատուցի մեկ տարեկան առանց արատի մի ամլիկ գառ, և դա կանի ամեն օր վաղ առավոտյան» (Եզ. 46.13): Ամե՛ն օր: Քանի՛ հազար կենդանի է գոհվել մարդու մեղքի պատճառով:

Նրանց մահը անհրաժեշտ էր մեր մեղքերը ծածկելու համար, մինչև այն օրը, երբ Հիսուս՝ Աստծո գառը, եկավ դրանք վերցնելու (Հովհ.1.29): Անվանենք դա «անուղղակի բարեփոխում»: Ինչպես որ Ադամի մեղքը մեռցնում է մեզ, «Վերջին Ադամի»՝ Քրիստոսի Հնազանդությունը նորոգում է բոլոր իրեն հավատացողներին (Հռոմ. 5. 17-19): Հավատքով դիմի՛ր Հիսուսին և ստացի՛ր այն փրկությունը, որ Ինքն է առաջարկում: Այդ դեպքում Իր արդար կյանքը քեզ նվեր կլինի:

**Աղոթք** - Տեր Հիսուս, հավատում եմ Քեզ և գիտեմ, որ Քո կյանքը տվել ես ինձ համար: Ամեն:

**Մեմ էմ մեղ գործում, բայց Տերն է վճարում գինը՝ մեզ բարեփոխելու համար:**

Եթե դառնաք և պահեք իմ օրենքներն ու կատարեք դրանք, եթե դուք մինչև երկրի ծագերն էլ ցրված լինեք, ես այնտեղից էլ ձեզ կժողովեմ և կբերեմ այն տեղը, որ ընտրել եմ, և որի մեջ ապրում է իմ անունը: (Նեն.1.9)

## **ԱՍՏՕՈՒՆ ՓԱՓԱԳԵԼ**

**Ե**րբ Քոններ ու Սառա Սմիթները տեղափոխվեցին նոր բնակարան, դա նրանց կատվին դուր չեկավ, և նա փախավ: Մի օր էլ Սառան սոցիալական ցանցում իրենց հին ագարակի նկարը տեսավ, որտեղ էր նաև կատուն: Զույգը ուրախացած գնաց կատվին տուն բերելու, բայց նա կրկին փախավ: Իրենց տունը գնած մարդիկ խոստացան կենդանուն պահել: Փաստորեն Քոններն ու Սառան չկարողացան կատվին տեղափոխել, նա միշտ «տուն» էր վերադառնում:

Նէեմիան հեղինակավոր ծառայող էր Սուսա քաղաքի թագավորի պալատում, բայց նրա սիրտն ուրիշ տեղ էր: Նա լուր էր ստացել, որ իր հայրենի քաղաքն ավերվել է ու հրկիզվել (Նէեմ. 1.3) և աղոթեց. «Տե՛ր, հիշի՛ր քո խոսքը, որ պատվիրեցիր քո ծառա Մովսեսին և...» Եթե դառնաք և պահեք իմ օրենքներն ու կատարեք դրանք, եթե դուք մինչև երկրի ծագերն էլ ցրված լինեք, ես այնտեղից էլ ձեզ կժողովեմ և կբերեմ այն տեղը, որ ընտրել եմ, և որի մեջ ապրում է իմ անունը»: (Հմ. 8-9):

Ասում են՝ տունն այն տեղն է, որտեղ մարդու սիրտն է: Նէեմիայի պարագայում տուն գնալու ցանկությունը շատ ավելին է, քան հողին կապված լինելը: Դա հաղորդակցություն է Աստծո հետ: Երուսաղեմն «այն տեղն է, որ ընտրել եմ իմ անունը բնակեցնելու համար»:

Մեր դժգոհությունների խորքում իրականում Աստծուն ձգտելու ցանկությունն է: Մենք ուզում ենք Ի՛ր հետ մի տուն լինել:

**Աղոթք** - Հայր, օգնիր հասկանալ, որ միայն Դու կարող ես գոհացնել իմ ցանկությունները: Օգնիր, որ տանը լինելու զգացում ունենամ, որտեղ էլ լինեմ: Ամեն:

**Ուր էլ գնանք, որտեղ էլ գտնվենք, միշտ ցանկանալու ենք Աստծուն մոտ լինել:**



Թող ամեն մարդ շուտ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ, և ծանր՝ բարկանալու մեջ: (Հակ. 1.19)

## ԼՍԻՐ ԵՎ ՍՈՎՈՐԻՐ

**Փ**ողոցի մի կողմի բակերից մեկում տանտերը դրել է ԱՄՆ-ի պետական դրոշին փարված մի հսկա արծիվ, մի վազոն, որի պատուհանին նույնպես գծագրել է դրոշը և փակցրել հայրենասիրական բացիկներ: Փողոցի հակառակ կողմի բակում ցուցադրվում են միայն սոցիալական արդարության վերաբերյալ կարգախոսներ: Նայելով այդ տարբեր բակերին՝ ակամա հարցնում ես՝ այս տներում ապրողները գծով<sup>՞</sup> են իրար հետ, թե բարեկամներ են: Հնարավո՞ր է, որ այդ երկու ընտանիքն էլ հավատում են Հիսուսին: Աստված մեզ կոչ է անում ապրել Հակոբոս 1.19-ի պատգամի համաձայն.«Թող ամեն մարդ շուտ լինի լսելու մեջ, ծանր՝ խոսելու մեջ, և ծանր՝ բարկանալու մեջ»: Հաճախ մենք համառորեն պնդում ենք մեր ասածը՝ առանց նկատի առնելու ուրիշների կարծիքը: Մեթյու Հենրիի «Մեկնաբանություն» գրքում ասված է.«Մենք պետք է շուտ կարողանանք լսել ամեն կողմի ճշմարտության ու տրամաբանության ձայները:...Եվ երբ խոսենք, բարկություն չի լինի նրանց մեջ»:

Մեկն ասել է. «Սովորելու համար հարկավոր է ուշադիր լսել»: Հակոբոսի գրքում տրված Աստծո գործնական խորհուրդները հնարավոր կլինի կատարել, եթե մենք լցվենք Աստծո սիրո Հոգով և հարգենք ուրիշներին: Նա ուզում է օգնել մեզ, որպեսզի փոփոխություններ կատարվեն մեր սրտերում ու վարվելակերպում: Պատրաստ ենք լսելու և սովորելու:

**Աղոթք** - Սիրելի՛ Աստված, գիտես, որ ես կարող եմ երբեմն տարբեր կարծիքներ ունենալ: Օգնիր, որ կարողանամ շուտ լսել և դանդաղ խոսել: Ամեն:

**Այսօր խոսելուց առաջ դասրաս լինենք ուժադիր լինելու և լսելու:**

Ձեզանից ո՞ր մի հորից երբ որդին հաց ուզի, մի՞թե քար կտա նրան, կամ թե ձուկ. մի՞թե ձկան տեղ օձ կտա նրան: (Ղուկ. 11.11)

## **ՎՍՏԱՅ ԱՂՈԹՔ**

**Ռ**իչարդն ու Սյուզընը երեխա չէին ունենում և շատ ուրախացան, երբ վերջապես Սյուզընը հղիացավ: Հղիությունը վտանգավոր էր կնոջ առողջության համար, և Ռիչարդն ամեն գիշեր աղոթում էր: Մի օր նա մտածեց, որ այլևս աղոթքի կարիք չկա, որովհետև Աստված խոստացել էր անհրաժեշտ ամեն ինչ անել: Բայց մի շաբաթ անց Սյուզընը վիժեց, և Ռիչարդը մեղադրում էր իրեն՝ մտածելով, որ երեխան կորցնելու պատճառը բավարար չափով չաղոթելը եղավ:

Առակը մեկ անգամ կարդացողը կարող է այդպես մտածել, որովհետև պատմության մեջ նշված դրացին (ենթադրվում է, որ Աստծուն է ներկայացնում) անկողնուց ելնում է օգնելու իր բարեկամին՝ նրա նեղության պահին (Ղուկ. 11.5-8): Այդպես կարդալու դեպքում առակն ասում է, որ Աստված մեր կարիքները կհոգա այն ժամանակ, երբ Նրան նեղելու աստիճան թախանձենք: Եվ եթե բավարար չափով չխնդրենք, Աստված մեզ չի օգնի: Բայց Աստվածաշնչի մեկնաբանները, ինչպես օրինակ Քլայն Մնոզգրասսը, հավատում են, որ այս միտքը սխալ է մեկնաբանվում. իրականում առակը սովորեցնում է, որ եթե դրացին է անձնվիրաբար օգնել, ապա որքա՞ն ավելին կանի մեր անձնուրաց Հայրը: Հետևաբար, մենք վստահորեն խնդրում ենք (Հմ.9-10)՝ իմանալով, որ Աստված արատավոր մարդ էակներից շատ ավելի մեծ է (Հմ.11-13):

Եվ ես Ռիչարդին ասացի. «Չգիտեմ՝ ինչու կորցրիք ձեր երեխային, բայց գիտեմ, որ շատ չաղոթելու պատճառով չէ: Աստված այդպիսին չէ»:

**Աղոթք** - Հայր, այսօր Քեզ եմ հասցնում իմ և ուրիշների բոլոր աղոթքները՝ վստահ լինելով, որ կլսես ու կպատասխանես, որովհետև կարևորը Քո բարությունն է, և ոչ թե իմ խոսքերը: Ամեն:

**Կարևոր մեր խոսքերի ու աղոթքների չափը չէ: Աստված դասախանում է Իր բարի կամփի համաձայն, որ միշտ էլ վեր է մեր մտքից և մեր օգտի համար է:**

Առաքի՛ր, Տե՛ր, քո լույսն ու ճշմարտությունը, որ ինձ առաջնորդեն և հասցնեն քո սուրբ լեռն ու օթևանը: (Սաղմ. 42.3)

## **ՆԱՎԱՐԿԵԼ ԿՅԱՆՔԻ ՓՈԹՈՐԻԿՆԵՐՈՒՄ**

**1** 999թ. Հուլիսի 16-ին կրտսեր Ջոն Քենեդիի վարած օդանավը խորտակվեց Ատլանտյան օվկիանոսում: Քննիչները պարզեցին, որ վթարի պատճառը տարածուխի մեջ չկողմնորոշվելն է եղել: Դա պատահում է հիմնականում վատ տեսանելիության պատճառով, երբ օդաչուները չեն կողմնորոշվում ու ճիշտ չեն կիրառում գործիքները:

Մեր կյանքի նավարկության ժամանակ էլ լինում են պահեր, երբ դժվար ենք կողմնորոշվում, խուճապի ենք մատնվում: Դա կարող է լինել վտանգավոր հիվանդությունը, սիրելիի մահը, աշխատանքի կորուստը, բարեկամի դավաճանությունը և այլն: Նման իրավիճակներում հայտնվելիս փորձենք նայել 42-րդ սաղմոսը: Կտեսնենք, որ սաղմոսերգուն ևս մտահոգ է, որովհետև չարությունն ու անարդարությունն են իրեն պաշարել: Այդ հուսահատ վիճակում նա խնդրում է Աստծո վստահելի առաջնորդությունը, որպեսզի կարողանա նավարկել ու հասնել իր նպատակակետին, որն է Աստծո ներկայությունը (Հմ.3-4): Սաղմոսերգուն վստահ է, որ Աստծո ներկայությամբ ինքը պիտի գտնի բարեփոխված հույս և ուրախություն:

Երբ ապակողմնորոշված ու հուսաբեկ լինես, Աստծո ներկայությունն ու հավատարիմ առաջնորդությունը՝ Իր Հոգու միջոցով կկարողանան հանգստացնել ու լուսավորել քո ճանապարհը:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ ինձ մենակ չես թողել կյանքի անորոշության ու մարտահրավերների հանդիման: Օգնի՛ր ինձ, որ կարողանամ Քեզ վստահել իմ քայլերի առաջնորդությունը: Ամեն:

**Անորոշություններ ու աղակողմորոշումներ մի՛ս էլ կարող եմ ունենալ: Բոլոր դարազաներում փորձեմ վստահել Ասծում:**

Ճշմարտապես հասկանում եմ, որ Աստված աչառու չէ: (Գործք. 10.34)

## **ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄ ԵՎ ՆԵՐՈՒՄ**

**Ա**նարդարությունը շտկելու մասին պատգամը լսելով՝ եկեղեցու անդամներից մեկը լացակուժած մոտեցավ սեւամորթ Հովվին ու խոստովանեց, որ ինքը չի քվեարկել նրա օգտին: «Ների՛ր ինձ: Չեմ ուզում, որ իմ ազգայնական նախապաշարունակները թափանցեն զավակներիս կյանքի մեջ: Չեմ քվեարկել քո օգտին, ու ես սխալ էի»: Նրա արցունքներն ու խոստովանությունը հանդիպեցին Հովվի ներողամտությանը: Մեկ շաբաթ անց ամբողջ եկեղեցին ուրախացավ լսելով այդ մարդու վկայությունը, թե ինչպես Աստված գործեց իր սրտում:

Նույնիսկ Պետրոսը՝ Հիսուսի աշակերտն ու առաջին եկեղեցու առաջնորդներից մեկը, կարիք ունեցավ ուղղվելու, փոխելու ոչ հրեաների մասին իր վատ կարծիքը: Հեթանոսների հետ, որոնք անմաքուր էին դիտվում, ուտելն ու խմելը կրոնական սովորությունների ու ընդունված կարգի խախտում էր: Պետրոսն ասաց. «Դուք գիտե՞ք՝ հրեա մարդու համար ի՛նչ անօրեն բան է մի այլազգու դիպչելը կամ մոտենալը» (Գործք 10.28): Բայց բավական էր Աստծո գերբնական միջամտությունը, որպեսզի նա այլևս «ոչ մի մարդու պիղծ կամ անմաքուր չհամարեր» (Հմ.28):

Իր խոսքի քարոզով, Հոգու համոզմամբ ու կյանքի փորձով Աստված շարունակում է գործել մարդկային սրտում՝ շտկելու մեր սխալ կարծիքը ուրիշների մասին: Նա մեզ օգնում է տեսնել, որ «Աստված աչառու չէ» (Հմ.34):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, քննի՛ր սիրտս և ցույց տուր, թե որտեղ ունեմ փոփոխության կարիք: Ամեն:

**Աչառություն չանեն՛ ու դասրաս լինեն՛ ընդունել  
բոլորին անխփր:**

Կդառնան և կնստեն նրա հարկի տակ, կապրեն և ապահով կլինեն ցորե-  
նով, նա կբողբոջի ինչպես որթատունկ: (Օւտտ 14.8)

## **ԱՍՏԾՈ ՎԵՐԱՓՈԽՈՂ ՁԵՎԵՐԸ**

«Մեծագուշն շոուսննը» երաժշտական ֆիլմի ամենահուզիչ երգը «Այսուհետև»-ն է: Այն հնչում է, երբ գլխավոր հերոսը զղջում է իր ընտանիքին ու բարեկամներին վիրավորելու համար, ուրախությամբ հայտարարում է տուն վերադառնալու մասին և գտնում, որ պետք է բավարարվել ունեցածով: Օսէէի գրքում ևս նման հնչերանգով ներկայացվում է ուրախության ու երախտագիտության այն զգացումը, երբ պատմվում է Աստծո վերափոխիչ հնարավորության մասին նրանց համար, ովքեր դառնում են դեպի Ինքը: Գրքի մեծ մասը, որտեղ Աստծո և Իր ժողովրդի հարաբերությունը համեմատվում է անհավատարիմ կողակցի հարաբերության հետ, ողբ է Աստծոն սիրելու և Նրա համար ապրելու գործում Իսրայելի ձախողման մասին: Սակայն 14-րդ գլխում Օսէէն բարձրացնում է Աստծո անսահման սիրո, շնորհքի ու վերափոխելու խոստումը, որ ձրիաբար տրվում է նրանց, ովքեր կոտրված սրտով Իրենից հեռանալուց հետո նորից դառնում են դեպի Ինքը(Հմ.1-3): Աստված խոստանում է .«Կվերականգնեմ նրանց բնակարանները և ամբողջ սրտով կսիրեմ նրանց, որովհետև անցավ նրանց դեմ ունեցած իմ բարկությունը (Հմ.4): Եվ ինչը որ այլևս թվում էր անդառնալիորեն փշրված, դարձյալ պիտի ամբողջանա, դառնա առատության աղբյուր Աստծո շնորհի նման, որ ցողի պես երկնքից իջնելով՝ պատճառ կդառնա, որ Իր ժողովուրդը «ձաղկի ինչպես շուշան և իր արմատները տարածի ինչպես լիբանոսը» (Հմ.5-7): Երբ նման պարագաների մեջ հայտնվենք ու մեզ թվա, թե հավիտյան զրկված ենք մեզ տրված բարի պարգևներից, խոնարհվելով դառնանք դեպի Ինքը և կոեսնենք, որ Իր սերը կհասնի մեզ՝ ողջագուրելու և վերափոխելու համար:

**Աղոթք** -Սիրող Հայր, սովորեցրու՛, որ կարողանամ Քո բարությանը վստահել ոչ միայն այն ժամանակ, երբ լավ եմ, այլև միշտ: Ամեն:

**Անհնար կարող է թվալ վերափոխվելը, սակայն Աստված վստահեցնում ու խոստանում է, որ դա հնարավոր է:**

Դանձիւը... օրական երեք անգամ բան է խնդրում իր Աստծուց: (Դան. 6.13)

## **ՀԱՍՏԱՏ ՄԵՐԺՈՒՄ**

**Ե**րկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիստները Փրանց Եգերշտատերին կանչեցին զերմանական բանակ ծառայութեան: Բայց նա ծանոթ էր նացիստների գաղափարախոսութեանը, գիտեր նրանց իրագործած հրեաների ցեղասպանութեան մասին և հավատում էր Աստծուն: Իսկ դա նշանակում էր, որ ինքը երբեք չի կարող կռվել նացիստների համար: Եվ նա, հավատարիմ մնալով Աստծուն, մերժեց հպատակվել Հիտլերին: Այդ պատճառով նրան մահվան դատապարտեցին, որբացնելով կնոջն ու երեք դուստրերին:

Դանիելի պատմութիւնը ևս այդպիսին է: Իշխանական հրամանագրով սահմանված էր, որ «յուրաքանչյուր մարդ, որ մինչև երեսուն օր բան խնդրի որևէ աստծուց կամ մարդուց, բացի արքայից, կնետվի առյուծների գուրը»(Դան. 6.12): Դանիելը անտեսեց հրամանագիրն ու իր ապահովութիւնը և հավատարիմ մնաց Աստծուն: «Օրական երեք անգամ նա ծնրադրում էր և աղոթում, գոհութիւն էր հայտնում իր Աստծուն, ինչպես առաջ էր անում» (Հմ.10):

Երբեմն մեր շրջապատի մարդիկ խնդրում կամ հորդորում են գնալ տիրող կարծիքին համընթաց: Չհրաժարվենք Աստծուն հնազանդվելուց, եթե նույնիսկ դրանով վտանգված լինի մեր անձնական հեղինակութիւնն ու բարեկեցութիւնը: Երբեմն նույնիսկ շատ բարձր գնով կարող ենք հաստատապես մերժել այդպիսի առաջարկները:

**Աղոթք** - Հայր, գիտեմ, որ հավատարիմ մնալով Քեզ՝ պիտի չարդարացնեմ մարդկանց սպասելիքները կամ մերժեմ պահանջները, որոնք թանկ կարծեցան ինձ համար: Ուստի ինձ քաջութիւն տու՛ր: Ամեն:

**Ասծուն տղասարկելու համար մի արտ բաներից միսի հրաժարվեմ: Բայց արժի՛:**

Ո՞րն է այն երկիրը, ուր լույսն է օթևանում, կամ ո՞րն է տեղը խավարի: Որտեղի՞ց է դուրս գալու եղյամը, կամ տարածվելու է հարավային հողմը երկնքի ներքո: (Ռոմ. 38. 19, 24)

## ԱՍՏԾՈ ՑՈՒՑԱԴՐԱԾ ՈՒԺԸ

**Դ**րսում կայծակն էր փայլատակում ու փոթորիկը՝ մոլեգնում, և ես ու վեցամյա դուստրս, գետնին նստած, ապակյա դռնից հետևում էինք: Դուստրս անընդհատ կրկնում էր. «Օ՛հ, Աստված ի՛նչ մեծ է»: Ես էլ նույնը զգացի: Երկուսս էլ հասկանում էինք, թե մենք որքան փոքր ենք հզոր Աստծո համեմատ: Մտքիս եկան Հոբի գրքի տողերը. «Ո՞րն է այն երկիրը, ուր լույսն է օթևանում, կամ ո՞րն է տեղը խավարի: Որտեղի՞ց է դուրս գալու եղյամը, կամ տարածվելու է հարավային հողմը երկնքի ներքո» (Հոբ. 38.19, 24):

Հոբին պետք էր հիշեցնել Աստծո զորույթյան մասին (Հմ.34-41), որովհետև նրա կյանքը խորտակված էր. զավակները մահացել էին, ինքը կոտորված էր ու հիվանդ: Բարեկամները չկարեկցեցին նրան, կինը առաջարկեց հավատն ուրանալ (Հմ.2.9): Ի վերջո Հոբը Աստծուն հարցրեց՝ ինչու՞ (գլ.24), և Նա պատասխանեց փոթորիկի միջից (գլ.38): Աստված հիշեցրեց, որ Ինքը իշխում է աշխարհի Ֆիզիկական ամբողջ կառույցի վրա (գլ.38): Դա մխիթարեց Հոբին, և նա պատասխանեց. «Սրանից առաջ ես ականջներովս էի լուկ լսել, բայց հիմա աչքերս էլ տեսան հենց քեզ» (42.5): Այլ խոսքով՝ «Հիմա հասկանում եմ, ո՞վ Աստված, և տեսնում, որ չես տեղավորվում իմ տուփի մեջ»:

Երբ կյանքը փլվում է, միակ մխիթարական բանը, որ կարող ենք անել, նստել գետնին ու դիտել փայլատակումները՝ հիշելու համար, որ երկիրը ստեղծող Աստվածը բավարար չափով մեծ է և սիրում ու հոգում է մեր մասին: Նույնիսկ կարող ենք երգել Աստծո մեծույթյան և ուժի մասին երգեր:

**Աղոթք** - Հայր, օգնիր տեսնել, որ Դու մեծ ես ու հզոր: Եթե ստեղծել ու վերահսկում ես ողջ բնությունը, ուրեմն կարող ես օգնել ինձ հաղթահարել դժվարությունները: Ամեն:

**Ինչ վիճակում էլ լինե՞նք, հիշե՞նք, որ Աստված մեծ է և հզոր:**

Ուրախացե՛ք ու ցնձացե՛ք, որ ձեր վարձը շատ է երկնքում: (Մատթ. 5.12)

## **ՅԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ**

**Տ**արիներ առաջ, երբ աշխատանքի ընդունվելու համար դիմեցի քրիստոնեական մի կազմակերպություն, ինձ ներկայացվեց ալկոհոլի, ծխախոտի և այլ զվարճանքների մի ցանկ, որոնք արգելված էին քրիստոնեական վարմունքով աշխատողների համար: Ես լիովին համաձայն էի այդ ցանկին, քանի որ առանց այդ էլ չէի գործածում, բայց այլ վիճելի հարցեր ունեի: Ինչու՞ չկա այնպիսի մի ցուցակ, որում որպես արգելված հատկանիշներ նշված լինեն ամբարտապանությունը, անզգաս, կոպիտ վերաբերմունքն ու հոգևոր անտարբերությունը:

Տեր Հիսուսին հետևելը չի կարող սահմանափակվել կանոնների մի ցուցակով: Կյանքի նուրբ որակը դժվար է թվերի վերածել, բայց բնութագրվում է որպես «գեղեցիկ»:

Մատթեոս 5. 3-10-ում նշված Երանելիներն ամփոփում են այդ արժանիքները, որոնք Հիսուսի Հոգով են բնակված ու կախված են Նրանից, ունեն խոնարհ ու ինքնուրույն ազդեցություն: Նրանք իսկապես ապրում են այլոց տառապանքներով, ազնիվ են, բարի: Ուզում են բարություն տեսնել իրենց և ուրիշների մեջ: Ողորմություն են ցույց տալիս անհաջողության մատնվածներին: Սիրում են Տեր Հիսուսին: Խաղաղասեր են և իրենցից հետո խաղաղություն են թողնում: Բարիք են գործում նույնիսկ իրենց չարաչափողներին: Նրանք օրհնյալ են ու երանելի, և նրանց սպասում են ուրախությունն ու ցնձությունը:

**Աղոթք** - Աստծո Հոգի, խնդրում եմ այս երանելի հատկանիշները թող երևան իմ կյանքում: Ամեն:

**Թող այս երանելի հատկանիշներն ավելանան ու հստակ երևան մեր մեջ, և Տերը փառավորվի:**



Եթե կկանգնենք քո առջև...ու քեզ կկանչենք նեղության մեջ լինելու դեպքում, դու կլսես ու կփրկես մեզ: (Բ.Մնաց. 20.9)

## **ԱՍԾՈ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԴԻՆԸ**

**1** Զրդ դարավերջին հինգ տարի շարունակ մորեխները գրոհում էին Մինեսոտայի դաշտերի վրա՝ փչացնելով ամբողջ բերքը: Հողագործներն ամեն ջանք գործադրում էին դրանցից ազատվելու համար, նույնիսկ արտերն էին այրում, որպեսզի մորեխների թրթուրները ոչնչանան: Սակայն՝ իզուր: Հուսահատված ու սովի մատնվելու սպառնալիքի ներքո՝ մարդիկ որոշեցին միասին խնդրել Աստծո օգնությունը: Նահանգի կառավարչի որոշմամբ՝ ապրիլի 26-ը հայտարարվեց համընդհանուր աղոթքի օր:

Մի քանի օր եղանակը դեռ շարունակում էր տաքանալ, և մորեխների թրթուրները կենդանանում էին: Բայց չորս օր անց ջերմաստիճանն սկսեց իջնել, իսկ դա նշանակում էր, որ ցորենի, կորեկի ու վարսակի բերքը փրկված էր:

Հոսափատ թագավորի օրոք ևս համընդհանուր աղոթքը փրկեց ժողովրդին: Երբ թագավորն իմացավ, որ մեծ ու հզոր բանակ է մոտենում իր երկրին, Աստծո ժողովրդին կոչ արեց աղոթել ու ծոմ պահել: Եվ նրանք դիմեցին Աստծուն.«Եթե մեզ վրա դան չարիք, սուր, դատաստան, մահ ու սով, քեզ կկանչենք, և դու կլսես ու կփրկես մեզ» (Բ.Մնաց. 20.9):

Աստված Իր ժողովրդին ազատեց զավթիչ բանակներից և մեզ էլ կլսի, եթե նեղության մեջ դիմենք Իրեն: Ինչ էլ լինի քեզ մտահոգող թեման, այն աղոթքով հասցրու՝ Աստծուն: Նրա համար անհնար բան չկա:

**Աղոթք** - Արարիչ Աստված, Դու ստեղծեցիր աշխարհը և նրա մեջ եղած բոլոր բաները: Խնդրում եմ վերականգնի՛ր կարգուկանոնը և փրկի՛ր Քո ժողովրդին: Ամեն:

**Կյանքում մեր դիմագրաված բոլոր դժվարությունների ու աղետների ժամանակ դիմենք Տիրոջը, և Նա կփրկի մեզ:**

Մենք ամենքս էլ մեկ Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին լինելու համար: (Ա. Կորնթ. 12.13)

## **ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՄԵՐԳԸ**

**Բ**ի Բի Մի երաժշտական հանդեսը աշխարհի 151 առաջատար նվագախմբերի ղեկավարներին առաջարկեց նշել իրենց կարծիքով լավագույն քսան սիմֆոնիաները: Ցուցակի առաջին հորիզոնականում Բեթհովենի երրորդ սիմֆոնիան էր՝ Հերոսականը: Ստեղծագործությունը գրվել է Ֆրանսիական հեղափոխությունից ժամանակ, բայց այն նաև կոմպոզիտորի անձնական տագնապներից է ծնվել. նա աստիճանաբար կորցնում էր լսողությունը: Երաժշտությունը մարդկային ամենատարբեր զգացումներ կարող է արթնացնել, ցույց տալ մարդու էությունն ու նրա դիմադրաված մարտահրավերները: Ուրախությունն ու տխրությունն վայրիվերումներով ու բեթհովենյան սիմֆոնիայի վերջնական հաղթանակով այդ հրաշալի գործը մարդկային հոգու գովերգումն է:

Պողոսի՝ կորնթացիներին գրած առաջին նամակը ևս հիշարժան է նույն նկատառումներով: Երաժշտական հնչյունների փոխարեն այստեղ էլ բառերն են մերթ բարձրանում օրհնություններով (1.4-9), մերթ՝ իջնում հոգեմաշ ու տխուր բախումներով (11. 17-22) և նորից բարձրանում՝ միավորելով տաղանդավոր մարդկանց, որոնք միասին են գործում՝ հանուն Աստծո փառքի (12.6-7): Տարբերությունն այն է, որ այստեղ, որպես հարգանքի տուրք Աստծուն գովերգվում է մարդկային հոգին: Պողոսն օգնում է, որ ինքներս մեզ մեր Հոր կողմից հրավիրված զգանք իր Որդով առաջնորդված ու իր Հոգով ներշնչված մեր մասնակցությունը մեծագույն համերգին:

**Աղոթք** - Հայր, երբ հայացքս կենտրոնացնում եմ Քո Որդու վրա և ապավինում եմ Հոգուդ, գիտակցում եմ, որ շատ բաներ կարող ես անել ինձանով: Օգնի՛ր տեսնել. թե ինչ կարող եմ անել ուրիշների հետ: Ամեն:

**Կյանքի սարքեր բախումների մեջ իր սիրով կարելի է ներդառնակ համերգ ունենալ:**

Եվ այս անապատում, ինչպես որ տեսաք: Որովհետև քո Տեր Աստվածը խնամեց քեզ այնպես, ինչպես ծնողն է խնամում իր որդուն: Այդ արեց ձեր ամբողջ երթի ընթացքում, մինչև որ եկաք հասաք այս վայրը: (Բ. Օր. 1.31)

## **ԱՍՏՎԱԾ ԽՆԱՍՈՒՄ Է ՄԵՁ**

**2** 019 թ. Դորիան փոթորիկը ուժեղ անձրևներով, քամով ու ջրհեղեղներով պատուհասեց Բահամյան կղզիները: Դա երկրի պատմության մեջ պատահած ամենամեծ բնական աղետն էր: Բրենտը որոշ ժամանակ փոքր որդու հետ մնաց իր տանը, բայց հետո համոզվեց, որ հարկավոր է հեռանալ: Թեև նա կույր էր, բայց շալակեց որդուն ու մտավ ջուրը: Եթե երկրավոր հայրն է հանուն իր որդու զոհողությունների դիմում, ապա կարելի է պատկերացնել, թե որքա՛ն ավելի մեր երկնավոր Հայրը կմտահոգվի իր զավակների համար: Հին կտակարանում Մովսեսը հիշում է, թե ինչպես էր Աստված հոգ տանում Իր ժողովրդի մասին նույնիսկ այն ժամանակ, երբ նրանց հավատը թուլացել էր: Նա խրաչելցիներին հիշեցրեց, թե ինչպես Աստված փրկեց իրենց՝ անապատում ուտելիք ու ջուր տալով, թշնամիների դեմ կռվելով և ամպի ու կրակի սյուններով: Խորհրդածելով աստծո կատարած այդ բազմաթիվ գործերի մասին՝ Մովսեսն ասաց. «Եվ այս անապատում, ինչպես որ տեսաք, քո Տեր Աստվածը խնամեց քեզ այնպես, ինչպես ծնողն է խնամում իր որդուն: Այդ արեց ձեր ամբողջ երթի ընթացքում, մինչև որ եկաք հասաք այս վայրը» (Բ. Օր.1.31): Իսրայելի ժողովրդի ճամփորդությունն անապատում դժվարին էր, և երբեմն նրանց հավատքը թուլանում էր: Բայց նաև ապացույցներն են շատ, որ նրանք վայելում էին Աստծո պաշտպանությունն ու հովանավորությունը: Դա որդուն քնքշորեն ու արիաբար խնամող ու պահպանող հոր իսկական պատկեր է: Դժվարություններ հաղթահարելը հավատի յուրատեսակ քննությունն է: Այդպիսի պահերին մենք նույնպես կարող ենք հիշել, որ Աստված այստեղ է և հոգ կտանի մեր մասին:

**Աղոթք** - Սիրո՛ր Հայր, օգնի՛ր հիշել, որ Դու ինձ կխնամես, նույնիսկ երբ ես չեմ զգա: Շնորհակալ եմ Քո զորության ու կարեկցության համար: Ամեն:

**Դժվարություններն ու նեղություններն անդակաս են մեր կյանքում, սակայն Աստված միշտ մեզ հետ է և կխնամի մեզ Իր կարեկցությամբ ու մեծ սիրով:**

Նայի՛ր երկնքի՛ն ու հաշվի՛ր աստղերը: (ԹՃՆ. 15.5)

### **ԱՂՈԹՔ, ՀՈՂ ՈՒ ԱՍՏՂԵՐ**

**Լ**արան ու Դեյվը շատ էին ուզում երեխա ունենալ, սակայն բժիշկներն ասել էին, որ չեն կարող: Լարան սկսեց իր բառերով ասած՝ «անկեղծ գրույցներ ունենալ Աստծու հետ»: Մի օր էլ, երբ զույգը հանդիպեց իրենց հոգևոր հովվի հետ, վերջինն ասաց, որ իրենց եկեղեցին ունի որդեգրության առաքելություն: Եվ մեկ տարի անց նրանք, օգտվելով այդ ծառայությունից, ունեցան որդի:

Ծննդոց 15-ում պատմվում է մեկ ուրիշ անկեղծ խոսակցության մասին Աբրամի ու Աստծո միջև: Աստված Աբրամին ասել էր. «Մի՛ վախեցիր, Աբրա՛մ, ես քեզ հովանավոր պիտի լինեմ, և քո վարձը չափազանց շատ պիտի լինի»(Հմ.1): Սակայն Աբրամը անվստահություն էր պատասխանել էր.«Տե՛ր ամենակալ, ի՞նչ ես անելու ինձ, չէ՞ որ ես անորդի եմ կորչում»(Հմ.2):

Նախապես Աստված Աբրամին խոստացել էր. «Քո հետնորդներին պիտի բազմացնեմ երկրի ավազի չափ»(Հմ.13.16): Եվ Աբրամը Աստծուն հիշեցրեց այդ խոստման մասին: Հետաքրքիր է Աստծո պատասխանը. «Նայի՛ր երկնքին ու հաշվի՛ր աստղերը, եթե կարող ես հաշվել դրանք» (15.5)՝ նկատի ունենալով, որ նրա հետնորդներն անհաշիվ են լինելու:

Որքա՛ն բարի ու հիանալի է Աստված ոչ միայն այդպիսի աղոթք արտոնելու, այլև քաղցրությունը Աբրամին հանգստացնելու համար: Հետո Աստված նրա անունը պիտի դարձներ Աբրահամ, որ նշանակում էր «բազում ազգերի նախահայր»: Աբրահամի նման մենք էլ կարող ենք Աստծո առաջ անկեղծորեն բանալ մեր սիրտը և վստահել իրեն, որ մեզ և ուրիշների համար լավագույնն անի:

**Աղոթք** - Սիրո՛ղ երկնավոր Հայր, շնորհակալ եմ նույնիսկ կյանքիս մանրամասների հանդեպ Քո հոգածության համար: Օգնի՛ր, որ կարողանամ մնալ Քեզ մոտ ու աղոթել: Ամեն:

**Ասված մեզ լավ գիտի, ուստի արժի մեր սիրքը բանալ Նրա առաջ ու խոսել ամեն բանի մասին:**

Ձեզ նոր պատվիրան եմ տալիս, որ իրար սիրեք. ինչպես որ ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: (Հովհ.13.34)

## **ԾԱՂԿԵԼ ՀԻՍՈՒՄԻ ՀԱՄԱՐ**

**Կ**րտսեր դուստրս Ամստերդամից Միացյալ Նահանգներ վերադառնալիս ինձ մի փունջ կակաչ էր բերել: Ես ուրախությամբ ընդունեցի նվերը, թեև կակաչը իմ սիրած ծաղիկը չէ: Այն վաղ ծաղկում ու շուտ էլ թառամում է: Հուլիսյան կլիման շատ տաք էր դրանք ցանելու համար:

Սեպտեմբերի վերջին վերջապես «աղջկաս ծաղիկները» ցանեցի՝ իր մասին մտածելով: Սոխուկները մեծ սիրով դրեցի հողի մեջ և ձեռքս դնելով դրանց վրա՝ ասացի. «Լա՛վ քնեք»: Ես հույս ունեի, որ հաջորդ գարնանը կակաչները պիտի ծաղկեին:

Իմ այս փոքրիկ ծրագիրը մի պարզ հիշեցում էր Աստծո արած կոչի մասին, որ հարկավոր է սիրել միմյանց, եթե նույնիսկ իրար «նախասիրածը» չեք: Մեր շրջապատում տեսնելով մոլախոտեր՝ նույնիսկ խառնակ ժամանակներում Աստծո տված շնորհքով կարող ենք սեր ցուցաբերել նրանց հանդեպ: Ժամանակի ընթացքում, հակառակ մեր դիրքորոշումներին, այդ սերը կգառնա փոխադարձ ու կաճի: Հիսուսն ասել է. «Դրանով բոլորը կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե իրար նկատմամբ սեր ունենաք» (Հովհ. 13.35): Իր ձեռքով հատվելով՝ մենք կօրհնվենք ու կծաղկենք, ինչպես իմ ծաղիկների հետ եղավ հաջորդ գարնան այդ նույն օրերին, երբ աղջիկս կրկին եկավ մեզ այցելություն: Ես նրան ցույց տվեցի ծաղիկներն ու ասացի.«Նայի՛ր՝ ինչպես է ծաղկել»: Իրականում ծաղկողը ես էի:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, բաժանի՛ր սիրտս, որպեսզի կարողանամ ուրիշներին սիրել, ինչպես Դու ես պատվիրում: Ամեն:

**Քրիստոսի սիրով կարելի է սիրել նույնիսկ նրան, ով մեր նախասիրած մարդկանցից չէ:**

Ուրախ սիրտը առողջարար է: (Առ. 17.22)

## **ԱՍՏԾՈ ՊԱՐԵՎԱԾ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆԸ**

**Մ**արցիան դրսուում միշտ փորձում է ժպտալ ուրիշներին: Դա մարդկանց հետ հարաբերվելու նրա ձևն է: Ընդհանրապես մարդիկ ժպիտով էլ արձագանքում են: Բայց երբ նա ստիպված էր դիմակ դնել, մտածեց, որ փաստորեն մարդիկ իր ժպիտը չէին տեսնելու: Դա, իհարկե, լավ չէր, սակայն նա որոշեց շարունակել ժպտալը՝ մտածելով, որ մարդիկ իր ժպիտը աչքերում կտեսնեն:

Իրականում այս երևույթը նույնիսկ գիտություն մեջ կա: Բերանի ծայրերն ու աչքերը երիզող մկանները գործում են միասին՝ ձևավորելով դյուշենյան ժպիտ, կամ այլ կերպ ասած՝ աչքերով ժպիտ:

Առակների գիրքը հիշեցնում է, որ «Բարին տեսնող աչքը ուրախացնում է սիրտը» (15.31) և «Ուրախ սիրտը առողջարար է» (17.22): Շատ հաճախ Աստծո զավակների ժպիտները երևում են մեր գերմարդկային ուրախություն միջից: Աստծո պարգևն է լցվում մեր կյանքի մեջ, երբ մենք քաջալերում ենք ծանր բեռ կրող մարդկանց ու խոսում նրանց հետ, ովքեր փնտրում են իրենց հուզող հարցերի պատասխանները: Եթե նույնիսկ ցավեր էլ ունենանք, մեր ուրախությունն էլի կարող է երևալ:

Երբ կյանքը մութ կթվա, ընտրի՛ր ուրախությունը: Թող քո ժպիտը հույսի պատուհան լինի, որը կարտացոլի Աստծո սերն ու իր ներկայություն լույսը քո կյանքում:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, Քո պարգևած ուրախությունը իմ գորությունն է: Օգնի՛ր, որ կարողանամ Քո սիրո պատգամը հասցնել ուրիշներին: Ամեն:

**Ներքին ուրախությունը նդասում է մեր մտքի, մարմնի ու հոգու առողջությանը:**

Հզոր է սերը մահվան պես: (Երգ երգոց 8.6)

## ԱՍԾՈՆ ՍԵՐՆ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ Է

**2**020-ին Ալիսա Մենդոզան մի զարմանալի նամակ ստացավ իր հորից: Նա պատվիրում էր, թե ինքը ինչ էր անելու ծնողների ամուսնուլթյան քսանհինգամյակի առիթով: Հուզիչն այն էր, որ Ալիսայի հայրը տասը ամիս առաջ մահացել էր: Փաստորեն նա հիվանդ ժամանակ էր նամակը գրել ու ծրարել, որ մահից հետո ուղարկվի: Նա նաև կարգադրել ու վճարել էր, որ կնոջ տարեգարձի և այլ հատուկ առիթներով նրան հաջորդ տարիներին նույնպես ծաղիկներ ուղարկվեն:

Այս պատմությունը կարող է լավ օրինակ լինել այն սիրո, որը մանրամասնորեն նկարագրված է «Երգ երգոց»-ում. «Հզոր է սերը մահվան պես, խանդը դաժան է դժոխքի նման» (8.6): Սիրո համեմատությունը մահվան հետ կարող է անտեղի թվալ, բայց դրանք շատ ուժեղ պատկերներ են: Գիրքն իր զագաթնակետին է հասնում 6-7 համարներում, որտեղ նկարագրում է ամուսնական սերը՝ որպես այնքան զորավոր, որ «առատ ջրերը չեն կարող մարել» (Հմ.7):

Աստվածաշնչում ամուսնու սերը իր կնոջ հանդեպ համեմատված է Աստծո սիրո հետ( Ես.54. 5, Եբ.5. 25, Հայտ.21.2): Հիսուսը փեսան է, եկեղեցին՝ Իր հարսը: Աստված Իր սերը մեր հանդեպ ցույց տվեց՝ Քրիստոսին ուղարկելով մահվան, որպեսզի մենք մեր մեղքերի համար կարիք չունենանք մեռնելու (Հովհ.3.16): Կարևոր չէ՝ ամուսնացած ենք, թե ոչ, կարող ենք հիշել, որ Աստծո սերն ավելի զորավոր է, քան որևէ այլ բան:

**Աղոթք** - Սիրելի՛ Հիսուս, շնորհակալ եմ, որ ինձ շատ ես սիրում: Հիշեցրու՛ ինձ ամեն օր Քո սիրո մասին և որևէ նշույլ ցույց տուր: Ամեն:

**Ի՞նչն է հիշեցնում, որ Աստված սիրում է քեզ:**

Նա է մեր խաղաղությունը, որ երկուսին մեկ արեց ու մեջտեղի բաժանող պատը՝ թշնամությունը, վերացրեց իր մարմնով: (Եփ. 2.14)

### **ՀԻՍՈՒՍԸ ՄԵՐ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ Է**

**Տ**ելեմաքոս անունով վանականի կյանքն անցել էր լուռ ու աննկատ, սակայն նրա մահը, որ պատահեց 4-րդ դարի վերջին, փոխեց աշխարհը: Արևելքից գալով Հռոմ և տեսնելով սուսերամարտիկների արյունալի մարտերը, նա մտավ մրցասպարեզ, որպեսզի կանխի խաղի մասնակիցների սպանությունը: Բայց վրդովված ամբոխը քարկոծեց ու սպանեց վանականին: Հոնորիոս կայսրը, տպավորված Տելեմաքոսի արարքից, հրաման արձակեց վերջ դնել 500-ամյա այդ խաղին:

Երբ Պողոսը Հիսուսին անվանում է «մեր խաղաղությունը», ակնարկում է հրեաների ու հեթանոսների միջև եղած թշնամության ավարտը (Եփ. 2.14): Իսրայելը՝ Աստծո ընտրյալ ժողովուրդը, ուներ բազմաթիվ արտոնություններ: Օրինակ, թեև հեթանոսներին թույլատրված էր պաշտամունքներ կատարել Երուսաղեմի տաճարում, բայց բաժանող պատը նրանց թողնում էր գավթում: Հրեաները հեթանոսներին պիղծ էին համարում, և նրանց միջև թշնամություն կար: Սակայն Հիսուսի մահվամբ ու հարություն հրեաներն ու հեթանոսները կարող էին ազատորեն պաշտել Աստծոն և հավատալ Իրեն (Հմ.18-22): Այլևս չկա իրենց բաժանող պատը: Չկան արտոնություններ: Աստծո առաջ կանգնելու համար երկուսն էլ հավասար են:

Այնպես, ինչպես Տելեմաքոսն իր մահվամբ խաղաղություն բերեց սուսերամարտիկներին, այնպես էլ Հիսուսը խաղաղություն ու հաշտություն է բերում բոլոր նրանց, ովքեր հավատում են Նրա մահվանն ու հարությանը: Նա իր արյամբ միավորել է մեզ:

**Աղոթք** - Խաղաղության Աստված, Դու մեզ միավորել ես Հիսուսով: Օգնիր, իմանալ այս ճշմարտությունն ու ապրել դրանով: Ամեն:

**Մեզ իրարից բաժանող բազմաթիվ երևույթներ կան ու կարող են լինել, բայց Հիսուսի օգնությամբ կարելի է խաղաղ աղբյուր միմյանց և Աստծո հետ:**



Սավուղը հազար, իսկ Դավիթը բազմահազար մարդկանց սպանեց: (Ա. Թագ. 18.7)

## **ՀԱՂԹԱՅԱՐԵԼ ՆԱԽԱՆՁ**

«Ամադեոս» ֆիլմում ծերացող երգահան Անտոնիո Սալյերին իրեն այցելած քահանայի համար նվագում է իր հորինած երաժշտությունից մի հատված: Քահանան խոստովանում է, որ մեղեդին իրեն անծանոթ է: Այնուհետև Սալյերին հայտնի մի մեղեդի է նվագում և հարցնում.«Իսկ ի՞նչ կասես սրա մասին»:  
-Օ՛հ, չգիտեի, որ սրա հեղինակը դու ես,- ասում է քահանան:  
-Ո՛չ, այս երաժշտությունը Մոցարտն է գրել,- ճշտում է Սալյերին:

Ֆիլմն այն մասին է, որ Մոցարտի հաջողությունը հարուցել է Սալյերիի նախանձը՝ նրան նույնիսկ մղելով մաս ունենալ կոմպոզիտորի մահվան մեջ: Նախանձի մեկ այլ պատմություն էլ Աստվածաշնչում կա: Գողիաթի հանդեպ Դավիթի հաղթանակներից հետո Իսրայելի ժողովուրդը մեծ հրճվանքով երգեց. «Սավուղը հազար, իսկ Դավիթը բազմահազար մարդկանց սպանեց» (Ա. Թագ. 18.7): Այս համեմատությունը տհաճ էր Սավուղ թագավորի համար: Նախանձելով Դավիթին և վախենալով, որ նրա պատճառով կարող է կորցնել իր զահը (Հմ.8-9), Սավուղն սկսում է հետապնդել Դավիթին և փորձում սպանել նրան: Սալյերիի ու Սավուղի նման մեզ համար էլ խորթ չէ նախանձի զգացումը, մենք էլ կարող ենք նախանձել մեզանից ավելի պարզեւներ ու շնորհներ ունեցողներին: Սավուղն աստվածային ծրագրով ընտրված էր իր պաշտոնում (10.6-7, 24): Դա նրան պետք է տար ապահովություն և ոչ նախանձ: Մեզանից յուրաքանչյուրն ունի բարի գործերի մի հատուկ կոչ (Եփ. 2.10). նախանձը հաղթահարելու լավագույն ձևը մեզ ուրիշների հետ համեմատելուց հրաժարվելն է: Եկե՛ք նախանձելու փոխարեն ուրախանանք ուրիշների հաջողությամբ:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ բարեկամներիս ու գործընկերներիս արձանագրած հաջողությունների համար: Ամեն:

**Ուրիշների հաջողությանը նախանձելու փոխարեն ուրախանանք ցրանք համար:**

Աստժու հրեշտակների մոտ ուրախություն կլինի մեկ ապաշխարած մեղավորի համար: (Պուկ. 15.10)

## **ԱՆԳԻՆ ԿՅԱՆՔԵՐ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ**

**Չ** էի գտնում ամուսնությունս ու տարեդարձիս առիթով ստացածս մատանիները: Լարված որոնում էի ամենուր, լացս գալիս էր: Ամուսինս հանգստացրեց ինձ՝ ասելով: «Ցավում եմ, բայց դրանց փոխարեն նորերը կգնենք»: «Շնորհակալ եմ, -ասացի, բայց դրանք նյութական արժեքից զատ զգացական մեծ նշանակություն ունեն ինձ համար, և հնարավոր չէ փոխարինել»: Աղոթեցի Աստծուն, որ օգնի ինձ՝ գտնել մատանիներս և շարունակեցի փնտրել: Վերջապես նախորդ շաբաթ հագած վերարկուիս գրպանում գտա զարդերս, շնորհակալ եղա Աստծուց և հիշեցի այն կնոջ առակը, որը մեկ դրամ էր կորցրել (Պուկ. 15. 8-10): Իր կորցրած արծաթ դրամը գտնող կնոջ նման ես էլ իմացա կորցրած բանի արժեքը: Մեզանից ոչ մեկը սխալ չէր, որ փնտրում էր կորցրածը: Որովհետև Հիսուսը այդ առակը օգտագործում է շեշտելու համար իր ցանկությունը՝ փրկել իր յուրաքանչյուր ստեղծածը: Մեկ մեղավորի փրկությունն անգամ պատճառ է դառնում երկնային ցնծություն:

Իսկական պարգև է լինել մեկը, ով ուրիշների համար աղոթում է այնպիսի մեծ սիրով, ինչպես կաղոթենք կորցված գանձը գտնելու համար: Եվ գնահատելի է տոնակատարություն անել, երբ մեկը ապաշխարում ու իր կյանքը Հիսուսին է հանձնում: Շնորհակալ լինենք, որ սիրվել ենք մեկից, որը բնավ չի հրաժարվել փնտրելուց, որովհետև Նա խորհում է, որ արժե մեզ գտնել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ այն հիշեցման համար, թե Քո ստեղծած յուրաքանչյուր անձ մի անգին կյանք է, որին արժի փրկել: Ամեն:

**Հարկավոր է աղոթել նրանց համար, որոնք փրկության կարիք ունեն, որովհետև նրանք էլ մեզ նման մեծ արժեք ունեն Աստծո համար:**

Սափանի որդի Աքիկամի բազուկը Երեմիայի հետ էր, որ չլինի թե նա ժողովրդի ձեռքը մատնվի, ու սպանեն նրան: (Եր. 26.24)

### **ՌՎ ՈՒՆԻ ՔՈ ԱՉԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ**

**Ք**լիֆորդ Ուիլյամսը մահվան էր դատապարտվել մի հանցանքի համար, որ ինքը չէր գործել: Նա բազմիցս խնդրել էր վերանայել իր գործը, բայց քառասուններկու տարի շարունակ նրա խնդրանքները մերժվում էին: Հետո իրավաբան Շելլի Տիբոթին, տեղեկանալով նրա գործի մասին, փաստեց, որ ոչ միայն որևէ սպացույց չկար Ուիլյամսին դատապարտելու, այլև իսկական հանցագործը խոստովանել էր, որ ինքն էր կատարել այն: Վերջապես 76 տարեկանում Ուիլյամսն արդարացվեց և ազատ արձակվեց: Երեմիա մարգարեն և Ուրիան մեծ դժվարություններ էին ապրում: Ասել էին Հուդային, որ Աստված խոստացել է դատել իր ժողովրդին, եթե չապաշխարեն (Եր. 26.12-13, 20): Այս պատգամը վրդովեցրեց ժողովրդին ու Հուդայի պաշտոնյաներին, որոնք ցանկացան սպանել մարգարեներին:

Թեև Ուրիան փախավ Եգիպտոս, բայց նրան բերեցին թագավորի առջև, և «սա սրով սպանեց նրան» (Հմ.23): Ինչու՞ Երեմիային չսպանեցին: Մասամբ այն պատճառով, որ «Սափանի որդի Աքիկամի բազուկը Երեմիայի հետ էր, որ չլինի թե նա ժողովրդի ձեռքը մատնվի, ու սպանեն նրան» (Հմ. 24):

Հնարավոր է, որ մենք չենք ճանաչում այնպիսի մեկին, որ մահվան է դատապարտվել, բայց գիտենք շատերին, որոնք մեր աջակցություն կարիքն ունեն: Մեկի իրավունքներն են ոտնահարված, մեկ ուրիշի տաղանդն է անտեսված, մեկի ձայնը չեն լսում: Տիբոթինյի կամ Սափանի նման բարձրաձայնելը կարող է վտանգավոր լինել, բայց դա շատ ճիշտ դիրքորոշում է: Ո՞վ ունի մեր կարիքը, որի պաշտպանություն համար ոտքի կեննեք, ինչպես որ Աստված է մեզ առաջնորդում:

**Աղոթք** - Սիրո՛ղ Դայր, օգնի՛ր, որ սիրեմ ուրիշներին, ինչպես Դու ես սիրում մեզ: Ամեն:

**Եթե ուժադիր լինենք, մեր շուրջը աստիճան կսեսնենք, որոնք մեր օգնության կարիքն ունեն:**

Ամենքդ Աստուծու որդիներ եք Քրիստոս Յիսուսին հավատալով:  
(Գաղ.3.26)

### **ՈՐԴԵՎՐՄԱՆ ԳԵՂԵՑՎՈՒԹՅՈՒՆԸ**

**2**009-ին նկարահանված «Անտեսանելի կողմը» կինոնկարում շներկայացված է մի անտուն պատանու՝ Մայքլի հուզիչ պատմությունը: Մի ընտանիք վերցնում է նրան, օգնում, սովորեցնում հաղթահարել դժվարություններն ու հասնել երազանքին՝ հաջողություն ունենալ ֆուտբոլում: Տեսարաններից մեկում ընտանիքը մի քանի ամիս իրենց հետ ապրած Մայքլին մտերմորեն հայտնում է, որ ժամանակն է արդեն որդեգրելու իրեն: Տղան պատասխանում է, թե ինքն իրեն արդեն ընտանիքի անդամ էր զգում: Դա այնպիսի գեղեցիկ ու հիասքանչ պահ է, ինչպիսին ինքը՝ որդեգրումն է: Երբ ընտանիքն իր գիրկն է բացում մի նոր անդամի առջև, սերը մեծանում ու ավելի մեծ ընդգրկում է ունենում: Որդեգրումը կյանքեր է փոխում, ճիշտ այնպես, ինչպես Մայքլի կյանքը փոխվեց հիմնովին:

Հիսուսին հավատալով՝ բոլորը «Աստծո որդիներ են» դառնում (Գաղ. 3.26): Աստված որդեգրել է մեզ ու դարձրել իր զավակները(4. 5): Որպես Աստծո որդեգիր զավակներ՝ մենք ստանում ենք իր Որդու Հոգին և Աստծուն կոչում մեր «Հայր» (Հմ.6), դառնում նրա ժառանգներն (Հմ.7) ու Քրիստոսի հետ ժառանգակիցներ (Հռոմ. 8.17): Մենք դառնում ենք իր ընտանիքի լիիրավ անդամները: Երբ Մայքլը որդեգրվեց, նրա կյանքը, ինքնությունն ու ապագան լիովին փոխվեցին: Որքան ավելի փոփոխություններ կկրենք մենք՝ դառնալով Աստծո որդեգիրները: Երբ Նրան ընդունենք իբրև մեր Հայր, մեր կյանքն ու ապագան ևս ամբողջովին կփոխվի, և մեզ կտրվի փառավոր ու հավիտենական ժառանգություն խոստում:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ դարձնում ես Քոնը:  
Օգնի՛ր, որ իմ ինքնությունը որպես Քո որդի ընկալեմ: Ամեն:

**Երբ թույլ ցանգ, որ Ասված մեզ որդեգրի, մեր կյանքը հիմնովին կփոխվի:**

Ուստի մենք էլ, որ մեզ շրջապատած վկաների այսքան բազմություն ունենք, դեն գցենք ամեն ծանրություն և մեզ ոյուրավ պաշարող մեղքը: (Եբր.12.1)

## **ՔԱՅԼԵԼ ՀԻՍՈՒՄԻ ՀԵՏ**

**Ք**ան մյուս արահետը հաղթահարողներն իրենց հետ պարտադիր վերցնում են անճարպ սննդի չափաբաժիններ, անջրանցիկ կոշիկներ և քարտեզ: Այդ արահետը ԱՄՆ Արևմտյան ափի 211 մղոն երկարությունը և 47 հազար ոտք բարձրությունը ոլորապատույտ մի ճանապարհ է, որն անցնում է գետերի, լճերի ու անտառների կողքով ու լեռների վրայով: Քանի որ այդ ճամփորդությունը տևում է մոտ երեք շաբաթ, շատ կարևոր է իմանալ կարիքների ճշգրիտ չափը: Ավելիի դեպքում ստիպված ես լինելու կրել այդ բեռը, պակասի դեպքում՝ զգալ դրա կարիքը: Որպես Հիսուսի հավատացյալներ՝ լավ ձկնորսություն անելու համար նույնպես հարկավոր է ճիշտ հաշվարկ անել: Եբրայեցիներին ուղղված նամակում առաքյալը հորդորում է մեզ՝ «դեն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը» (Հմ.1), մեր կյանքը համեմատելով «մեր առաջ դրած ասպարեզի» հետ, որպեսզի «մեր անձերով չհոգնենք և չթուլանանք» (Հմ.3): Մեղքով ծանրաբեռնվելը կամ Աստծո նպատակներից շեղումը լրացուցիչ, ոչ անհրաժեշտ ծանրություն կդառնա մեզ համար: Ինչպես որ հստակ սահմանված ցուցակ կա Ջան մյուս արահետը հաղթահարողների համար, Աստված էլ Իր Խոսքում ուղղություն ու ցուցմունք է տալիս Հիսուսին հետևողներին: Աստծո Խոսքի լույսի ներքո պետք է ճշտել, թե ինչ սովորություններ, երազներ ու ցանկություններ կարելի է վերցնել մեզ հետ: Թեթև ճամփորդելով՝ կկարողանանք լավ ավարտել այն:

**Աղոթք** -Տե՛ր Հիսուս, օգնի՛ր ինձ Քո իմաստնությանը թեթև ճամփորդել և ընթացքս լավ ավարտել: Ամեն:

**Հիսուսին հետևելու ճանադարհին շաբաթ կարող են մեզ խանգարել: Ուստի արժի նայել, թե ինչ կարելի է վերցնել մեզ հետ:**

Ես քեզ չեմ մոռանա: (Ես. 49.15)

## ՄՈՌԱՑՎԱԾ ՉԷ

«Քեռի Արթուր, հիշու՞մ ես՝ այն օրը, երբ ինձ տարար շուկա և վարսավիրանոց, ես հագել էի սև տաբատ, կապույտ շապիկ, սրճագուլյն գուլպաներ և նույն գուլյնի կոշիկներ: Դա 2016թ. օգոստոսի 20-ն էր, հինգշաբթի», - ասաց զարմիկս: Առևտրի մի պատճառով նրա մոտ արտասովոր հիշողությունն է զարգացած, ինչի պատճառով այդպիսի մանրամասները չի մոռանում:

Զարմիկիս այս բացառիկ հիշողությունն ինձ հիշեցնում է Ամենագետ Աստծուն, որը ժամանակի ու հավիտենությունն պահպանում է: Նա գիտի բոլոր տվյալներն ու փաստերը, չի մոռանում իր խոստումներն ու ժողովրդին: Երբևէ եղե՞լ է, որ մտածես, թե Աստված քեզ մոռացել է, երբ ուրիշներն ավելի գնահատված, ավելի ուրախ ու հաջողակ են երևում քո աչքին:

Իր երազածից պակաս վիճակը պատճառ դարձավ, որ Իսրայելն ասեր. «Տերն ինձ թողեց, Աստված ինձ մոռացավ» (Ես. 49.14): Սակայն իրողությունն այդպես չէ: Աստծո սերը, կարեկցությունն ու հոգատարությունը գերազանցում է նույնիսկ իրենց զավակների հանդեպ մայրերի զգացմունքներին (Հմ.15): Այնպես որ, նախքան մոռացված կամ լքված լինելու մասին բնորոշումներ տալը՝ դարձյալ հիշենք, թե Աստված ինչեր է արել իր Որդու՝ Հիսուսի մեջ և Նրա միջոցով: Փրկություն բերող Ավետարանում Աստված հստակ ասել է. «Ես քեզ չեմ մոռանա» (Հմ.15):

**Աղոթք** - Հայր, երբ ինձ զգամ անտեսված ու մոռացված, օգնիր, որ դարձյալ հիշեմ Քո ցուցաբերած սերը, երբ աշխարհ ուղարկեցիր Հիսուսին՝ ինձ համար մեռնելու: Ամեն:

**Բնական է, որ կյանքում մեր դիմագրաված դժվարությունների մեջ երբեմն մեզ զգանք մոռացված ու անտեսված: Բայց հիշենք, որ Աստված մեզ չի մոռացել ու չի՛ մոռանա:**

Եթե մեկն ուզում է առաջինը լինել, թող ամենքից վերջինն ու ամենքի ծառա լինի: (Մարկ.9.35)

## **ՄԵԾՈՒԹՅՈՒՆ**

**Ք** ուտաբերտը սիրված ու հայտնի դեմք էր Հյուսիսային Անգլիայում: Տարածաշրջանի մեծ մասի ավետարանական քարոզիչն էր և իր խորհուրդներով օգնել է թագավորներին, ազդել պետական գործերի ընթացքի վրա: Մահից հետո նրա պատվին կառուցվել է Դուրհամ քաղաքը: Բայց Քուտաբերտի ժառանգությունն ավելի մեծ է: Մի անգամ նա շրջագայում էր ժանտախտից տուժած շրջանում՝ մարդկանց սփոփելու համար: Երբ պատրաստվում էր հեռանալ մի գյուղից, ստուգեց, թե արդյո՞ք բոլորի համար է ազոթել: Մի կին էր մնացել՝ երեխան կրծքին սեղմած: Նրա մի երեխան զոհ էր գնացել ժանտախտին, այս մեկն էլ մահամերձ էր: Քուտաբերտը գրկեց ջերմոդ երեխային, ազոթեց նրա համար ու համբուրեց ճակատը: Իսկ կնոջն ասաց. «Մի՛ վախեցիր, ձեր տնից այլևս ոչ մեկը չի մեռնելու»: Եվ տղան ապրեց: Մի օր Հիսուսը, մեծության մասին խոսելով, գրկեց մի երեխայի և ասաց. «Ով այսպիսի երեխաներից մեկին իմ անունով ընդունի, ի՛նձ է ընդունում» (Մարկ. 9.37): Հրեական մշակույթի համաձայն՝ «ընդունել մեկին» նշանակում է ծառայել նրան, ինչպես հյուրընկալողն է ընդունում իր հյուրին: Քանի որ մանուկները պետք է ծառայեին մեծերին, և ոչ թե ծառայությունն ընդունեին, Հիսուսի ասածը պետք է, որ ցնցող բան լիներ: Նրա ասածի էությունն այն է, որ իրական մեծությունը փոքրին ու ցածրին ծառայելու մեջ է: Թագավորների խորհրդական, ազդեցիկ մարդ պատմության մեջ, որի պատվին նույնիսկ քաղաք է կառուցվել: Սակայն Քուտաբերտի իսկական ժառանգությունը երկինքն արձանագրում է նրա կեցվածքում՝ հուսահատ մորը նկատելու, հիվանդի ճակատը համբուրելու և իր Տիրոջն արտացոլող խոնարհության մեջ:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր, որ խոնարհաբար ծառայեմ ուրիշներին: Ամեն:

**Ինչդե՞ս ես դասկերացնում մեծությունը: Համեմատի՛ր այն Տեր Հիսուսի ունեցած դասկերացման հետ:**

Արդարը յոթն անգամ էլ ընկնի, պիտի կանգնի: (Առ. 24.16)

### **ՆՈՐԻՑ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵԼ**

**Վ**ազորդ Ռայրն Հոլը ԱՄՆ կիսամարաթոնյան վազքի օլիմպիական մրցանակակիրն է: 21 կմ տարածությունը նա անցել է 59 րոպե 45 վայրկյանում՝ դառնալով առաջին մարզիկը, որին հաջողվել է այդ տարածությունն անցնել մեկ ժամից պակաս ժամանակում: Հաջողության հասած մարզիկը ճաշակել էր նաև պարտության դառնությունը: Եվ հավատում էր, որ իրեն հաստատակամություն է ներշնչում Հիսուսը: Աստվածաշնչի՝ նրա նախասիրած հատվածներից մեկում՝ Առակների գրքում ասվում է. «Արդարը յոթն անգամ էլ ընկնի, պիտի կանգնի» (24.16): Այս առակը հիշեցնում է, որ արդարները, որոնք վստահում են Աստծուն և Նրա հետ ճիշտ հարաբերություն ունեն, դեռ ունենալու են դժվարին փորձություններ ու նեղություններ: Բայց քանի որ նույնիսկ այդ դժվարությունների մեջ շարունակում են խնդրել Աստծուն, Նա հավատարմորեն տալիս է կրկին ոտքի կանգնելու զորություն:

Դու երբեք ունեցե՞լ ես հուսահատության ու ձախողման, այլևս երբեք չվերականգնվելու զգացում: Աստծո խոսքը քաջալերում է վստահել ոչ թե մեր ուժին ու կարողություններին, այլ Նրան ու Իր խոստումներին: Այդ դեպքում Նա մեզ ուժ կտա հաղթահարելու մեր կյանքի բոլոր դժվարությունները՝ սկսած պարզ ու սովորականից, մինչև նշանակալի պայքարները (Բ. Կորնթ. 12.9):

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ փորձության ու հուսախաբության պահերին միշտ ինձ մոտ ես, ինձ մխիթարում և ուժ ես տալիս, որպեսզի կարողանամ նորից ոտքի կանգնել:

**Դժվարություններ, հուսախաբություններ ու նեղություններ մի՞տ էլ կունենանք, սակայն հավասարիմ Աստվածը մեզ կվերականգնի:**



Եսավն ընդառաջ գնաց նրան, գրկեց: (ԾՆՆ. 33.4)

## **ՆԱԽ ՆԵՐԻՐ**

**Մ**ենք մեզ անվանեցինք «Քրիստոսով քույրեր», սակայն իմ սպիտակամորթ բարեկամն ու ես միմյանց հետ թշնամիների պես էինք վարվում: Մի առավոտ սրճարանում նախաճաշելիս սաստիկ վիճեցինք մեր ազգային տարաձայնությունների պատճառով: Բաժանվելուց հետո ես երգվեցի այլևս երբեք նրան չհանդիպել: Սակայն մեկ տարի անց նույն հովիվը մեզ հրավիրեց աշխատանքի: Անհնար էր նույն բաժանմունքում աշխատել և չչփվել: Սկզբում մի քիչ անհարմար էր, բայց մենք խոսեցինք մեր հակասությունների մասին: Ժամանակի ընթացքում Աստված մեզ օգնեց, որ կարողանանք ներդրություն խնդրել իրարից և լավագույնս ծառայություն մատուցել:

Աստված բուժեց նաև Եսավի ու իր երկվորյակ եղբոր՝ Հակոբի բաժանման ցավը և օրհնեց նրանց կյանքը: Հակոբը խաբեությունամբ Եսավից գողացել էր իրենց հոր օրհնությունը: Քսան տարի անց Աստված նրան հորդորեց վերադառնալ իր երկիրը: Վերադառնալուց առաջ Հակոբը նվերներ ուղարկեց՝ եղբոր բարեհաճությունն ստանալու համար: «Եսավն ընդառաջ գնաց նրան, գրկեց և համբուրեց, փաթաթվեց վզին և համբուրեց նրան: Նրանք երկուսով լաց եղան» (ԾՆՆ. 33.4):

Եղբայրների միացումը դասական օրինակ է այն բանի, որ Տիրոջը նվերներ ու գանձեր տալուց առաջ հարկավոր է հարթել եղբոր կամ քրոջ միջև եղած տարաձայնությունները (Մատթ.5.23-24): «Նախ եղբորդ հետ հաշտվի՛ր, հետո արի՛, քո ընծան մատուցիր» (Հմ.24): Հակոբը հնազանդվելով Աստծուն՝ հաշտվեց Եսավի հետ, ապա այնտեղ զոհասեղան կառուցեց (ԾՆՆ. 30.20): Ի՛նչ հիասքանչ պատկեր:

**Աղոթք** - Սիրելի Հայր, երբ ծանր ապրումներ ունենամ մեկ այլ հավատացյալի հանդեպ, ինձ ներշնչի՛ր, որ Քո խորանիմնոտեմալուց առաջ ներեմ նրան: Ամեն:

**Հնարավոր է, որ մեկից նեղացած լինես, ի՞նչ ֆայլեր ես անելու հաճվելու համար:**

Թող հորդի իրավունքը ինչպես ջուր, և արդարությունը՝ ինչպես անհուն հեղեղ: (Ամ. 5.24)

## **ԲԱՐԻ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ**

**Ե**րբ 2020 թ. մահացավ ամերիկացի պետական գործիչ, իրավապաշտպան Ջոն Լյուիսը, քաղաքական հետապնդումների ենթարկվող բազմաթիվ մարդիկ սգացին: Լյուիսը 1965-ին կրտսեր Մարտին Լյուիթեր Քինգի հետ մասնակցել էր ի պաշտպանություն սևամորթ քաղաքացիների ընտրության իրավունքի ցույցին, որի ժամանակ վիրավորվել էր գլխից: Հայտնի քաղաքական գործչի հավատամքն էր.«Երբ անարդարությունն ես տեսնում, քո բարոյական պարտքն է ճիշտ բան անել կամ ասել»: «Երբեք մի՛ վախեցիր ձայն հանելուց, անհրաժեշտ փորձության մատնվելը նույնիսկ լավ է»:

Լյուիսը լավ գիտեր, որ ճիշտ բան անելը կամ ճշմարտությունը հավատարիմ մնալը հղի է «բարի» փորձություններով: Որ այդ քայլերն ու խոսքերը հիմնականում անսովոր են լինում: Ամոս մարգարեն նույնպես գիտեր այդ մասին: Տեսնելով Իսրայելի մեղքն ու անարդարությունը՝ նա չկարողացավ լռել, դատապարտեց նրա գործողությունները. «աղքատներին նեղելով և նրանցից ընտրությամբ կաշառք առնելով՝ շքեղազարդ ապարանքներ պիտի շինեք, բայց չեք բնակվի նրանց մեջ, գեղեցիկ այգիներ պիտի տնկեք, սակայն նրանց գինին չեք խմի» (Ամ. 5.11): Իր անձնական ապահովությունն ու հանգիստը պահպանելու և կռիվներից հեռու մնալու փոխարեն՝ Ամոսը մատնանշեց չարը: Նա բարի ու անհրաժեշտ գործ կատարեց: Բայց այդ գործը նպատակ ուներ: Ամոսն ասաց. «Թող հորդի իրավունքը ինչպես ջուր, և արդարությունը՝ ինչպես անհուն հեղեղ» (Հմ.24): Հանուն արդարության ընտրած ոչ բռնի փորձության նպատակը միշտ էլ բարի ու բուժիչ կլինի:

**Աղոթք**-Երկնավոր Հայր, եթե մենակ մնամ, հավանաբար լուռ ու հանգիստ կլինեմ: Բայց հնարավոր է, որ Դու մեկ այլ բան խնդրես: Օգնիր որոշել, թե Քեզ պատվելու համար ինչ անեմ: Ամեն:

**Սուրբ Հոգին մեզ մղում է բարի փորձությունների: Ինչդե՞ս կարելի է որդեգրել դրանք կատարելու ասվածային ձևը:**



Սենք գիտենք, որ մահից դեպի կյանք անցանք, որովհետև եղբայրներին սիրում ենք: Բայց ով եղբորը չի սիրում, մահվան մեջ է մնում: (Ա.Յովհ. 3.14)

## ԱՆՎԱԽ ՍԵՐ

**Ե**րբեմն այնպիսի տպավորիչ պահեր են լինում, որոնք երբեք չեն մոռացվում, մտածեցի ես, երբ դիտում էի Ուելսի Իշխանուհի Դիանայի մասին պատմող լուսապատկերներից մեկը, որտեղ նա ջերմորեն ժպտալով սեղմում էր մի անծանոթի ձեռքը: Իշխանուհու պահվածքը զարմանալի ու տպավորիչ էր այն պատճառով, որ 1987թ. ապրիլի 19-ին, երբ նա այցելեց Լոնդոնին մերձակա հիվանդանոցներից մեկը, Միացյալ Թագավորությունը բռնված էր ՁԻԱՀ-ի համաճարակով, և մարդկանց շփումները վտանգավոր էին: Ուստի զարմանալի էր, որ այդ օրը Դիանան առանց ձեռնոցի ջերմորեն սեղմեց ՁԻԱՀ-ով հիվանդի ձեռքը: Հարգանքի ու ազնվության այդ պատկերը ցնցելու էր ամբողջ աշխարհը, որպեսզի այդ հիվանդությունը տառապողների հետ վարվեն կարեկցանքով ու ողորմությամբ:

Այդ պատկերն ինձ հիշեցնում է, որ մենք հաճախ ենք մոռանում ազատ ու առանց վախենալու ուրիշներին հայտնել Հիսուսի սերը, որին նրանք արժանի են: Հովհաննեսը Քրիստոսի հավատացյալներին հիշեցրեց, որ սերը վախենալով պահելը նշանակում է «մահվան մեջ մնալ» (Ա. Հովհ. 3.14), իսկ այն արտահայտելը՝ ճանաչել Քրիստոսի սերը.«որ նա իր անձը տվեց մեզ համար, ու մենք էլ պարտավոր ենք մեր անձերը դնել մեր եղբայրների համար» (Հմ.16):

**Աղոթք** - Ո՛վ Աստված, Դու սեր ես, և սիրո մեջ ապրելը Քո մեջ ապրել է: Շատ են ուզում այդպիսի ուրախ ու անվախ սեր տածել: Լցրո՛ւ ինձ Քո Հոգով և ավելի խորացրու Քո սիրո մեջ, որպեսզի Քո սերն ազատորեն հոսի իմ մեջ: Ամեն:

**Վախերի ու սարսափների ժամանակ խնդրի՛ր Ասծուց, որ վերացնի դրանք և փոխարենը Իր սերը դնի քո մեջ:**

Մի՛ անարգիր Տիրոջ խրատը: (Առ. 3.11)

## **ՊԱՏԺՈՂ ՍԵՐ**

**Ա**ղջիկս մի քանի անգամ իր սենյակի դուռը շատ ուժեղ փակեց: Նրան հանգիստ բացատրեցի, որ պետք է սովորի զսպել իր բարկությունը, և դուռը տեղից հանելով՝ տարա արհեստանոց: Իմ այդ գործողությունները ես հույս ունեի նրան հասկացնել, որ շատ կարևոր է զգացմունքները զսպելը:

Առակների 3.11-12-ում իմաստուն ուսուցիչը ընթերցողներին հրավիրում է ընդունել Աստծո ուղղումները: Այստեղ ուղղում բառը կարելի է թարգմանել իբրև «սրբագրում»: Որպես բարի ու սիրող Հայր՝ Աստված մեզ հետ խոսում է Իր Հոգու ու խոսքի միջոցով, որպեսզի սրբագրի անձը վնասող մեր վարվելակերպը: Նրա ուղղումները հարաբերական են և արմատավորված Իր սիրո ու մեզ համար լավագույնն անելու ցանկություն մեջ: Թվում է՝ դրանք հետևանքներ են, երբեմն էլ Աստված մեկին հուշում է մեզ ցույց տալ մեր թույլ կետերը: Հաճախ դա մեզ անհանգստացնում է, բայց Աստծո ուղղումը պարզև է:

Բայց մենք այդպես չենք տեսնում: Իմաստունը զգուշացրեց. «Մի՛ անարգիր Տիրոջ խրատը» (Հմ.11): Երբեմն մենք վախենում ենք Աստծո ուղղումից կամ պատժից: Կամ էլ սխալ ենք մեկնաբանում՝ մտածելով, թե մեր կյանքում եղած չար բաները Աստծո պատիժն են: Բայց դա սիրող Աստծո սրտից հեռու է, որովհետև Նա մեզնով ուրախանում է և մեր հանդեպ ունեցած սիրով ուղղում մեր սխալները: Աստծո ուղղումից ու պատժից վախենալու փոխարեն՝ սովորենք ընդունել դրանք: Աստված կանի մեզ համար լավագույնը:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր՝ կարողանամ ընդունել Քո ուղղումները, որպեսզի կարողանամ գտնել Քո տված ազատությունը: Ամեն:

**Երբ զգաս, որ Աստված քեզ ուղղում է կամ դատարան, ընդունի՛ր այն որդես Իր սիրո արհաճություն:**

Որքա՛ն Գեղ է դուռը, Գեղվածք՝ ճանապարհը, որ դեպի կյանք է տանում, և քիչ են այն գտնողները: (Մատթ. 7.14)

## **ԲՈԼՈՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ**

**Է**լյութերա կղզու վրա կառուցված «ապակե պատուհաններով» կամրջից հնարավոր է տեսնել, թե ինչպես են Ատլանտյան օվկիանոսի մուգ կապույտ ջրերը խառնվում Կարիբյան ծովի կապտականաչ ջրերին: Զբոսաշրջիկներին գրավող այդ կամուրջը հայտնի է որպես աշխարհի ամենանեղ տեղը:

Աստվածաշունչը ճիշտ այդպես է նկարագրում այն ճանապարհը, որը տանում է դեպի հավիտենական կյանք. «Որքա՛ն նեղ է դուռը, նեղվածք՝ ճանապարհը, որ դեպի կյանք է տանում, և քիչ են այն գտնողները» (Մատթ. 7. 14): Դուռը փոքր է դիտվում, որովհետև Աստծո Որդին միակ կամուրջն է, որն ընկած մարդուն Սուրբ Հոգու գորուծյամբ կարող է հաշտեցնել Հայր Աստծո հետ (Հմ.13-14, տե՛ս Հովհ.10. 7-9, 16.13): Սակայն Աստծո Խոսքը նաև ասում է, որ բոլոր ազգերի, ժողովուրդների ու հասարակության խավերի հավատացյալները կարող են մտնել երկինք ու խոնարհվել Արքայից Արքայի առջև և միասին երգել Նրա գահի շուրջ (Հայտն. 5.9): Այս հակադիր պատկերն ու միասնականությունը իր մեջ պարունակում է Աստծո բոլոր գեղեցիկ ու բազմազան ժողովուրդներին:

Թեև մեր մեղքերի պատճառով մենք բաժանված ենք Աստծուց, սակայն Նրա ստեղծած յուրաքանչյուր անձ հրավիրված է մտնելու երկնային հավիտենություն՝ հաշտության այս նեղ ճանապարհն անցնելով Քրիստոսի հետ անձնական հարաբերությամբ: Նրա զոհաբերությունը խաչի վրա, հարուժյունը գերեզմանից և երկինք համբարձվելը բոլորին հասանելի բարի լուր են, և արժե դրանցով կիսվել այսօր և ամեն օր:

**Աղոթք** - Երկնավոր Դայր, խնդրում եմ՝ Սուրբ Դոգուդ միջոցով զորացրու՛ ինձ, որպեսզի կարողանամ ուրիշներին ցույց տալ Դեպի Քո Որդին առաջնորդող մատչելի ուղին: Ամեն:

**Եթե հավատում ես բարի լուրին, կարող ես ավելի հիմնավոր կերպով այն հայցնել ուրիշներին:**

Լսեցի՞նք, թե ինչ է խոսում Տեր Աստվածը մեր: (Սաղմ. 84.9)

## ԼՍԵԼՈՒ ՀԱՐՑԵՐ

**Կ**արպատիա շոգենափն առաջինն էր, որ 1912 թ. ապրիլի 15-ին, լսելով խորտակվող Տիտանիկի օգնություն կանչը, հասավ աղետի վայր և փրկեց 706 կյանք:

Օրեր անց Միացյալ Նահանգների Սենատի նիստում Կարպատիայի նավապետ Արթուր Ռոստրոն նկատեց. «Ամբողջ պատահածում նախախնամության գործոնը կար: Հաղորդակցության աշխատողը այդ պահին պատրաստվում էր քնել, և եթե անկողին մտած լիներ, կարող էր չլսել օգնության կանչը»:

Լսելը շատ կարևոր բան է, հատկապես Աստծուն: 84-րդ սաղմոսի հեղինակները՝ Կորխի որդիները, հորդորում էին ուշադիր լսել, երբ ասում էին. «Լսեցի՞նք, թե ինչ է խոսում Տեր Աստվածը մեր. խաղաղության մասին պիտի խոսի իր ժողովրդի, իր սրբերի եւ սրտով դեպի իրեն դարձողների հետ: Արդարև, մոտ է նրա շնորհների փրկությունն իր երկյուղն ունեցողների համար, որպեսզի մեր երկրում նրա փառքը հաստատվի» (Հմ.9-10): Այս խրատը շատ տպավորիչ է նաև այն պատճառով, որ նրանց նախնին՝ Կորխը, ապստամբել էր Աստծո դեմ և խորտակվել անապատում (Թվեր 16. 1-35):

Տիտանիկի խորտակված օրը մոտակա մեկ այլ նավի հաղորդակցության աշխատողը շուտ էր մտել անկողին և չէր լսել օգնության կանչը: Եթե լսեր, ավելի շատ մարդիկ կփրկվեին: Եթե լսենք Աստծուն, Նա կօգնի, որ հաջողությամբ նավարկենք կյանքի ամենակատաղի ջրերում անգամ:

**Աղոթք** - Հայր, օգնի՛ր, որ մտքերով, խոսքերով ու արարքներով մնամ Քեզ մոտ: Խնդրում եմ՝ ինձ որպես ծառա օգտագործի՛ր ուրիշներին հույս ներշնչելու համար: Ամեն:

**Լսե՛մք Ասծուն, որդեսօղի կարողանանք օգտակար լինել ուրիշներին:**

Նրանք շատ առատաձեռն եղան իրենց կարողությունից էլ ավելի հոժար կամքով: (Բ.Կորնթ. 8.2-3)

## **ԻՍԿԱԿԱՆ ՍԻՐՈ ԲՆՈՒՅԹԸ**

**Թ**ագավարակի համաճարակի արգելափակումների ժամանակ Ձերին ստիպված էր փակել իր մարգասրահն ու ամիսներ շարունակ չունենալ որևէ եկամուտ: Մի օր բարեկամներից մեկը գրուեթյուն ուղարկեց, որ ուզում է հանդիպել իր հետ երեկոյան Ժ. Ծ-ին: Ձերին հայտնի չէր հանդիպման շարժառիթը, բայց որոշեց գնալ: Երբ որոշված ժամին հասավ մարգասրահ, կայանատեղին սկսեցին մոտենալ մեքենաներ: Առաջին մեքենայի վարորդը շենքի մոտ՝ մայթին դրեց մի զամբյուղ: Այնուհետև մեկը մյուսի ետևից մոտ հիսուն մեքենա եկավ, որոնց ուղևորները բարձրաձայն ողջունում էին Ձերին, կանգնեցնում մեքենան և զամբյուղի մեջ գցում քարտ կամ դրամ: Նրանք իրենց ունեցածից տվեցին ու իրենց ժամանակը տրամադրեցին նրան քաջալերելու համար:

Պողոս առաքյալի համաձայն՝ իսկական սերը զոհաբերություն է պահանջում: Նա կորնթացի հավատացյալներին բացատրում է, թե ինչպես մակեդոնացիները առաքյալին և ուրիշներին օգնելու համար տվեցին «իրենց կարողությունից էլ ավելի» (Բ.Կորնթ. 8. 2-3): Նրանք նույնիսկ «աղաչում էին» Պողոսին՝ նրան ու Աստծո ժողովրդին օգնելու առիթ ընձեռել: Ինքնամոռաց տալու հիմքը Հիսուսի անձնագոհ սիրտն էր: Նա էր, որ երկնքի ճոխությունը թողնելով՝ աշխարհ եկավ ծառայելու և Իր կյանքը տալու. «Ձեզ համար աղքատացավ նա, որ հարուստ էր» (Հմ.9):

Թող որ մենք էլ աղերսենք Աստծուն, որպեսզի «տալու շնորհում էլ ավելանանք» (Հմ.7), և կարողանանք սիրով հոգալ ուրիշների կարիքները:

**Աղոթք** - Սիրո՞ղ Հայր, Դու շատ բարի ես: Ինձ տուր Քո գորությանը ու իմաստնությանը ուրիշների օրհնությունը լիցնելու առիթ: Ամեն:

**Մեր զոհաբերական սիրով ու նվիրումով փառալերենք մեզ քրադասողներին:**

Այս բոլոր դեպքերի ժամանակ Յոթն իր շրթունքներով չմեղանչեց: (Յոթ. 2.10)

## **ԵՐԲ ՉԵՆՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ**

**Ե**րիտասարդը, որ մի պահ կորցրել էր պրոֆեսիոնալ մարզիկ դառնալու իր հույսը, մորն ասում էր.«Ես չեմ հասկանում իր ծրագիրը: Ամբողջ կյանքս շրջեցի դեպի Ինքը, և հիմա այսպե՞ս»: Բոլորս էլ ունեցել ենք հուսախաբուլթյան պահեր, երբ նույն հարցը մենք էլ ենք տվել: Դրանք կարող են լինել ընտանիքի անդամի հետ կապի խզումը, առողջական խնդիրները, աշխատավայրում անակնկալ փոփոխությունները և այլն:

Հոբի 1-2-ում նկարագրվում են Հոբի կյանքում պատահած ողբերգություններն ու հետընթացները՝ թեև նա դրանց արժանի չէր.«Այդ մարդը ճշմարտախոս էր ու անարատ, արդար էր ու աստվածապաշտ, ամեն տեսակի չար ու մեղավոր գործերից հեռու» (Հոբ 1.1): Սակայն կյանքը հաճախ այնպես չի լինում, ինչպես մենք ենք ցանկանում: Հոբի համար էլ այդպես չեղավ: Երբ բազում ցավերից ու կորուստներից հետո նա շարունակում է անմոռուչ տանել իրեն պատճառված ցավերը, կինը բարկացած ասում է. «Մի խո՛ւք ասա Տիրոջն ու մեռի՛ր» (Հմ.2.9): Հոբի պատասխանն իր կնոջը իմաստուն է ու ճշմարիտ և հարմար է նաև մեզ համար, երբ մենք էլ դժվարանանք դիմագրավել մեծ ու փոքր խնդիրներ: «Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցիր, չարիքներին չհամբերե՞նք» (Հմ.10),- ասում է Հոբը:

Աստծո գորությունները թող որ մեր վստահությունն ու պատվելը մնան, նույնիսկ եթե մենք չենք հասկանում, թե ինչպես է Նա կյանքի դժվարին պարագաներում իր գործն անում:

**Աղոթք** - Յայր, օգնի՛ր ինձ, որ կարողանամ վստահել ու պատվել Քեզ, եթե նույնիսկ չեմ կարողանում տեսնել Քո ձեռքը և իմանալ Քո ծրագիրը: Ամեն:

**Ասված մեր հավասքը ֆնտրության է ենթարկում, բայց մեզ մնում է վստահել ու աղավիհել Իրեն:**



Նրանց բոլորի վրա մեծ շնորհ կար: Որովհետև նրանց մեջ ոչ մեկը կարողություն չուներ: (Գործք 4.33-34)

### **ՈՒՐԻՇՆԵՐԻ ՇՆՈՐՀՔՆ ԱՎԵԼԱՑՆԵԼ**

**Ն**ախքան մեր որդեգրելը՝ մեր որդին իր կյանքի առաջին տարիներն անցկացրել է մանկատանը: Երբ զնացինք նրան բերելու, իր հագած հին հագուստները փոխեցինք նորերով, մեր բերած շորերից որոշ մաս էլ թողեցինք ուրիշ մանուկների համար: Սիրտս ցավեց, որ երեխան շատ քիչ բան ուներ, բայց նաև ուրախ էի, որ կարողանալու էինք բավարարել նրա ֆիզիկական ու հոգևոր կարիքները:

Մի քանի տարի անց մի կին նվիրատվութուն էր հավաքում կարիքավոր ընտանիքներին օգնելու համար: Եվ որդիս ցանկութուն հայտնեց իր խաղալիքներից և իր հավաքած գումարից տալ թեև իր անցյալը հաշվի առնելով՝ պետք է, որ ավելի կառչած լինեք իր ունեցածին:

Մտածում եմ, որ որդուս առատաձեռնության պատճառը նույնն էր, ինչ որ էր առաջին դարի եկեղեցու համար. «Նրանց բոլորի վրա մեծ շնորհ կար: Որովհետև նրանց մեջ ոչ մեկը կարողություն չուներ» (Գործք 4.33-34): Մարդիկ կամովին ծախում էին իրենց ունեցվածքը՝ միմյանց կարիքները հոգալու համար:

Թող Աստծո շնորհն այնքան զորեղ լինի մեզ վրա, որ մենք, իմանալով ուրիշների նյութական կամ ոչ նյութական կարիքների մասին, կարողանանք գործել այդ հավատացյալների նման և հոժարակամ մեր սրտից տալ կարիքավորներին: Այդ բանը մեզ կդարձնի Աստծո շնորհքի կրողներ, Տեր Հիսուսով հավատակիցներ, որոնց «սիրտն ու հոգին մեկ էր» (Հմ.32):

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, Քո շնորհքի և առատ պարգևների համար: Օգնիր, որ շնորհքդ կիսեմ ուրիշների հետ: Ամեն:

**Աստ՞ո Հոգին գորությանը գործում է մեր մեջ: Ի՞նչ ունեն՞, որով կարող եմ կիսվել այլոց հետ՝ որդես Իր շնորհի արժանացություն:**

Սուրբ և անարատ կրոնասիրությունն Աստծու ու Հոր առաջ այս է՝ որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել և իր անձն աշխարհից անարատ պահել: (Հակ. 1.27)

### **ԳՈՐԾՈՒՆ ՀԱՎԱՏՔ**

**Ս**եմի հայրը կյանքը փրկելու համար հրաժարվեց մասնակցել ռազմական հեղաշրջմանը: Եվ եկամտի կորուստը պատճառ դարձավ, որ ընտանիքը չկարողանար եղբոր համար անհրաժեշտ դեղորայքը հայթայթել: Վրդովված Աստծո դեմ՝ Սեմը մտածում էր.«Ի՞նչ ենք արել, որ այս վիճակում հայտնվեցինք»:

Հիսուսին հետևողներից մեկը, լսելով ընտանիքի խնդիրների մասին և տեսնելով, որ ինքը ունի բավականաչափ գումար, մեծ քանակությամբ դեղ գնեց և տարավ նրանց: Անծանոթի՝ կյանք փրկող այս արարքը շատ մեծ ազդեցություն ունեցավ: Մայրը որոշեց, որ հենց այդ կիրակի կգնան այդ մարդու հաճախած եկեղեցին: Սեմի բարկությունն էլ սկսեց հանդարտվել: Այսպես աստիճանաբար ընտանիքի բոլոր անդամներն սկսեցին հավատալ Հիսուսին: Երբ Հակոբը գրում էր Քրիստոսի հավատքին ընկերակցողների կյանքի ու կենցաղի մասին, առանձնացրեց ուրիշների մասին հոգալու անհրաժեշտությունը: «Եթե մի եղբայր կամ մի քույր մերկ լինեն կամ օրվա ուտելիքի կարոտ, և ձեզանից մեկն ասի նրանց. «Գնացե՛ք խաղաղություն, տաքացե՛ք ու կշտացե՛ք», բայց մարմնին պետք եղածը չտաք նրանց, օգուտն ի՞նչ կլինի» (2.15-16),- գրեց նա:

Մեր արարքները ոչ միայն արտացոլում են մեր հավատքի իսկությունը, այլև կարող են ազդել ուրիշների հավատքի ընտրությունը: Սեմի պարագայում նա դարձավ հոգևոր մշակ ու եկեղեցու հիմնող, իր ընտանիքին օգնող մարդուն կոչեց Հայր Մեյբս ու նրան համարում է իր հոգևոր հայրը, որն իրեն ցույց տվեց Հիսուսի սերը:

**Աղոթք** - Հավատարիմ Աստված, օգնիր ինձ, որ կարողանամ հավատքս ապրել Քո մեջ: Ուզում եմ, որ ուրիշներին իմ մատուցած ծառայությունը պատիվ բերի Քեզ: Ամեն:

**Եթե վայելում ես Հիսուսի սերը ֆո կյանքում, ի՞նչ կարող ես անել մեկի համար, որ ֆո օգնության կարիքն ունի:**



Քո խոսքն ինձ՝ ուրախություն և իմ սրտի համար ցնծություն կլինի: (Եր.15.16)

### **ՎԱՏԱՅԵԼ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻՆ**

**Ա**մերիկացի հայտնի ավետարանիչ Բիլլի Գրեհեմը նկարագրել է Աստվածաշնչի ճշմարտություններն ընդունելիս իր ներքին պայքարի մասին: Մի գիշեր, երբ քայլում էր Սան Բերնարդինոյի լեռներում, ծունկի իջավ, Աստվածաշունչը դրեց մի կոճղի վրա ու աղոթեց. «Ո՛վ Աստված, շատ բաներ կան այս գրքում, որ ես չեմ հասկանում»: Իր մտքերի խառնաշփոթությունը խոստովանելով՝ նա զգաց, որ Սուրբ Հոգին օգնեց իրեն հասկանալ, որ Նրա Խոսքը պիտի ընդունել հավատքով: Երբ ոտքի ելավ, հարցեր դեռ ուներ, բայց ասաց. «Ես իմացա, որ իմ հոգում եղած հոգևոր պատերազմը շահել եմ»:

Երիտասարդ Երեմիան նույնպես հոգևոր պատերազմներ էր մղում և իր հարցերի պատասխանները հետևողականորեն փնտրում Աստվածաշնչում: «Քո խոսքն ինձ՝ ուրախություն և իմ սրտի համար ցնծություն կլինի (Եր.15.16),- ասում է նա և հայտարարում. «Տիրոջ խոսքը...իմ սրտում կարծես կրակ վառեց, բորբոքվեց ոսկորներիս մեջ» (20.8-9): 19-րդ դարի ավետարանիչ Չարլզ Սպերջենը գրել է. «Երեմիայի արտաքին կյանքը, հատկապես իր հավատարիմ ծառայությունը քարոզված խոսքի հանդեպ իր ունեցած ներքին սիրո արտահայտությունն է»:

Մենք էլ, հակառակ մեր պայքարներին, կարող ենք մեր կյանքը ձևավորել Աստվածաշնչի իմաստնություն միջոցով: Կարող ենք շարունակել հավատքով սովորել, ինչպես միշտ:

**Աղոթք** - Հայր, երբ կարդում եմ Քո խոսքը, ցույց տուր նոր բաներ Քո մասին: Սովորեցրու՛ Քո ճանապարհն ու ցույց տուր Քո սերը: Ամեն:

**Եթե ընդունում ես Ասծո Սուրբ Խոսքը, ինչդե՞ս ես ակնկալում կյանքիդ ձևավորումը:**

Փորձիր ինձ, Աստված, ու ճանաչիր իմ սիրտը, քննիր ինձ ու ճանաչիր իմ շավիղները: (Մաղմ. 138. 23)

## **ԱՍՏՎԱԾ ԳԻՏԻ ՔՈ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Ի**մ լավ բարեկամի հետ ճաշելուց հետո տուն գնալիս բարձրաձայն շնորհակալություն հայտնեցի Աստծուն, որ ունեմ այդպիսի մտերիմ: Նա մարդկանց այն փոքր շրջանակից է, որ ինձ ճանաչում ու սիրում է այնպիսին, ինչպիսին ես կամ՝ հակառակ իմ տարօրինակություններին, վատ սովորություններին ու սխալներին: Սակայն իմ կյանքում կան նաև բաներ, որ նույնիսկ մտերիմներս չգիտեն: Օրինակ, երբ հերոսական քայլ չեմ կատարել, դատապարտել եմ, կամ եղել եմ անբարյացակամ ու չսիրող:

Բայց Աստված գիտի իմ ամբողջ պատմությունը: Երբ որևէ մեկ ուրիշի հետ չեմ ուզում շփվել, ես անկեղծորեն կարող եմ խոսել Իր հետ:

138-րդ սաղմոսի բառերը նույնպես նկարագրում են այն մտերմությունը, որ կարող ենք ունենալ մեր Գերիշխան Թագավորի հետ: Նա շատ լավ գիտի ու ճանաչում է մեզ (Հմ.1), տեղյակ է մեր ճանապարհներին (Հմ.3): Նա հրավիրում է, որ մեր շփոթություններով, անկայուն մտքերով ու խորհուրդներով, փորձությունների դեմ պայքարներով գնանք Իր մոտ: Երբ պատրաստ լինենք ամբողջովին Իրեն վստահել, Նա կմոտենա մեզ՝ բարեփոխելու ու մեր պատմությունը նորից գրելու համար: Դրանից մենք կտխրենք, որովհետև կտեսնենք, որ Իրենից շեղված ենք:

Աստված մեզ ավելի լավ է ճանաչում, քան որևէ այլ ոք: Մեզ սիրում է: Եթե ամեն օր մեր անձը Իրեն հանձնենք և ցանկանանք Իրեն ավելի լավ ճանաչել, Նա կփոխի մեր պատմությունը՝ հանուն Իր փառքի: Ինքն է մեր պատմության հեղինակը, որ դեռ չարունակում է գրել:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ սիրում ես ինձ՝ որպես Քո զավակին՝ չնայած հաճախ եմ Քեզ հուսախաբ արել: Օգնիր, որ իմ անձը Քեզ հանձնեմ մեծ վստահությամբ: Ամեն:

**Գիտակցի՛ր Ասծո կատարած բոլոր բարիքները և Նրան հանձնվի՛ր ամեն օր:**



Եվ հացը վերցրեց, գոհացավ, կտրեց ու նրանց տվեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արեք իմ հիշատակի համար: (Ղուկ. 22.19)

## **ՀԻՇԻՐ ՈՒ ՏՈՆԻՐ**

**1** 907թ. դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած ածխահանքերի խոշոր պայթյունները ցնցեցին ԱՄՆ Վիրջինիա նահանգի փոքր գաղութներից մեկը: 360 հանքագործ զոհվեց, 250 կին այրիացավ, 1000 երեխա որբացավ: Պատմաբանների վկայությամբ՝ այդ աղետի առիթով եղած հիշատակի միջոցառումներն էլ դարձել են Հայրերի օրվա տոնակատարությունից սկիզբը: Այսինքն՝ մեծ կորստից առաջ եկավ հիշատակում, իսկ այնուհետև՝ տոնակատարություն:

Մարդկությունն ամենամեծ ողբերգությունը տեղի ունեցավ այն ժամանակ, երբ մարդիկ խաչեցին իրենց Արարչին: Բայց այդ մռայլ պահը նույնպես առիթ դարձավ և՛ հիշատակության, և՛ տոնի: Դեպի Իր Խաչը գնալու նախօրյակին Հիսուսը վերցրեց Իսրայելի Պասեքի նյութերը և ստեղծեց Իր հիշատակի տոնակատարությունը: Ղուկասը այդ տեսարանն այսպես է նկարագրում. «Եվ հացը վերցրեց, զոհացավ, կտրեց ու նրանց տվեց և ասաց. «Այս է իմ մարմինը, որ ձեզ համար տրվում է. այս արեք իմ հիշատակի համար» (Ղուկ. 22.19):

Այսօր էլ, երբ հաղորդություն ենք ստանում, պատվում ենք Նրա՝ մեր հանդեպ ունեցած մեծ ու անսահման սերը, հիշում մեր ազատության համար վճարված մեծ գինը և տոնում կյանքի պարգևը, որ եղավ Իր զոհողությամբ: Ինչպես Չարլզ Ուեսլին է ասում իր նշանավոր երգում. «Հիանալի սեր: Ինչպե՞ս եղավ, որ Դու՛ իմ Աստված, մեռար ինձ համար»:

**Աղոթք** - Հայր, երբ մոտենում եմ հիշատակի սեղանին, հիշեցրու՛, թե իմ ներումը որքան թանկ արժեցավ և օգնի՛ր, որ տոնեմ քո մեծ ու սքանչելի սերը: Ամեն:

**Ամեն անգամ, որ մոտենաս Սուրբ սեղանին կամ մասնակցես հաղորդության, կենսրոնացի՛ր Տե՛ր Հիսուսի խաչի վրա:**

Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը: (Մաղմ. 120.2)

### **ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ՔԱՌՍԻ ՄԵՉ**

**Ձ**ոռանն արթնացավ պայթուցիկների աղմուկից ու փշրվող ապակու ձայնից: Դուրս եկավ՝ տեսնելու, թե ինչ է պատահել: Մուկ փողոցները դատարկ էին, տները կարծես լավ վիճակում էին: Միայն իր տան հայելին էր կոտրվել:

Քննիչները գազի խողովակից մի քանի սմ այն կողմ հայտնաբերեցին մի փամփուշտ, որը եթե խողովակին կպչեր, ինքը ողջ չէր մնա: Հետո պարզվեց, որ այդ փամփուշտը եկել էր մոտակա հարկաբաժնից: Եվ հիմա Ջոանը վախենում էր տուն մտնել: Նա աղոթեց խաղաղության համար, և երբ փշրված ապակին մաքրվեց, մի փոքր հանդարտվեց:

120-րդ սաղմոսը հիշեցում է այն մասին, որ նեղություն պահին նայենք Աստծուն: Նրա մոտ կարող ենք խաղաղություն ու հանդարտություն ունենալ, որովհետև «Ինձ օգնություն պիտի գա Տիրոջից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը» (Հմ.2): Աստված, որ ստեղծեց տիեզերքը, օգնում ու հսկում է մեզ (Հմ.3), նույնիսկ երբ մենք քնում ենք, Նա բնավ չի քնում (Հմ.4): Նա մեզ հսկում է գիշեր-ցերեկ (Հմ.6), «այսուհետև մինչև հավիտյան» (Հմ.8):

Կարևոր չէ, թե ինչ վիճակում ենք մենք, Աստված տեսնում է և սպասում, որ դառնանք դեպի Ինքը: Այդ ժամանակ Նա խոստացել է Իր խաղաղությունը տալ ամեն բանի մեջ:

**Աղոթք** - Սիրո՛ւ Աստված, շնորհակալ եմ Քո տված խաղաղության համար: Խնդրում եմ շարունակի՛ր խաղաղեցնել սիրտս քառսային թվացող վիճակներում: Ամեն:

**Քառսային ու սարսափելի դաժե՛ր կունենանք, սակայն Աստված խոսացել է մեզ հե՛տ լինել ու մեզ դաժողանել:**

Մրրիկը վերածեց խաղաղ օդի, և ալիքները դադարեցին: (Սաղմ.106.29)

## ՓՈԹՈՐԿԻ ՄԻՋՈՎ

**Շ**ոտլանդացի միսիոներ Ալեքսանդր Դաֆի՝ դեպի Հնդկաստան առաջին ճամփորդության ժամանակ՝ 1930-ին, նրա նավը Հարավային Աֆրիկայի ափերին խորտակվեց: Ինքն ու իր ուղեկիցները կարողացան հասնել ամայի մի ափ: Որոշ ժամանակ անց անձնակազմի անդամներից մեկը գտավ Դաֆին պատկանող Աստվածաշունչը, որը հասել էր ափ: Երբ գիրքը չորացավ, Դաֆը իր հետ փրկվածների համար կարդաց 106-րդ սաղմոսը, և նրանք գոտեպնդվեցին: Դաֆը վերջապես Հնդկաստան հասավ ևս մեկ նավաբեկում ունենալուց հետո:

106-րդ սաղմոսը հիշեցնում է այն միջոցները, որոնցով Աստված ազատեց Իսրայելի ժողովրդին: Դաֆն ու իր ուղեկիցները իրենց նմանեցրին Իսրայելի ժողովրդին և մխիթարվեցին Խոսքով. «Մրրիկը վերածեց խաղաղ օդի, և ալիքները դադարեցին: Նրանք ուրախացան, որ ալիքները հանդարտվեցին, և Նա նրանց իրենց ուզած նավահանգիստն առաջնորդեց» (Հմ.29-30): Եվ Իսրայելցիների նման նրանք էլ «գոհություն մատուցեցին Տիրոջը նրա ողորմությունների և հրաշագործությունների համար» (Հմ.31): Ակնհայտ զուգահեռներ կան 106-րդ սաղմոսի 28-31-ի և Նոր Կտակարանի մեջ (Մատթ.8.23-27, Մարկ.4.35-41): Հիսուսն ու իր աշակերտները նավի մեջ էին, երբ սաստիկ փոթորիկ սկսվեց: Աշակերտները վախեցած բացականչեցին, և Հիսուսը՝ մարդեղացած Աստվածը, հանդարտեցրեց ծովը: Մենք էլ կարող ենք քաջալերվել: Մեր հզոր Աստվածն ու Փրկիչը լսում է և պատասխանում մեր աղաղակներին, մխիթարում մեզ մեր զիմազրաված փոթորիկների մեջ:

**Աղոթք** - Աստված, շնորհակալ եմ, որ ինձ մեճակ չես թողնում փոթորիկների մեջ: Քո կարիքն ունեմ: Ամեն:

**Փոթորիկների ու սարսափազդու դաժնի մեջ արժի դիմել Ասծուն:**

Սավուղն ասաց Դավթին. «Տերն այսօր ինձ քո ձեռքն էր մատնել, իսկ դու ինձ չսպանեցիր»: (Ա. Թագ. 24.19)

## **ՎՐԵԺԽՆԴԻՈՒԹՅՈՒՆ ՉՓՆՏՐԵԼ**

Հողագործը նստեց իր բեռնատար մեքենան ու սկսեց իր առավոտյան ստուգումը: Հասնելով տարածքի ամենահեռավոր մասը՝ շատ զայրացավ՝ տեսնելով, որ մեկը աղբը լցրել էր իր ցանկապատից ներս:

Երբ աղբը լցնում էր մեքենան, որ տանի թափելու, մի ծրար գտավ, որի վրա զանցառուի հասցեն էր նշված: Եվ հողագործը երեկոյան այդ հասցեում թափեց ոչ միայն այդ մարդու, այլև իր աղբը:

Թվում է, թե վրեժխնդրությունը լավ բան է: Բայց արդյո՞ք այդպես է: Ա. Թագ. 24-ում Դավիթն ու իր մարդիկ, փախչելով մարդասպան Սավուղ թագավորից, թաքնվել էին քարայրում: Երբ Սավուղը հանգստանալու համար մտավ այդ նույն քարայրը, Դավթի մարդիկ դա հարմար առիթ համարեցին նրանից վրեժ լուծելու համար (Հմ. 5): Բայց Դավիթը հակառակվեց ու ասաց. «Իմ ձեռքը չեմ բարձրացնի նրա վրա, որովհետև նա Տիրոջ օծյալն է» (Հմ.7): Երբ Սավուղն իմացավ այդ մասին, չհավատաց ու բացականչեց.«Դու ավելի արդար մարդ ես, քան ես» (Հմ.17):

Մեր կյանքում էլ լինում են պահեր, երբ որևէ անարդարության հանդիպելիս հանցագործներից վրեժ լուծելու ցանկություն ենք ունենում: Տեղի կտա՞նք այդ ցանկությունը, ինչպես հողագործն արեց, թե կդիմագրավենք Դավթի նման: Կկարողանա՞նք վրեժխնդրության փոխարեն ընտրել արդարությունը:

**Աղոթք** - Հիսու՛ս, որ սիրում ես նաև մեր թշնամիներին, թող որ Թեզ նման հետամուտ լինեն արդարության: Ամեն:

**Վրիժառության ցանկություն կունենանք, սակայն Տիրոջ դու արդարությանը հե՛սե՛նք:**



Իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Յրեաստանում ու Սամարիայում և մինչև աշխարհի ծայրերը: (Գործք.1.8)

## **ՍԻՐԵԼ ԹՇՆԱՍՈՒՆ**

**Մ**ինչ նա կնկատեր ինձ, ես թաքնվեցի սենյակում: Վատ էի զգում թաքնվելուս համար, բայց նաև չէի ուզում նրա հետ առհասարակ հանդիպել ու խոսել, որովհետև զայրացած էի իր վարմունքից:

Հրեաներն ու սամարացիները նույնպես ունեին միմյանց վրդովեցնող հարաբերություններ: Սամարացիները խառը ծագում ունեին ու իրենց աստվածներին էին պաշտում և հրեաների կարծիքով՝ աղավաղել էին հրեական արյունն ու հավատը, ստեղծելով մրցակից կրոն (Հովհ. 4.20): Հրեաներն այնքան էին ատում սամարացիներին, որ նախընտրում էին երկար շրջանցիկ ճանապարհը, որպեսզի չանցնեն նրանց տարածքով:

Հիսուսը ավելի լավ մի միջոց է հայտնել: Նա փրկություն բերեց բոլորին, այդ թվում նաև սամարացիներին: Նա մի մեղավոր կնոջ ու նրա քաղաքի համար կենարար ջուր բերելու համար անցավ Սամարիայի միջով (Հմ. 4-42): Աշակերտներին ուղղված վերջին խոսքերը իր օրինակին հետևելու մասին էին: Նրանք պետք է իր բարի լուրը հայտնեին ամենքին.«Իմ վկաները կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև աշխարհի ծայրերը» (Գործք.1.8): Առաքելության ամենացավոտ մասն այն էր, որ աշակերտները պետք է հաղթահարեին տարիներ շարունակ իրենց ունեցած նախապաշարմունքները՝ որպեսզի սիրեին իրենց չսիրած ժողովրդին:

Եթե Հիսուսը մեզ համար ավելի կարևոր է, քան մեր դժգոհություններն ու բողոքները, ուրեմն պետք է վստահենք ու սիրենք մեր «սամարացիներին»:

**Աղոթք** - Յայր, թող որ Քո սիրո ակիբները թափվեն ինձ վրա՝ առաջ բերելով տարափ, որը իմ միջոցով կհոսի դեպի ուրիշները: Ամեն:

**Աժխատի՛ր սե՛ր ցույց տալ նրանց, որոնք այնքան էլ չեն սիրում կամ թշնամի են քեզ:**

Նայեցե՛ք դաշտի շուշանների՛ն, թե ինչպե՛ս են մեծանում... Աստված այնպես է հագցնում. չէ՞ որ շատ ավելի՛ն՝ ձեզ: (Մատթ. 6.28, 30)

## **ԱՍԾՈՆ ՆԱԽԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

**Մ**ենք ավելի ու ավելի էինք հեռանում չինաստանի Յոննանան գավառի գյուղերից մեկից: Մի ժամից ավելի քայլելուց հետո լսեցինք ականջ խլացնող մի ձայն: Մեր քայլերն արագացնելով՝ հասանք մի տեղ, և մեր առջև բացվեց մի գեղեցիկ տեսարան: Մոխրագույն ժայռերի վրայից հոսում էր ջրի սպիտակ վարագույրը: Հիասքանչ տեսարան էր: Մեզ ուղեկցողները, որ մոտակա գյուղից էին, որոշեցին խնջույք կազմակերպել: Լավ գաղափար էր. բայց մեզ հետ ուտելիք չէինք վերցրել: Ընկերներս մտան անտառ, որտեղ բազմազան ուտելիքներ կարելի էր գտնել. կանաչեղեն, պտուղ և նույնիսկ՝ ձուկ:

Հիշեցի Աստծո շռայլ նախատեսություն մասին: Նրա առատաձեռնություն փաստը տեսնում ենք «իր տեսակի սերմը իր մեջ պարունակող, միրգ տվող ծառերի» մեջ (Ծնն.1.12): Աստված մեզ համար ստեղծել ու տվել է «սերմանելի բոլոր բույսերի սերմերը և իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը» (Հմ.29):

Պատահո՞ւմ է, որ քո կարիքների համար Աստծուն վստահելու գործում գեթավարություն ունենաս: Ինչու՞ չես շրջում բնության գրկում: Թույլ տուր, որ բնության մեջ քո տեսածները քեզ հիշեցնեն Հիսուսի՝ վստահություն տվող խոսքերը. «Ուրեմն հոգ մի՛ արեք ասելով՝ ի՛նչ ենք ուտելու կամ ի՛նչ ենք խմելու կամ ի՛նչ ենք հագնելու: ...Ձեր երկնավոր Հայրը գիտե, որ այդ ամենը պետք են ձեզ» (Մատթ. 6.31-32):

**Աղոթք** - Սիրո՞ղ Դայր, Դու առատաձեռն մատակարար ես: Օգնի՛ր, որ կարիքներս հոգալու գործում վստահեմ Քեզ: Ամեն:

**Ինչդեռ որ մինչև այսօր Ասված հոգասար է եղել քո համդեղ, այսուհետև էլ, Իր նախատեսության համաձայն, դիժի Եարունակի հոգալ բոլոր կարիքներդ:**

Նախ թող սովորեն իրենց ընտանիքում բարեպաշտ լինել: (Ա.Տիմ. 5.4)

## ԼԱՎ ՊԱՏՃԱՌ

**Ի** նքնաթիռում երկու կանայք նստեցին դեմ դիմաց: Թռիչքի տևողությունը երկու ժամ էր, և անհնար էր չտեսնել նրանց հոգատարությունը միմյանց հանդեպ: Պարզ էր, որ նույն ընտանիքից էին: Կրտսերը կլիներ վաթսուն տարեկան, մերթըմբերթ իր պայուսակից հանում էր խնձորի բարակ շերտեր կամ սենդվիչներ ու տալիս ավելի տարեց կնոջը, որը 90-ին մոտ կլիներ: Այնուհետև անձեռոցիկ մեկնեց նրան, իսկ վերջում էլ՝ «Նյու Յորք թայմսի» մի օրինակ: Այդ փոխանցումները քնքույշ էին ու սիրալիր: Երբ դուրս էինք գալիս օդանավից, ես կրտսերին հայտնեցի իմ հիացմունքը իր վերաբերմունքից: Նա պատասխանեց. «Լավագույն բարեկամս է՝ մայրս»:

Լավ կլինի, որ բոլորս կարողանանք այդկերպ արտահայտվել: Որովհետև կան ծնողներ, որ իրոք լավագույն բարեկամ են, չնայած հակառակն էլ կա: Այդ հարաբերությունները միշտ էլ բարդ են եղել: Պողոսը Տիմոթեոսին գրած նամակում չի անտեսում այդ բարդությունը, բայց կոչ է անում. «սովորել իրենց ընտանիքում բարեպաշտ լինել՝ հոգատարություն ցուցաբերելով մեր յուրայինների, մեր ծնողների, մեր ազգականների հանդեպ» (Ա. Տիմ. 5. 4.8):

Մենք բոլորս էլ հաճախ նման վերաբերմունք ցուցաբերում ենք այն ժամանակ, երբ ընտանիքի անդամներից համապատասխան վերաբերմունք ենք ստանում: Այլ խոսքով՝ եթե արժանի են: Սակայն Պողոսն ավելի լավ պատճառ է առաջարկում. հոգ տանել, որովհետև «սա բարի է և Աստծու առաջ ընդունելի» (Հմ.4):

**Աղոթք** - Հայր, տու՛ր ինձ շնորհք ու ողորմություն, երբ փորձում եմ հոգալ յուրայիններիս մասին: Եվ օգնի՛ր հիշել այդ վարմունքիս պատճառը: Ամեն:

**Եթե ունես ծնողներ, արժի մտածել, թե ինչդե՞ս դեպ է հոգասար լինես նրանց հանդեպ և ինչո՞ւ:**

Ով որ մարդկանց առաջ ինձ ուրանա, ես էլ նրան կուրանամ իմ Հոր առաջ, որ երկնքում է: (Մատթ. 10.33)

### **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՆԵԼ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐԻՆ**

**Ա**րձակուրդս անցկացնում էի այլ երկրում, և երբ փորձեցին զգողանալ դրամապանակս, ես չզարմացա: Կարդացել էի զգուշացումներ այն մասին, որ գետնուղիներում գողություններ են կատարվում, հետևաբար գիտեի նաև ինչպես կանխել, բայց չէի սպասում, որ ինձ հետ կպատահեր այդպիսի բան:

Բարեբախտաբար գողացող երիտասարդի ձեռքից դրամապանակս ընկավ գետնին, և ես վերցրի այն: Այս դեպքն ինձ կրկին հիշեցրեց, որ հարկավոր է ուշադրություն դարձնել զգուշացումներին:

Մենք հաճախ անտեսում ենք դրանք՝ մտածելով, որ կխանգարեն ազատորեն վայելել կյանքը: Սակայն պարզվում է՝ դրանց հետևելը շատ կարևոր է: Օրինակ Հիսուսը, երբ Իր աշակերտներին ուղարկում էր Աստծո թագավորության բարի լուրը տարածելու, հստակ ազդարարեց. «Երբ զնաք, քարոզեցե՛ք ու ասացե՛ք, որ երկնքի արքայությունը մոտեցել է» (Մատթ. 10. 7): Եվ զգուշացրեց. «Ով ինձ մարդկանց առաջ դավանի, ես էլ նրան կդավանեմ իմ Հոր առաջ, որ երկնքում է: Եվ ով որ մարդկանց առաջ ինձ ուրանա, ես էլ նրան կուրանամ իմ Հոր առաջ, որ երկնքում է» (Հմ.32-33):

Մենք ունենք փրկության հնարավորություն: Աստված սիրով տվեց մի Փրկիչ և մեզ համար մշակեց հավիտյան Նրա հետ լինելու ծրագիր: Բայց եթե մենք հեռանանք Աստծուց, մերժենք փրկության Իր պատգամը և ներկայի ու ապագայի համար Իր տված իսկական կյանքը, կկորցնենք Նրա հետ լինելու առիթը:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, շնորհակալ եմ, որ Հիսուսի միջոցով մեզ փրկություն ես տալիս: Շնորհակալ եմ նաև զգուշացումներիդ համար՝ որոնք հիշեցնում են, որ Քեզ հավատալը կարևոր է: Ամեն:

**Հիսուսին մերժելը լուրջ հարց է; Ուստի զգո՞ն լինե՞նք ու նկատի առնե՞նք դրա հետևանքների մասին եղած զգուշացումները:**

Եզեկիան փշրեց Մովսեսի շինած պղնձե օձը: (Դ. Թագ.18. 4)

## **ԳԵՐԱԳՈՒՅՆ ԲԺԻՇԿԱԸ**

**Ե**րբ վերջապես գտնվեց սննդային ալերգիայից մի ընտանիքի անդամների բուժման ձևը, շատ ուրախացա, որովհետև ես հաճախ էի ասել այդ մասին: Նկարագրեցի այդ խիստ գործընթացը և փառաբանեցի այդ ծրագիրը մշակող բժշկին: Բայց բարեկամներս ակնարկեցին, թե Աստված է ամենամեծ բժիշկը: Այս հայտարարությունն ստիպեց ինձ մի պահ կանգ առնել ու մտածել, թե արդյո՞ք ես ուշադրությունս չեղել եմ գերագույն բժշկից և բժշկությունը դարձրել եմ կուռք:

Իսրայելի ժողովուրդը այդպիսի վիճակում հայտնվեց, երբ սկսեց խոսնկ ծխել պղնձե օձին, որ Աստված գործածել էր իրենց բուժելու համար: Այդ պաշտամունքը կատարվում էր այնքան ժամանակ, մինչև որ Եզեկիան, նկատելով կոռուպտությունն այդ դրսևորումը, «փշրեց Մովսեսի շինած պղնձե օձը» (Դ. Թագ.18. 4):

Դրանից դարեր առաջ Աստված «կոտորող օձեր ուղարկեց ժողովրդին, որոնք խայթում էին մարդկանց. իսրայելցիներից շատերը մեռան» (Թվ. 6): Ժողովուրդը օգնություն համար դիմեց Մովսեսին՝ խնդրելով իրենց համար աղոթել Աստծուն: Տիրոջ խորհրդով «Մովսեսը պղնձե օձ պատրաստեց և այն դրեց ձողի վրա: Օձից խայթվողը, նայելով պղնձե օձին, կենդանի էր մնում» (Հմ.7-9):

Հիշի՛ր Աստծո՞ քեզ տված պարգևները: Արդյո՞ք դրանք, փոխանակ իր ողորմությունն ու շնորհքի ապացույց լինելու, պաշտամունքի առարկա են դարձել: Մի՛միայն բոլոր բարիքների աղբյուր (Հակ. 1:17) մեր սուրբ Աստվածն է արժանի պաշտամունքի:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, պաշտում եմ Քեզ՝ որպես ամենագոր Աստված, որ լսում է աղոթքս: Շնորհակալ եմ, որ պահպանում ես կյանքս ու հոգում իմ մասին: Ամեն:

**Ասված է բոլոր բարիքների և օրհնությունների հեղինակը:  
Ուսի փառավորի՛ր Նրան և ոչ այլ բանի:**

Ահա շուտով գալիս եմ, և իմ վարձը՝ ինձ հետ, որ ամեն մեկին հատուցեմ ըստ իր գործերի: (Հայտն. 22.12)

## **ՄԵԾ ԱՎԱՐՏԸ**

**Ա**մուսինս ու որդիս պտտում էին հեռուստատեսային ալիքները՝ փնտրելով իրենց ուզած ֆիլմերը: Բայց բոլոր ֆիլմերն սկսվել էին, ու նրանք սկսեցին նայել դրանց վերջին տեսարանները: Այդպես նայեցին ութ կինոնկարի ավարտ: Երբ հարցրի, թե ինչու են այդպես վարվում, ամուսինս ժպտալով ասաց. «Ո՞վ չի սիրում վերջը նայել»:

Ես ինքս էլ սիրում եմ սկզբում նայել գրքերի ու ֆիլմերի ավարտը: Նույնիսկ հպանցիկ հայացք ձգելով Աստվածաշնչի՝ կենտրոնացած եմ մնում իմ սիրած հատվածների կամ պատմությունների վրա, որոնք ավելի հաճելի ու հասկանալի են թվում: Բայց Սուրբ Հոգին գործածում է Աստծո վստահելի ու կիրառելի խոսքերը՝ մեզ վերափոխելու և հաստատելու համար, որ Հիսուսին հավատացողների համար Իր պատմությունը լավ ավարտ է ունենալու:

Քրիստոս Ինքն Իր մասին հայտարարեց. «Ես եմ Ալֆան ու Օմեգան, Սկիզբն ու Վերջը, Առաջինն ու Վերջինը» (Հայտն. 22. 13): Նա հռչակեց, որ Իր ժողովուրդը կժառանգի հավիտենական կյանք (Հմ.14) և զգուշացրեց նրանց, որ «Եթե մեկը սրանց վրա բան ավելացնի, Աստված նրա վրա կավելացնի այն պատուհասները, որ գրված են այս գրքում: Եվ եթե մեկն այս գրքի մարգարեությունների խոսքերից բան պակասեցնի, Աստված նրա բաժինը կպակասեցնի կյանքի գրքից, սուրբ քաղաքից և այս գրքում գրվածներից» (Հմ.18-19):

**Աղոթք** - Եկ, Տե՛ր Հիսուս, եկ: Ամեն:

**Նրա վերսին գալը խթանելու է, որ ամրենք Իր համար: Նա խոսացել է նորից գալ:**

Գոժար եմ ձեզ էլ, որ Գոռնուն եք, իմ կարողության չափով Ավետարանը քարոզելու: (Գոռն. 1.15)

## **ԱՎԵՏԱՐԱՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Հին Հռոմն ուներ ավետարանի՝ բարի լուրի իր սեփական տարբերակը:** Վերգիլիոսի համաձայն՝ աստվածների թագավոր Զևսը Հռոմի համար անվերջ կամ անսահման թագավորութիւն էր սահմանել: Աստվածները որպես աշխարհի փրկիչ ու աստվածային որդի էին ընտրել Օգոստոս կայսերը և խոստացել նրան առաջնորդել խաղաղության ու բարգավաճման ոսկե դարաշրջանում:

Բարի լուրի մասին այս կարծիքը, սակայն, բոլորի համար ընդունելի չէր: Շատերի համար այն կայսեր բանակի ու դահճի ծանր ձեռքով պարտադրված իրողութիւն էր: Կայսրութեան փառքը կառուցված էր ստրուկ դարձած ժողովրդի աշխատանքով, որի կատարողները զրկված էին որևէ իրավունքից և ենթարկվում էին իրենց իշխանավորների քմահաճույքին:

Այսպիսին էր աշխարհը, երբ Պողոսը ներկայացավ որպես Քրիստոսի ծառա (Հռոմ.1.1): Նա ինքը որոշ ժամանակ ատում էր ոչ միայն Հիսուսի անունը, այլև այն, որ Հիսուսը չարչարվեց՝ ընդունելով հրեաների թագավորն ու աշխարհի փրկիչը լինելու առաքելութիւնը:

Սա էր այն բարի լուրը, որ Պողոսը բացատրելու էր նամակի մնացած գլուխներում: Այս ավետարանը «Աստու զորութիւնն է՝ փրկելու համար ամեն հավատացողի» (Հմ.16): Այդ լուրը շատ էր պետք Կեսարի լծի ներքո տառապողներին: Դա խաչված ու հարութիւն առած Փրկչի մասին լուրն է, այն ազատարարի, որ հաղթեց իր թշնամիներին՝ ցույց տալով, թե որքան է սիրում իր ժողովրդին:

**Աղոթք** - Բարի լուրը լավ ծանոթ է նրանց, որոնք գիտեն, թե որքան ունեն նրա կարիքը: Ամեն:

**Ուսադիր կարդա՛ Պողոսի առաջին բառերը և հավասա նրան, որ կփրկի:**

Երբ Յոսիասը տակավին երիտասարդ էր, սկսեց հարել իր նախնի Դավթի Տեր Աստծուն: (Բ.Մնաց. 34.3)

## **ՈՂՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀՔ**

**Ա**րագընթաց մայրուղուց քիչ այն կողմ աճել էր արևածաղկի մի թուփ: Անցնելով դրա կողքով ու տեսնելով, որ կիրճերը շարունակ որևէ այլ արևածաղիկ չկա, ես սկսեցի խորհել, թե ինչպես է այդ մի հատիկ բույսը աճել: Միայն Աստված կարող էր ճամփեզրի խճերի մեջ ստեղծել մի գեղեցիկ բույս, որը քամուց օրորվելով ողջունում էր անցորդներին:

Հին կտակարանը պատմում է Հուդայի հավատարիմ մի թագավորի մասին, որը նույնպես անակնկալ էր հայտնվել: Նրա հայրն ու պապը ծառայել էին այլ աստվածների, սակայն Հոսիասը իր թագավորության ութերորդ տարում, «եբբ տակավին երիտասարդ էր, սկսեց հարել իր նախնի Դավթի Տեր Աստծուն» (Բ.Մնաց. 34.3): Նա մարդկանց ուղարկեց, «որ նորոգեն իր Տեր Աստծու տունը» (Հմ. 8), և այդ ընթացքում գտան «Տիրոջ Օրենքի գիրքը, որը գրված էր Մովսեսի ձեռքով» (Հմ.14): Հետո Աստված Հոսիասին ներշնչեց, որ առաջնորդի Հուդայի ազգին, որպեսզի նա վերադառնա իր նախնիների հավատքին և «իր բոլոր օրերին նա չխտորվեց իր նախնիների Տեր Աստծու ուղուց» (Հմ. 33):

Մեր Աստվածն է անսպասելի ողորմությունների տերը: Նա կարող է մեծ բարիքներ անել ու ծաղկեցնել կյանքի դժվարին պայմաններում ու անսպասելի պահերի: Մոտիկից հետևիր Նրան: Հնարավոր է, որ նույնը կատարի նաև քո կյանքում:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, փառք Քեզ, որ բնավ չես փոխվում: «Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը» (Ողբ Եր.3. 23): Օգնիր, որ կարողանամ նայել առաջ՝ տեսնելու Քո պատրաստած անակնկալները: Ամեն:

**Ինչ թայմաններում էլ լինես, Ասված կարող է անակնկալ բարիքներ անել ու քեզ հույս ներշնչել:**



Օրհներգեցե՛ք Տիրոջը, հնչեցրե՛ք նրա անունը, նրա փառքը տարածեցե՛ք հեթանոսների մեջ: (Ես.12.4)

## **ՊԱՏՄԵԼ ՅԻՍՈՒՄԻ ՄԱՍԻՆ**

**Ա**մերիկացի ավետարանական Դուլայթ Մուդդին Քրիստոսին հավատալուց հետո որոշեց ոչ մի օր չանցկացնել առանց Աստծո բարի լուրը որևէ մեկին հայտնելու: Բազմազբազ առօրյայում երբեմն մոռանում էր այդ մասին, բայց աշխատում էր ուղղել բացթողումը: Այդպիսի մի օր արդեն անկողին էր մտել, երբ հիշեց ու վեր կացավ: Տնից դուրս գալով՝ մտածում էր, որ դժվար թե կարողանա այդ անձրևին հանդիպել ինչ-որ մեկի: Հանկարծ նկատեց, որ մի մարդ քայլում է անձրևի տակ, մոտեցավ ու առաջարկեց իր անձրևանոցի տակ մտնել: Ապա հարցրեց, թե արդյոք կարո՞ղ է իր հետ խոսել Հիսուսի մասին:

Մուդդին այդ պահին մարմնավորում էր մեղքերի հետևանքներից մարդկանց փրկելու Աստծո պատրաստակամությունը: Նա հնազանդվեց Իսրայելի ժողովրդին Աստծո տված ցուցումներին որպեսզի «հնչեցվի նրա անունը, նրա փառքը տարածվի հեթանոսների մեջ» (Ես. 12. 4): Աստծո ժողովուրդը ոչ միայն «նրա անունը պիտի հնչեցներ» (Հմ.4), այլև պատմեր, թե ինչպես Նա դարձավ «իրենց փրկիչը» (Հմ.2): Դարեր անց էլ մեր կոչը նույնն է մնացել. պատմել Հիսուսի մարդեղություն հրաշքի, խաչվելու և հարություն մասին:

Թերևս մենք էլ Աստծո սիրո մասին լսել ենք, երբ Մուդդիի նման մեկը պատմել է մեզ: Մենք էլ, յուրաքանչյուրս մեր անձնական ձևով, կարող ենք նույնը պատմել մեր Փրկչի մասին:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ինձ ազատում ես մեղքերից: Օգնի՛ր, որ պատրաստ լինեմ Քո բարի լուրը պատմել ուրիշներին: Ամեն:

**Ասված մեզ համար աս բան է արել: Պասմենք Նրա մասին ուրիշներին:**

Ձեր մտքով ու հոգով նորոգվեք: (Եփ. 4. 23)

### **ՆՈՐՈԳԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ**

**Ժ**ամանակն էր մեր տունը վերանորոգելու ու նոր տեսք տալու: Նոր էի սենյակներից մեկը պատրաստել ներկելու, երբ նահանգային կառավարությունը որոշում ընդունեց, որ COVID-19 համաճարակի պատճառով կղաղարեցվի վերանորոգման նյութերի վաճառքը: Լսելով այս հայտարարությունը, շտապեցի խանութ՝ անհրաժեշտ ապրանքները գնելու:

Պողոսը նույնպես իր մտքում վերանորոգման մի ծրագիր ուներ, երբ գրում էր եփեսացիներին ուղղված նամակի 4-ը: Բայց այնտեղ նշված փոփոխությունները միայն մակերեսային չէին: Չնայած Հիսուսին՝ որպես մեր Փրկիչ վստահելը բարեփոխում է մեզ, սակայն մի գործ էլ կա, որ Հոգին է անելու: Նրանից ժամանակ ու ջանք է պահանջվում, որ դա իրականացնի «արդարությունամբ և սրբությունամբ» (Եփ. 4.24):

Հոգու ներկայությունը անհրաժեշտ փոփոխությունները կատարում է ներսից: Դրանք օգնում են մեզ, որ կարողանանք մեր խոսքով ու գործով արտացոլել Տեր Հիսուսին. ստելու փոխարեն ճշմարտությունը խոսել (Հմ.25). խուսափել բարկության պահին մեղանչելուց (Հմ.26): Նա առաջնորդում է, որ մեր բերանից դուրս գա միայն այն, որ բարի է, հավատի շինության համար պիտանի» (Հմ.29): Հոգով եղած գործերը դառնում են ներքին փոփոխությունների մաս, որոնք դրսևորվում են քաղցրությունամբ, ներմամբ ու կարեկցանքով (Հմ.32): Հոգին մեր մեջ գործում է, որ կարողանանք նմանվել Հիսուսին ու արտացոլենք մեր Երկնավոր Հոր սիրտը (Հմ.24, 5.1):

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, շնորհակալ եմ, որ ինձ նորացնում ես Քրիստոսով: Օգնի՛ր, որ կարողանամ գործերով ցույց տալ իմ մեջ կատարված փոփոխությունները: Ամեն:

**Մեր սներիդ ղես մենք էլ կարիք ունենք ներքին բարեփոխումների, ուսի դիմենք Աստուծո՛ւ, որ այդ անհրաժեշտ փոփոխությունները կատարի մեր մեջ:**



Ամբողջ Գիրքն աստվածաշունչ է ու օգտակար՝ սովորեցնելու և հանդիմանալու թյան, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար: (Բ. Տիմ. 3.16)

## **ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՄԵԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

**Ե**րբ Քուլինը բացեց իր գնած գունավոր ապակու կտորների տուփը, տեսավ, որ իր պատվիրածի փոխարեն ուղարկել են ամբողջական պատուհաններ: Ուսումնասիրելով պարզեց, որ դրանք վերցված են Երկրորդ Համաշխարհային պատերազմի ռմբակոծումներից փրկված մի եկեղեցուց: Քուլինը հիացավ մասնագետների կատարած աշխատանքով. նրանք կարողացել են բեկորները վարպետորեն ամբողջացնել ու ստանալ գեղեցիկ պատկերներ: Եթե անկեղծ լինեմ, լինում են ժամանակներ, երբ բացելով Աստվածաշնչի որոշ հատվածներ, որոնք պարունակում են սերնդաբանության մասին տվյալներ, դժվարանում եմ հասկանալ, թե ինչ կապ ունեն դրանք Աստծո Խոսքի հետ: Այդպիսին է Ծննդոց 11-ը, գլուխ, որտեղ ներկայացված են անծանոթ անունների ու ընտանիքների ցուցակներ. ինչպես Սեմ, Սաղա, Եբեր, Նաքովր, Թարա (Հմ. 10-32): Ես փորձում եմ այդ համարների վրայով արագ անցնել և հասնել ծանոթ տեղեր, որոնք ավելի դյուրըմբռնելի են: Քանի որ «ամբողջ Գիրքն աստվածաշունչ է ու օգտակար» (Բ. Տիմ. 3.16), Սուրբ Հոգին կարող է օգնել ավելի լավ հասկանալու, որ հատվածը ամբողջի մաս է, և մեր աչքերը բանալ տեսնելու համար, թե օրինակ Սաղան ինչ կապ ունի Աբրամի հետ (Ծնն. 11. 12-26), իմանալ Դավթի նախնիների և որ ամենակարևորն է՝ Հիսուսի հետ եղած կապը (Մատթ. 1. 2,6,16): Աստված նաև հրճվում է՝ մեզ զարմացնելով կատարելապես անձեռակերտ պատուհանի գանձով, որի մեջ ավելի փոքր մասերը արտացոլում են իր առաքելության պատմությունը Աստվածաշնչում:

**Աղոթք** - Հայր Աստված, շնորհակալ եմ, որ Դու ես Աստվածաշնչի և ամբողջ պատմության վարպետ արհեստավորը: Խնդրում եմ՝ օգնիր ավելի հստակ տեսնելու Քեզ ու Քո գործը: Ամեն:

**Երբ Աստվածաճնչից հասված կարդանք, հիշենք, որ այդ հասվածը ամբողջական դասմության մի մասն է:**

Հայրը նրան տեսավ, և գուրջը շարժվեց: (Դուկ. 15.20)

## **ԴԱՏԱՐԿ ՁԵՌՔՈՎ**

**Ռ** որերտն անհարմար զգաց, երբ նկատեց, որ նախաճաշի հանդիպման է եկել առանց դրամապանակի: Այնքան նեղվեց, որ մի պահ մտածեց ոչինչ չուտել, միայն խմիչք պատվիրել: Սակայն ընկերը հակառակը պնդեց, և նրանք ճաշեցին, ու ընկերը հաճույքով փակեց հաշիվը:

Երևի դու էլ ստացողի կարգավիճակում հայտնվելիս կնեղվես: Բնական է, որ մենք ուզում ենք մեր ծախսերը վճարել, բայց լինում են նաև առիթներ, երբ խոնարհաբար ընդունում ենք մեզ արվածը:

Կրտսեր որդին էլ երկընտրանքի առաջ էր, երբ հորից իրեն հասանելիք ունեցվածքը վատնելուց հետո որոշեց վերադառնալ ու մտածում էր հորն ասել. «Այլևս քո որդին կոչվելու արժանի չեմ. ինձ քո վարձկաններից մե՛կն արա» (Դուկ.15. 19): Բայց հոր համար վերադարձողն իր սիրած որդին էր, և նա ջերմորեն ընդունեց նրան, գրկեց, համբուրեց (Հմ.20): Ավետարանի այս հիանալի պատկերը մեզ հիշեցնում է, որ Հիսուսն իր մահով մեզ ցույց տվեց սիրող Հորը, որն անակնկալ սիրով ու բաց ձեռքերով ընդունում է դեպի Ինքը վերադարձող դատարկաձեռն զավակներին: Ինչպես մի երգում է ասվում. «Դատարկ են ձեռքերս, պարզապես կառչում եմ Քո խաչին»:

**Աղոթք** - Երկնքի՛ Աստված, օգնիր ընդունել ու վայելել Որդուդ՝ Հիսուսի միջոցով Քո պարզևած ներումը: Ամեն:

**Քանի որ Հիսուսը վճարել է մեր մեղքերի գինը, մենք կարող ենք ներում ստանալ մեր գործած մեղքերի համար:**

Անդադար աղոթք արեք: Ամեն բանով գոհացե՛ք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը Քրիստոս Յիսուսով: (Ա. Թես. 5.17-18)

**ԱՂՈՅԻ ՍԱՐԴ**

**Մ**եր ընտանիքը *Դիրքինգ պապիս հիշում է որպես մեծ հավատքով ու մշտապես ազդեցող մարդու: Բայց նա միշտ այդպիսին չի եղել: Հորաքույրս հիշում է այն օրը, երբ իրենց հայրը հայտարարել է, որ պիտի սկսեն ճաշից առաջ շնորհակալություն հայտնել Աստծուն: Նրա արտասանած առաջին ազդեցը այնքան էլ պերճախոս չի եղել: Սակայն նա այդ սովորությունը շարունակել է հաջորդ հիսուն տարիներին և կատարելագործվել: Երբ պապս մահացավ, ամուսինս տատիս նվիրեց «ազդեցող ձեռքեր» անունով մի բույս և ասաց.«Պապը ազդեցի մարդ էր»: Աստծուն հետևելու, Նրա հետ ամեն օր խոսելու որոշումը պապիս փոխել, դարձրել էր Քրիստոսի հավատարիմ ծառա:*

Աստվածաշնչում շատ ազդեցներ կան: Մատթեոս 6. 9-13-ում Հիսուսը իրեն հետևողներին տվել է ազդեցի մի օրինակ՝ նրանց սովորեցնելով Աստծուն մոտենալ իր ով լինելու համար անկեղծ փառաբանությամբ: Երբ մեր խնդրանքները ներկայացնում ենք Աստծուն, վստահ ենք, որ Նա տալու է «մեր ամեն օրվա հացը» (Հմ.11): Երբ խոստովանում ենք մեր մեղքերը, Նրանից ներում և օգնություն ենք խնդրում փորձությունից հեռու մնալու համար (Հմ. 12-13): Սակայն մենք սահմանափակված չենք միայն «Տերունական ազդեցը» ասելով: Աստված ուզում է, որ մենք «ազդեց անենք ամեն ժամանակ» (Եփ. 6.18): Ազդեքը կենսական է մեր հոգևոր աճի համար և մեզ առիթ է տալիս անդադար հաղորդակցվել իր հետ (Ա.Թես. 5. 17-18):

Երբ խոնարհ սրտով մոտենանք Աստծուն, *ինքը կօգնի մեզ, որ իրեն ավելի լավ ճանաչենք ու սիրենք:*

**Աղոթք** - Երկնավոր Դայր, սիրտս փառավորում է Քեզ՝ աղոթքի օրհնության համար: Շնորհակալ եմ, որ Քո սիրով ընդունում ես ինձ, երբ դիմում եմ Քեզ: Ամեն:

**Աղոթելու համար դարձադիր չէ դերձախոս լինել:**  
**Կարևորը ամեն օր աղոթելն է:**

Դարձե՛ք, որդիներ, և ես կփարատեմ ձեր ցավը: (Եր. 3.22)

### **ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՑ**

**Պ**ատահում էր, որ դասընկերներով փախչում էինք Համալսարանի դասերից: Բայց աշխատում էինք բաց չթողնել պրոֆեսոր Քրիսի՝ քննությունից առաջ կարդացած դասախոսությունը: Այդ օրն էր նա քննական հարցերի մասին կարևոր նկատառումներ և հուշումներ անում: Ինչու՞ էր նա այդպես վարվում: Հավանաբար ուզում էր, որ լավ հանձնեինք քննությունը: Նա շատ բարձր չափանիշներ ուներ և մեզ օգնում էր հասնել դրանց: Մեր միակ անելիքը ներկա լինելն ու լսելն էր, որպեսզի պատրաստվեինք քննությանը:

Խորհում եմ, որ Աստված էլ պրոֆեսոր Քրիսի նման է: Նա չի կարող զիջել իր չափանիշները, բայց որովհետև շատ է ուզում, որ նմանվենք Իրեն, այդ չափանիշներին հասնելու համար մեզ է տալիս Սուրբ Հոգին:

Երեմիա 3.11-14-ում Աստված Իսրայելի հավատացյալներին հորդորեց ընդունել իրենց հանցանքները և դառնալ դեպի Ինքը: Բայց նաև, իմանալով, թե նրանք որքան թույլ են ու համառ, ցանկացավ օգնել: Խոստացավ բուժել «նրանց ցավը» (Հմ.22) և հովիվներ ուղարկեց նրանց սովորեցնելու և ուղղելու (Հմ.15):

Որքա՛ն մխիթարական է իմանալ, որ անկախ այն բանից, թե որքան մեծ է մեր մեղքը, կամ որքան ենք հեռացել Աստծուց, Նա պատրաստ է բուժել մեզ անհավատությունից: Մեր միակ անելիքն է ընդունել մեր սխալ ընթացքը և արտոնել, որ Նրա Սուրբ Հոգին սկսի փոխել մեր սրտերը:

**Աղոթք** - Սիրո՛ղ Աստված, շնորհակալ եմ Քո շնորհալի սիրո համար, որն ինձ օգնում է նմանվել Քեզ: Խնդրում եմ՝ օգնի՛ր՝ կարողանամ արտոնել Քո Հոգուն, որ ինձ բուժի անհավատությունից ու վերափոխի սիրտս: Ամեն:

**Պայտարու՞մ ես Ասծուն հե՛տևելու և հնազանդվելու համար: Խնդրի՛ր Ասծուց, որ բուժի և օգնի քեզ:**

Տիրոջ սիրելիքն ապահով թող ապրի. Աստված նրա համար հովանի կլինի ամեն օր: (Բ.Օր. 33.12)

## **ԱՊԱՅՈՎ ՀԱՆԳՍԱԼԱԼ ԱՍԾՈՆ ՄԵՁ**

**Ե**րբ զավակներս պատանեկությունն էին թևակոխում, մի նամակ գրեցի նրանց: Դրա մեջ խոսում էի մեր քրիստոնեական էություն մասին, հիշելով, որ այդ տարիքում ես անվատահ էի: Դեռ պետք է սովորեի, որ Աստծո սիրելին եմ՝ Նրա զավակը: Եվ գրեցի. «Իմանալ, թե ով ես դու, նշանակում է իմանալ, թե ում ես դու»: Որովհետև երբ Հասկանանք, որ մեզ Աստված է ստեղծել և ուխտենք Իրեն հետևել, կարող ենք Հանգիստ լինել՝ իմանալով, թե ո՞վ լինելու Համար է ստեղծել: Մենք նաև գիտենք, որ Նա մեզ փոխում է՝ ամեն օր Իրեն նմանվելու Համար:

Բ. Օր. 33.12-ը Աստվածաշնչի մի Հատվածն է մեր ինքնություն՝ Աստծո զավակները լինելու մասին.«Տիրոջ սիրելին ապահով թող ապրի. Աստված նրա Համար Հովանի կլինի ամեն օր և նա Նրա ուսերի վրա կհանգստանա»: Մովսեսի մահից առաջ Աստված այս օրհնությունը տվեց Բենիամինի տանը՝ որպես Իր ժողովրդի, որ պատրաստ էր մտնել Իր խոստացած երկիրը: Աստված ուզում էր, որ նրանք միշտ հիշեն, որ Իր սիրելի ժողովուրդն են և ապահով զգան իրենց ինքնությունը՝ որպես Իր զավակները:

Աստծո զավակները լինելու գիտակցումը Հավասարապես կարևոր է ամենքի Համար. պատանիների, չափահասների ու տարեցիների: Երբ Հասկանանք, որ Աստված մեզ ստեղծել է ու հսկում է մեզ, մենք կունենանք ապահովություն, հույս ու սեր:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, Դու ինձ ստեղծեցիր ու ինձ պահում ես Քեզ մոտ: Թող որ Քո զավակը լինելու ինքնությունը թափանցի իմ գործերի ու խորհուրդների մեջ: Ամեն:

**Ավելացրու՝ իմ ունեցած սերը Քո հանդեմ և օգնի՛ր, որ ընդունեմ, որ Դու ես մեր բերդն ու ամրոցը:**

Դուք նրանով լցված եք, որովհետև նա է ամեն իշխանության և պետության գլուխը: (Կող. 2.10)

### **ԱՄԲՈՂՋԱՆԱԼ ՔՐԻՍՏՈՍՈՎ**

**Մ**ի հայտնի կինոնկարի հերոսը հաջողություններ ունի մարզական ասպարեզում, սակայն նրա ամուսնական կյանքը սկսում է խարխլվել: Փորձելով սիրաշահել ու վերադարձնել կնոջը՝ Դորոտին, նա կնոջ աչքերի մեջ նայելով ասում է՝ «Դու ամբողջացնում ես ինձ»: Միտ ջերմացնող մի արտահայտություն, որն ասես հունական փիլիսոփայական պատմություններից մեկի արձագանքը լինի: Այդ առասպելի համաձայն՝ մեզանից յուրաքանչյուրը «մի կես է», որն ամբողջանալու համար հարկավոր է գտնել «մյուս կեսին»:

Ընդունված է հավատալ, թե սիրած մարդը կամ կողակիցն է մեզ ամբողջացնում: Սակայն դա ճիշտ է արդյոք: Շատ ամուսնական զույգերի հետ եմ խոսել, որոնք իրենց դեռ ամբողջական չեն զգում: Մեկը երեխա չի ունենում, մեկ ուրիշը երեխաներ ունի, բայց դարձյալ ինչ-որ բանի պակաս է զգում: Ի վերջո ոչ մեկը չի կարող մեզ ամբողջացնել:

Պողոս առաքյալը այդ հարցին այլ լուծում է տալիս: «Նրա մեջ Աստվածություն ամբողջ լիությունը բնակված է մարմնապես: Եվ դուք նրանով լցված եք, որովհետև նա է ամեն իշխանության և պետության գլուխը» (Կող.2.9-10): Հիսուսը մեզ միայն չի ներում ու փրկում, նա նաև ամբողջացնում է մեզ՝ Աստծո կյանքը բերելով մեր կյանք (Հմ.13-15):

Ամուսնությունը լավ է, բայց այն չի ամբողջացնում մեզ: Միայն Հիսուսը կարող է այդ բանն անել: Փոխանակ սպասելու, որ մի անձ, աշխատանք կամ մեկ այլ բան մեզ ամբողջացնի, ընդունենք Աստծո հրավերը՝ արտոնելով, որ Նրա ամբողջությունը ավելի ու ավելի լցնի մեր կյանքը:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ ամբողջացնում ես ինձ Քո մահով, հարությանք, ներումով ու բարեփոխելով: Ամեն:

**Կցանկանամ ամբողջական լինել, բայց գիտակցեմ, որ միայն Տերը կարող է մեզ ամբողջացնել:**



Եվ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, և կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ»: Ու ես ասացի. «Ահավասիկ ես, ի՞նձ ուղարկիր»: (Ես. 6.8)

## ԻՆՁ ՈՒՂԱՐԿԻՐ

**1** 890-ականների վերջերին, երբ շվեդ միսիոներ էրիկ Լուենդը գգաց, որ Աստված իրեն հրավիրում է որպես միսիոներ գնալ Իսպանիա, անմիջապես հնազանդվեց: Սկզբում նա շատ հաջողութուն չունեցավ, բայց հաստատ մնաց Աստծո կոչին: Մի օր Լուենդը հանդիպեց Ֆիլիպինցի Բրաուլիո Մանիկանին և նրան պատմեց Ավետարանի մասին: Այնուհետև նրանք միասին Աստվածաշունչը թարգմանեցին Ֆիլիպիններեն և հիմնեցին առաջին մկրտական կենտրոնն այդ երկրում: Շատերը ընդունեցին Հիսուսին, որովհետև Լուենդը, Եսայի մարգարեի նման, պատասխանել էր Աստծո կոչին:

Եսայի 6.8-ում Աստված խնդրեց պատրաստակամ մեկին, որ գնա Իսրայել և հայտնի իր դատաստանը ներկայի և հույսը՝ ապագայի համար: Եսային արիաբար ընդունեց հրավերը՝ ասելով. «Ահավասիկ ես, ի՞նձ ուղարկիր»: Այդ պահին նա չմտածեց, որ ինքը նախապես այսպիսի խոստովանութուն էր արել. «ես մարդ եմ, պիղծ շուրթեր ունեմ» (Հմ.5): Նա այդպես վարվեց, որովհետև ականատես էր եղել Աստծո սրբությանը, գիտակցել էր իր մեղավոր լինելն ու տեսել պղծութունից իր մաքրվելը (Հմ.1-7):

Աստված քեզ կանչում է իր համար որևէ բան անելու: Եվ դու հրաժարվում ես: Եթե այդպես է, հիշի՛ր այն բոլոր բաները, որ արել է Աստված՝ Տեր Հիսուսի մահվամբ ու հարությամբ: Նա մեզ օգնելու և առաջնորդելու համար տվել է Սուրբ Հոգին (Հովհ.14.26, 15.26-27) և պատրաստում է մեզ պատասխանելու իր կոչին: Թող որ մենք էլ Եսայու նման պատասխանենք. «Ի՞նձ ուղարկիր»:

**Աղոթք** - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ հնարավորություն ես տալիս Քեզ ծառայելու: Օգնի՛ր որ ընդունեմ այն որպես առանձնաշնորհում ու պատրաստ լինեմ ծառայելու Քեզ: Ամեն:

**Ասված մեզ կանչում է ծառայելու: Ի՞նչն է խանգարում ընդառաջելու Նրա կոչին:**

Քրիստոսի սերը մեզ ստիպում է, որ այս ենք մտածում. եթե մեկը բոլորի համար մեռավ, ուրեմն բոլորը մեռած են: Ուրեմն այսուհետև մենք մարմնապես ոչ ոքի չգիտենք: (Բ.Կորնթ.5.14,16)

## ԿՈՐԻՆԱ ԶՅՈՒՐԱՆՈՑ

**Ե**րուսաղեմի Դեն Հյուբանոցը 2020 թ. հայտնի դարձավ որպես Կորոնա Հյուբանոց, որովհետև կառավարությունը այն տրամադրեց COVID-19-ից բուժվողներին: Այդ դժվար ժամանակներում Հյուբանոցը վերածվել էր ուրախության ու միասնականության հազվագյուտ մի վայրի: Որովհետև մարդիկ թեև վարակվել էին կորոնավիրուսով, սակայն հնարավորություն ունեին միասին ուրախանալու, երգելու, պարելու: Նրանք այդպես էլ արեցին: Մի երկրում, որտեղ քաղաքական ու կրոնական խմբավորումների միջև հսկայական լարվածություն կար, նույն հիվանդությունը հաղթահարողներին համար ստեղծվել էր մի միջավայր, որտեղ մարդիկ միմյանց ընդունում էին որպես ուղղակի մարդ և նույնիսկ բարեկամանում էին:

Միանգամայն բնական է, որ մարդը ձգտում է շփվել իր նմանների, նույն աշխարհայացքը, արժեքներն ու փորձն ունեցողների հետ: Սակայն ինչպես Պողոս առաքյալն է շեշտել, Ավետարանը մարտահրավեր է մարդ արարածների միջև առկա որևէ արգելքների, որոնք ընկալում ենք որպես «սովորական» (Բ.Կորնթ.5.15): Ավետարանի պրիզմայում մենք տեսնում ենք ավելի մեծ պատկեր, քան մեր տարբերություններն են՝ ցավն ու հուսահատությունը կիսելու պատրաստակամություն, Աստվածային սիրո բուժիչ փորձառության կարիք:

«Քրիստոսի սերը մեզ ստիպում է» (Հմ.4) Իր սերն ու առաքելությունը կիսել նրանց հետ, ում Աստված սիրում է մեր պատկերացրածից ավելի:

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ այն պահերի համար, երբ այլոց սիրո և ուրախության միջոցով տեսնում եմ շնչառող լինելու աստիճան գեղեցկության նշույլ: Օգնի՛ր, որ կարողանամ յուրաքանչյուր օր ապրել այդ գիտակցությամբ և ոչ մեկին «չճանաչեմ մարմնապես»: Ամեն:

**Զմոռանանք, որ մենք մենակ չենք, մեզ նման հուսահատ և շիտուսի սիրո կարոն շատերը կան:**

Կամբողջացնեք իմ ուրախությունը, որ նույն միտքն ունենաք, նույն սերն ունենալով՝ միաշունչ նույնը խորհեք: (Փիլ. 2. 2)

## **ՆԵՐԴԱՇՆԱԿ ԶԱՄԵՐԳԻ ՆՄԱՆ**

**Տ**իկնոջս անակնկալ արեցի՝ զնելով իր սիրած երգչուհու համերգի տոմսեր: Տաղանդավոր երգչուհուն նվագակցում էր Կոլորադոյի սիմֆոնիկ նվագախումբը: Ծովի մակերևույթից 1800 մետր բարձրությունից Կարմիր ժայռեր կոչվող տեղանքի բացօթյա ամֆիթատրոնում կատարվեցին դասական և ժողովրդական շատ հայտնի ու սիրված երգեր: Իսկ վերջում հնչած «Հիանալի շնորհք» դասական մեղեդու նոր տարբերակը ուղղակի հիացրեց ներկաներին:

Համերգն ինքնին շատ գեղեցիկ ու զարմանալի բան է. տարբեր երաժշտական գործիքներ միասին այնպես են նվագում, որ ստեղծվում է ձայնային հիասքանչ բնապատկեր: Պողոս առաքյալը հենց այդպիսի ներդաշնակությունն է մատնանշում, երբ գիմում է փիլիպպեցիներին. «Կամբողջացնեք իմ ուրախությունը, որ նույն միտքն ունենաք, նույն սերն ունենալով՝ միաշունչ նո՛ւյնը խորհեք» (Փիլ. 2. 2): Նա չի խնդրում, որ նրանք միանման լինեն, այլ հորդորում է ընդունել խոնարհ կեցվածք և Հիսուսի անձնվեր սերը: Ավետարանը չի վերացնում մեր տարբերությունները, սակայն կարող է վերացնել մեր բաժանումները: Ուշագրավ է նաև, որ որոշ ուսումնասիրողների կարծիքով՝ այս նամակում Պողոսի խոսքերը (հմ.6-11) մի հին երգի նախաբանն են: Սա շատ կարևոր կետ է: Երբ թույլ տանք, որ Սուրբ Հոգին մեզ Հիսուսին նմանեցնելու համար գործի մեր կյանքի տարբեր իրավիճակներում, մենք միասին կդառնանք մի համերգ, որը կարձագանքի քրիստոսանման խոնարհ մի սեր:

**Աղոթք** - Սիրելի՛ Տեր, շնորհակալ եմ, որ փրկում ես ինձ: Թող Դոգիդ դարձնի ինձ Քո պատկերի նման: Իմ կեցվածքով ու գործերով թող ձեռք բերեմ Քո խոնարհությունն ու զոհաբեր սերը, որը կներդաշնակի ինձ մյուս հավատացյալների հետ: Ամեն:

**Եթե ուզում եմք ներդաշնակություն ստեղծել, այլոց կարիքները մերոնցից առաջ դասենք:**

Նրա ճանապարհները բարու ճանապարհներ են, և նրա բոլոր շավիղները՝ խաղաղության: (Առ. 3.17)

### **ԻՍԱՍՏՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ**

**Զ**անգեղ էր մեր եկեղեցական ընտանիքի մոտ հարյուր տարեկան անդամը՝ մի եռանդուն ու աշխատասեր կին, որպեսզի մի քանի լեզվական հարցեր ճշտելուց հետո ավարտեր իր հերթական աշխատանքը: Բայց այդ հարցերին պատասխանելուց հետո ես, իմ սովորության համաձայն, սկսեցի նրան հարցեր տալ կյանքի, աշխատանքի, սիրո ու ընտանիքի մասին: Նրա՝ երկար տարիների փորձառությունն ու կյանքի դասերը իմաստնություն իսկական օրինակներ էին: Այդ օրն էլ ասաց. «Կյանքդ դի՛ր ընթացքի մեջ», և ծիծաղելով պատմեց այն ժամանակների մասին, երբ ինքը մոռացել էր այդպես անել: Նրա պատմությունները համեմատված էին իսկական ուրախություն: Աստվածաշունչը սովորեցնում է, որ իմաստնությունն առաջնորդում է ուրախությանը: «Երանի այն մարդուն, որ իմաստությունը կգտնի, և այն մահկանացուին, որ հանճար կստանա» (Առ.3.13): Իմաստնությունից դեպի ուրախություն տանող ուղին սուրբգրային առաքինություններից մեկն է: «Երբ իմաստությունը մտնի սրտիդ մեջ, և գիտությունը խորոթելի լինի հոգուդ» (Առ.2.10), «Աստված իմաստությունը, գիտությունը և ուրախությունը տալիս է այն մարդուն, որը հաճելի է իր առջև» (Ժող. 2.26): Իսկ Առակների 3-ի 17-ն էլ ավելացնում է. «Նրա ճանապարհները բարու ճանապարհներ են, և նրա բոլոր շավիղները՝ խաղաղության»: Անդրադառնալով կյանքի հարցերին՝ գրող, աստվածաբան Ք.Ս. Լյուիան ասել է. «Ուրախությունը երկնքի լուրջ գործն է»: Այնտեղի ճանապարհը սալահատակված է իմաստնությամբ: Իմ եկեղեցական բարեկամը, որ ապրեց 107 տարի, իր Թագավորի համար այդպես իմաստուն և ուրախ ընթացքով անցավ իր ճամփան:

**Աղոթք** - Սիրո՛ղ Հայր, երբ բռնեմ քարքարոտ ճանապարհ, խնդրում եմ բեր ինձ Քո իմաստնության և ուրախության ճանապարհին: Ամեն:

**Ուրախություն ունենալու համար ընՏրում ենք զանազան ճանադարհներ, բայց լավագույնը իմաստնության ուղին է:**

Ուրեմն, ինչպես որ մեկի հանցանքով բոլոր մարդկանց վրա դատապարտություն եկավ, այնպես էլ մեկի արդարությամբ բոլոր մարդկանց վրա կյանքի արդարություն է գալիս: (Ռոմ. 5.18)

## **ՍԻՐՈ ՄԵԾ ԱՐԱՐՔ**

**Օ**րեգոնի Մալհուր ազգային անտառում մեղրասունկ անունով մի բորբոս է աճում, որը ծառերի արմատների միջոցով տարածվելով, հյուսում է իր սև ցանցը և դադարեցնում ծառերի աճը: Այդ սնկի թելիկները թափանցում են շատ խորը, ծառի արմատի վրա գոյացնում այսպես ասած «ցանց», որը շատ մեծ չափերի կարող է հասնել, երբ սկսված է լինում շատ փոքրիկ մի սերմից:

Աստվածաշնչում անհնազանդություն մի օրինակ կա, որը դարձավ շատ մեծ դատապարտության պատճառ, և հնազանդություն մեկ օրինակ, որը փոխեց այն: Պողոս առաքյալը հակադրել է երկու անհատի՝ Ադամին և Հիսուսին (Հռոմ. 5.14-15): Ադամի մեղքը բոլոր մարդկանց բերեց դատապարտում ու մահ (Հմ.12): Անհնազանդության մեկ արարքով բոլոր մարդիկ դարձան մեղավոր ու Աստծո առաջ դատապարտված (Հմ.17): Սակայն Աստված մարդկության մեղքի հարցը լուծելու միջոց ունեց: Հիսուսի արդար արարքով՝ խաչելության մասով հայթայթեց հավիտենական կյանք և իր առաջ չիտակ կեցվածք: Քրիստոսի սիրո և հնազանդության այս արարքը բավականաչափ զորեղ էր՝ հակադրելու համար Ադամի անհնազանդության արարքին և «կյանք տալու բոլոր մարդկանց» (Հմ.18):

Խաչի վրա իր մահով Հիսուսը հավիտենական կյանք է առաջարկում բոլոր նրանց, ովքեր հավատում են իրեն:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ Հիսուսի միջոցով փրկություն ու հավիտենական կյանք ես շնորհում: Օգնիր, որ կարողանամ Քո փրկության ճամփաների մասին հայտնել ուրիշներին: Ամեն:

**Թեև մեղքի մեջ ընկած ու դատադատության ենթարկված, սակայն Տեր Հիսուսով կարելի է ներում ստանալ և արժանանալ հավիտենական կյանքի:**

Երանելի է այն մարդը, որը հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից: (Սաղմ. 1.1-2)

### **ԱՊՐՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ**

**Ա**նգիր իմանալով իր պապի գործը՝ Փիթըր Քրոֆթը գրեց. «Իմ մեծագույն ցանկությունն է, որ յուրաքանչյուր մարդ, ձեռքը վերցնելով Աստվածաշունչը, անկախ դրա լեզվից, ոչ միայն փորձի հասկանալ, այլև ընդունի այն, որպես ապրող փաստաթուղթ՝ ներկա ժամանակին համապատասխան, վտանգավոր ու հետաքրքրական, ինչպես որ էր հազարավոր տարիներ առաջ»: Փիթըրի պապը՝ Ջ. Ֆիլիպսը երիտասարդ հովիվ էր, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ անգլիերեն թարգմանեց Աստվածաշունչը, որպեսզի այն ավելի հասկանալի ու ըմբռնելի լիներ իր աշակերտների համար:

Ֆիլիպսի աշակերտների նման մենք նույնպես երբեմն դժվարություններ ենք ունենում Աստվածաշունչը կարգալիս: Հնարավոր է, որ ժամանակի, կարգապահության կամ ճիշտ գործիքները չունենալու պատճառով է, որ դժվարանում ենք հասկանալ Աստծո խոսքը, բայց Սաղմոս 1-ն ասում է.«Երանելի է այն մարդը, որը հաճույք է ստանում Տիրոջ օրենքներից» (Հմ.1-2): Աստծո խոսքին ամեն օր առնչվելը մեզ թույլ կտա «զարգանալ», հմտանալ՝ անկախ նրանից, թե ինչ դժվարություն ենք հաղթահարում:

Դու՞ ինչպես ես նայում Աստվածաշունչին: Սաղմոսերգուն ասում է. «Նա նման է ջրերի հոսանքի վրա տնկված ծառի, որն իր պտուղը ժամանակին կտա, իսկ նրա տերևը չի թափվի, ու ամեն բան, ինչ էլ որ անի, կհաջողվի նրան» (Հմ.3): Ժամանակ գտնենք, հենվենք նրան, անհրաժեշտ գործիքներն ունենանք ու խնդրենք Աստծուց, որ օգնի մեզ՝ ստանալու Աստվածաշունչ՝ որպես ապրող փաստաթղթի փորձառությունը:

**Աղոթք** - Սիրող Աստված, օգնիր, որ կարողանամ ունենալ Աստվածաշունչի՝ որպես ապրող փաստաթղթի փորձառությունը: Ամեն:

**Աստծո խոսքը կարդալու խոչընդոտներ մի՞տ էլ կլինեն, սակայն աւխտանքի ժամանակ տրամադրել՝ լսելու Աստծո ձայնը:**

Դրա համար Գիսուսն էլ, որպեսզի բուն իր արյունով ժողովրդին սրբի, դռան դրսի կողմում չարչարվեց: (Եբ. 13.12)

## **ԲԱՆԱԿԱՏԵՂԻՑ ԴՈՒՐՍ**

**Ո**ւրբաթ օրերին մեր գյուղաքաղաքում շուկայի օր էր: Իմ մանկության տարիներին այդտեղ մի վաճառող կար, որի մատները քայքայված էին բորոտության պատճառով: Եվ նա, նստած խտրի վրա, իր վաճառած իրերը գդալով էր վերցնում: Շատերը անտեսում էին նրան, բայց մայրս խղճալով միշտ ինչ-որ բան էր գնում: Ես այդ մարդուն տեսնում էի միայն շուկայի օրերին: Հետո նա անհետանում էր գյուղաքաղաքից:

Իսրայելի հին ժամանակներում բորոտության նման հիվանդությունն ունենալը կնշանակեր ապրել «բանակատեղից դուրս»: Նման մարդկանց համար Իսրայելի օրենքն ասում էր. «Նա պետք է մեկուսացած մնա» (Ղևտ.13.46): Բանակատեղից դուրսը այն վայրն էր, որտեղ այրում էին սպանված ցուլերի դիակները (4.12): Այսինքն՝ բանակատեղից դուրս լինելը անցանկալի բան էր:

Այս կոպիտ իրականությունն է նաև եբրայեցիներին ուղղված նամակում Հիսուսի մասին ասված խոսքերում. «Ուրեմն եկե՛ք բանակատեղից դուրս գնանք նրա մոտ ու նրա նախատինքը մեզ վրա վերցնենք» (13.13): Հիսուսը խաչվեց Երուսաղեմի դռներից դուրս. սա հատկանշական կետ է հրեական զոհաբերության համակարգում:

Ուզում ենք անուն ու պատիվ ունենալ և հանգիստ ապրել: Դրա համար Աստված մեզ կանչում է գնալու «բանակատեղից դուրս», որտեղ ամոթն է բնակվում: Այնտեղ կհանդիպենք բորոտ վաճառողների, աշխարհից մերժվածների: Այնտեղ կգտնենք նաև Հիսուսին:

**Աղոթք** - Տե՛ր Գիսուս, շնորհակալ եմ, որ տարբերություն չես դնում: Շնորհակալ եմ, որ ինձ համար գնում ես բանակատեղից դուրս: Ամեն:

**Սեր Երջադասում հաճախ կարող եմք տեսնել մերժվածների ու կյանքից դուրս մնացածների: Պե՛տ է մոտենալ նրանց՝ հիշելով, որ Գիսուսն էլ բանակատեղից դուրս ցարվեց մեզ համար մեռնելու:**

Մենք կալ եմք, իսկ դու՝ մեր ստեղծիչը, մենք ամենքս քո ձեռքի գործն ենք: (Ես. 64. 8)

## **ԱՍՏԾՈ ՁՈՒԼԱԾ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ**

**Ն**ինտենդո խաղային հարթակի «Զելդայի լեգենդը. ժամանակի օկարինա» տեսախաղը աշխարհի ամենաշատ վաճառված խաղերից է և մեծ ժողովրդականություն է վայելում: Դրա շնորհիվ ծանոթանում ենք օկարինա անունով փողային երաժշտական գործիքին: Այն պատրաստված է կավից, ունի մի քանի անցքեր, որոնք բացվելով ու փակվելով՝ շատ հետաքրքիր ու տպավորիչ երաժշտություն է հնչում:

Օկարինան պատրաստողները կավը թրծել են կրակով ու վերածել հրաշալի մի գործիքի: Այստեղ պարզ երևում է Աստծո ու մեր պատկերը: Եսայի 64. 6, 8-9 -ում ասվում է. «Մենք ամենքս պիղծ դարձանք...Տե՛ր, մեր Հայրն ես դու. մենք կալ ենք, իսկ դու՝ մեր ստեղծիչը, մենք ամենքս քո ձեռքի գործն ենք: Տե՛ր, սաստիկ մի՛ բարկացիր մեզ վրա»: Մենք բոլորս մեղավոր ենք,՝ ասում է մարգարեն, և խնդրում, որ Նա մեզ ձևավորի ու դարձնի Իր համար գործիքներ:

Հենց այդ էլ անում է Աստված: Իր ողորմությունմբ Նա Իր Որդուն՝ Հիսուսին ուղարկեց մեռնելու մեր մեղքերի համար և հիմա ձևավորում ու վերափոխում է մեզ, երբ մենք ամեն օր քայլում ենք Նրա Հոգու հետ: Ինչպես օկարինա գործիքը պատրաստողների շունչն է հոսում դրա մեջ ու վերածվում գեղեցիկ երաժշտության, այնպես էլ Աստված է մեր մեջ գործում իր ձևավորած ու ձուլված գործիքներով, որպեսզի իրագործի Իր սքանչելի կամքը, այն է՝ ավելի ու ավելի նմանվել Հիսուսին (Հռոմ. 8.29):

**Աղոթք** - Դայր, շնորհակալ եմ, որ ինձ փրկում ու վերափոխում ես, որ ավելի նմանվեմ Որդուդ՝ Հիսուսին: Սովորեցրու՛, որ վերափոխվելու համար կարողանամ հանձնվել Դոգուդ: Ամեն:

**Որդես Աստծո ողորմությունն ստացողներ ու վերափոխված գավակներ՝ փոխե՛նք մեր մտածումը, խոսքերն ու գործերը:**



Նրանց պատմիր, թե Տերը քեզ ինչե՛ր արեց ու քեզ ինչպե՛ս ողորմեց: (Մարկ. 5. 19)

## ԽԱՌՆԱՇՓՈԹՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՊԱՏԳԱՍ

**Դ** արլը Հայտնի բեյսբոլ խաղացող էր, որը սակայն թմրան-  
 յութերով քայքայել էր իր կյանքը: Բայց Հիսուսը փրկեց  
 նրան, և արդեն քանի տարի՝ նա ոչ միայն առողջ է, այլև ինքն  
 է օգնում ուրիշներին՝ ազատվել այդ ախտից ու վերադառնալ  
 Հավատի: Նայելով իր անցած ճանապարհին՝ նա Հաստատում  
 է, որ Աստված իր խառնաշփոթությունը դարձրեց պատգամ:  
 Աստծո Համար դժվար բան չկա: Երբ Հիսուսը, Իր աշակերտնե-  
 րի հետ ծովում փոթորկալից գիշեր անցկացնելուց հետո, եկավ  
 Գալիլեայի ծովափ՝ գերեզմանոցի մոտ, Նրան մոտեցավ մի դի-  
 վահար: Հիսուսը քչեց նրա մեջ եղած դևերին և փրկեց մար-  
 դուն: Երբ Հիսուսը նավ էր նստում, որ հեռանա, այդ մարդը  
 ուզում էր Նրա հետ գնալ, բայց Հիսուսը թույլ չտվեց և ասաց.  
 «Գնա՛ քո տունը, քո ընտանիքի մոտ ու նրանց պատմի՛ր, թե  
 Տերը քեզ ինչե՛ր արեց ու քեզ ինչպե՛ս ողորմեց» (Մարկ. 5.19):  
 Մենք այդ մարդուն չենք հանդիպել, բայց Աստվածաշունչը  
 ցույց է տալիս շատ հետաքրքիր բան: Այդ շրջանի մարդիկ  
 սկզբում խնդրում էին Հիսուսին, որ «հեռանա» (Հմ.17), իսկ  
 երբ հաջորդ անգամ եկավ, մեծ բազմություն հավաքվեց (8.1):  
 Հնարավո՞ր է, որ այդ մարդիկ շատացել էին դիվահարին տուն  
 ուղարկելու շնորհիվ: Հնարավո՞ր է, որ այդ մարդը, որ մի ժա-  
 մանակ խավարի իշխանությունն էր, դարձավ միսիոներ-  
 ներից մեկը՝ մարդկանց հաղորդելով Հիսուսի փրկիչ գորու-  
 թյան մասին: Ծշմարտությունը մենք չենք կարող իմանալ, բայց  
 եթե Աստված մեզ արտոնում է, որ ծառայենք Իրեն, ապա Նա  
 կարող է նույնիսկ մարդու խառնաշփոթ անցյալը դարձնել  
 հույսի ու սիրո պատգամ:

**Աղոթք** - Գեղեցիկ Փրկիչ, փառաբանում եմ քեզ Քո հիանալի գորուբյան համար: Ոչ մի մութ բան չի կարող դրան խանգարել:

Օգնիր, որ այսօր կարողանամ քայլել Քո լույսի մեջ: Ամեն:

**Եթե Հիսուսը քեզ ազատել է խավարի իշխանությունից, գնա՛ ու Պատմի՛ր մարդկանց այդ մասին:**

Ես նորն եմ անելու: (Ես. 43.19)

## **ՇԱՐԺԻՐ ՑԱՆԿԱՊԱՏԴ**

**Գ**յուզի եկեղեցական տեղակալը Հէր կարողանում քնել: Երկրորդ համաշխարհային պատերազմի կատաղի օրերին նա ամերիկացի զինվորների մի փոքր խմբի արգելել էր զոհված ընկերներին թաղել եկեղեցու գերեզմանոցի ցանկապատից ներս, որովհետև այնտեղ թույլատրված էր միայն եկեղեցու անդամների հուղարկավորումը: Եվ նրանք իրենց սիրելիներին թաղեցին ցանկապատից դուրս: Հաջորդ առավոտյան զինվորները, չգտնելով իրենց զինվորների գերեզմանները, շփոթված դիմեցին եկեղեցականին: Վերջինը բացատրեց, որ ինքը զղջացել է իր արարքի համար և գիշերը տեղափոխել է ցանկապատը:

Եթե ուզենք, Աստված կարող է նոր ընթացք տալ մեր կյանքի մարտահրավերներին: Այդ է Եսայի մարգարեի պատգամը՝ Իսրայելի ճնշված ժողովրդին: Կարմիր ծովից ազատվելու համար նրանք պետք է ոչ թե ետ նայեին, այլ փոխեին հայացքի ուղղութիւնը և տեսնեին Աստծո գործած նոր հրաշքներն ու բոցավառվող նոր ճամփաները: Նա հորդորեց. «Առաջվա բաները մի՛ հիշեք, հինը մտքներդ մի՛ բերեք, քանզի ես նորն եմ անելու» (Ես. 43.18-19):

Կասկածների ու մարտահրավերների ժամանակ Նա է մեր հույսի աղբյուրը: «Ես ջուր եմ տալու անապատին և անջրդի երկրին՝ գետեր, խմեցնելու համար իմ ընտրյալ ազգին» (Հմ.20),- ասում է Նա:

Նոր տեսիլքով թարմացած՝ մենք էլ կարող ենք տեսնել Աստծո նոր ուղղութիւնները մեր կյանքում: Հետո նոր հողի վրա թող որ նոր քայլեր անենք ու արիաբար Իրեն հետևենք:

**Աղոթք** - Ողորմա՛ծ Աստված, շնորհակալ եմ, որ կյանքիս հանդեպ մի նոր կեցվածք ես տալիս: Նորոգի՛ր տեսողությունս, որ կարողանամ տեսնել Քեզ հետ քայլելու նոր ճամփաները:  
Ամեն:

**Մեր կյանքի համար Աստված օալիս է նոր հնարավորություններ: Մեզ մնում է ընդունել դրանք ու ընթանալ դրանցով:**

Որովհետև մենք Աստու առաջ Քրիստոսի անուշ բույրն ենք՝ փրկվածներ  
րի թե կորածների մեջ: (Բ.Կորնթ. 2.15)

### **ՀԻՍՈՒՄԻ ԱՆՈՒՇ ԲՈՒՅՐԸ**

**Մ**անրթացել էի մի ազարակապանի հետ, որը Տելխասի նա-  
հանգի Լոմեստա քաղաքից էր: Նրա երկու թոռնիկները  
դարձել էին իմ լավ բարեկամները: Մենք հաճախ էինք միասին  
գնում քաղաք, և ես ու թոռները հետևում էինք, թե նա ինչ-  
պես է շփվում մարդկանց հետ: Իր ծանոթներին գիտեր անուն-  
ներով, ծանոթ էր նրանց պատմություններին: Եվ հանդիպելով  
մեկին հարցնում էր հիվանդ երեխայի, մյուսին՝ ընտանեկան  
այլ հարցի մասին: Քաջալերական խոսքեր էր ասում, նույնիսկ  
աղոթում էր, եթե դա էր այդ պահի ճիշտ լուծումը: Ես երբեք  
չեմ մոռանա այդ մարդուն: Նա ոչ մեկին չէր պարտադրում իր  
հավատը, բայց միշտ լավ տպավորություն էր գործում:

Այդ ազարակապանն ուներ այն, ինչը Պողոսը պիտի կոչեր  
«Քրիստոսի անուշ բույր» (Բ.Կորնթ. 2.15): Աստված նրան օգ-  
տագործում էր «իր գիտություն բույրը ամեն տեղ հայտնվելու»  
համար (Հմ.14): Նա հիմա Տիրոջ հետ է, բայց իր բույրը մնում  
է Լոմեստայում:

Բրիտանացի գրող, աստվածաբան Ք. Լյուիսը գրում է.  
«Չկան սովորական մարդիկ ու պարզապես մահկանացուներ»:  
Այլ խոսքով՝ յուրաքանչյուր մարդկային առնչություն հավի-  
տենական հետևանքներ ունի: Մենք ամեն օր տարբեր մարդ-  
կանց ենք հանդիպում մեր շրջապատում, հաճախ էլ նրանց  
կյանքում ու գործերում հավատքի լուռ վկայություն, ազնիվ  
կեցվածք կամ քաջալերական խոսքեր ենք տեսնում: Պետք չէ  
թերագնահատել քրիստոսանման կյանքի ազդեցությունը ու-  
րիշների վրա:

**Աղոթք** - Սուրբ Հոգի, լցրու՛ ինձ սիրով, բարությանը և ուրիշնե-  
րի հանդեպ ազնվությամբ: Ամեն:

**Որդես Քրիստոսին հավասացողներ ու Աստու զավակներ՝ ի՞նչ  
ազդեցություն ենք գործում մեր Երջադասի վրա: Արժի մտածել:**

«Չվախեմա նրանցից, - ասում է Տերը, - քանզի ես քեզ հետ եմ՝ քեզ փրկելու համար»: (Եր.1.8)

## **ԱՆԿՈՏՐՈՒՄ ՀԻՍՈՒՄՈՎ**

**Ե**րկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ ամերիկացի Լուի Զամպերինի ղեկավարած ռազմական ինքնաթիռն ընկավ ծովը: Տասնմեկ հոգանոց անձնակազմի ութ անդամները զոհվեցին, իսկ երեքը փրկարար նավակներով մոտ երկու ամիս օվկիանոսի ջրերում պաշտպանվում էին փոթորիկներից, շնածկներից ու թշնամական կրակոցներից: Վերջապես նրանց հաջողվեց հասնել ճապոնական մի կղզի, որտեղ ձերբակալվեցին ու բանտարկվեցին: Երկու տարի Լուին խոշտանգվեց ու ծեծվեց՝ որպես պատերազմական հանցագործ: Նրա պատմությունը դարձել է «Անկոտրումը» գրքի թեման:

Երեմիան էլ Աստվածաշնչի անկոտրում հերոսներից մեկն է: Նա դիմակայեց թշնամու չարություններին (Եր.11.19), ծեծվեց ու արգելափակվեց (Հմ. 20.2), երկար օրեր անցկացրեց բանտախցում (Հմ. 37.15), նրան պարաններով իջեցրին գուլբի մեջ, որտեղ ջուր չկար, միայն տիղմ էր (Հմ.38.6): Երեմիան դիմացավ, որովհետև Աստված խոստացել էր մնալ իր հետ ու փրկել իրեն (Հմ.1.8): Աստված այդպիսի խոստում մեզ էլ է տալիս՝ ասելով. «Քեզ չեմ թողնի ու երեսից չեմ գցի» (Եր.13.5): Աստված Երեմիային կամ մեզ չի խոստացել զերծ պահել փորձանքներից, բայց խոստացել է օգնել այդ փորձանքների մեջ:

Լուին անդրադարձավ Աստծո այդ պաշտպանությունը և պատերազմից հետո իրեն նվիրեց Հիսուսին: Նա ներեց իրեն առևանգողներին և նույնիսկ ոմանց առաջնորդեց դեպի Քրիստոսը: Նա հասկացել էր, որ դժվարությունները Հիսուսի հետ դիմադրավելով՝ մենք կդառնանք անկոտրում:

**Աղոթք** - Տեր Հիսուս, Դու ավելի հզոր ես, քան որևէ փոթորիկ: Խնդրում եմ փրկի՛ր ինձ այն փոթորկից, որ ես այսօր եմ դիմագրավում: Ամեն:

**Եթե նեղություններ ու ցավեր ունես, խնդրի՛ր Տեր Հիսուսից, որ քեզ հե՛տ լինի ու փրկի:**

Հիսուսը վերև նայեց ու նրան ասաց. «Զաքեո՛ս, շուտ արա իջի՛ր, որովհետև այսօր պետք է քո տանը լինեմ»։ (Ղուկ. 19.5)

## **ԱՆԱԿՆԿԱԼ ԳՅՈՒՐԸ**

**Զաքը միայնակ մարդ էր։ Երբ նա քայլում էր քաղաքի փողոցներում, թշնամական հայացքներ էր զգում։ Շուտով, սակայն, նրա կյանքում շրջադարձ եղավ։ Եկեղեցու հայրերից Կրեմենտ Ալեքսանդրացին գրում է, որ Զաքը եղել է Կեսարիայի եկեղեցու քրիստոնյա երևելի առաջնորդ ու հովիվ։ Այո՛, խոսքը նույն մարդու՝ մաքսավոր Զաքեոսի մասին է, որը կարճահասակ լինելու պատճառով չէր տեսնում բազմության միջով քայլող Հիսուսին և բարձրացավ ժանտաթզենու վրա (Ղուկ.19.1-10)։**

Ի՞նչը նրան դրդեց բարձրանալ ծառը։ Մաքսավորները դավաճան էին համարվում, որովհետև հռոմեական կայսրությանը ծառայելու համար իրենց ժողովրդի վրա ծանր տուրքեր էին դնում։ Իսկ Հիսուսը այդպիսի մարդկանց էր ընդունում։ Հնարավոր է՝ Զաքեոսը, մտավախություն ունենալով, թե Հիսուսը իրեն կընդունի, քանի որ չէր տեսնում իրեն բազմության մեջ (հմ.3), բարձրացավ ծառը։ Իսկ Հիսուսը փնտրում էր Զաքեոսին։ Նա վերև նայեց ու ասաց. «Զաքեո՛ս, շուտ արա իջի՛ր, որովհետև այսօր պետք է քո տանը լինեմ» (հմ.5)։ Տեր Հիսուսը անհրաժեշտ համարեց այդ մարդուն հյուրընկալվելը։ Կարելի է պատկերացնել, թե ինչ անակնկալ է, երբ աշխարհի Փրկիչը ցանկանում է ժամանակ անցկացնել մերժված մեկի հետ։

Եթե մեր սրտերը, հարաբերություններն ու կյանքերը բարեփոխման կարիք ունենան, մենք էլ Զաքեոսի նման կարող ենք հույս ունենալ, որովհետև եթե մենք Հիսուսին դիմենք, Նա երբեք չի մերժի։ Նա կարող է նորոգել ամեն կոտրված ու կորսված բան՝ մեր կյանքին տալով նոր իմաստ ու նպատակ։

**Աղոթք** - Տե՛ր, շնորհակալ եմ, որ փնտրում ես ինձ, երբ կորած եմ լինում մեղքերի մեջ և փոխում ես խանգարված կյանքս։

Ամեն։

**Եթե մեր կյանքը խանգարված է ու մերժումներով լի, դիմենք Տեր Հիսուսին, որ փրկի մեզ։**

Ականջ մի՛ դիր սուտ լուրերին: (Ել. 23.1)

## **ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՐ ԵՎ ԶԳՈՆՈՒԹՅՈՒՆ**

**2** 018-ի բեյաբուրի առաջնությունը ժամանակ Ձիկազո Քաբուի մարզիչը գնդակը նետեց մարզիկներին մոտ նստած տղաներից մեկին: Բայց նրա փոխարեն գնդակը բռնեց մեկ ուրիշ մարդ: Այդ պահի տեսագրությունը արագորեն տարածվեց համացանցում: Սոցիալական ցանցերում այն դիտարկվեց որպես «կոպիտ քայլ», որովհետև մարզիկ չգիտեին նախապատմությունը: Բանն այն է, որ նախապես այդ մարդն օգնել էր պատանուն իրենց կողմն եկող գնդակը բռնելու հարցում, և պայմանավորվել էին բռնել միմյանց ուղղված գնդակները: Դժբախտաբար մեկ օր տեքս, մինչև կբացահայտվեք ճշմարտությունը, և այդ ընթացքում մարզիկ հասցրին զրպարտել անմեղ մարդուն:

Հաճախ մենք էլ ենք կարծում, թե տիրապետում ենք ամբողջ տեղեկատվությանը, սակայն իրականում կարող ենք միայն որոշակի մասեր իմանալ: Իսկ մեր օրերում շատ տարածված «մարդկանց արատավորելու», «միմյանց վրա բիծ գտնելու» գործում այդպիսի տեսահատվածներով կամ ընդհանուր խոսքից կտրված արտահայտություններով շատ հեշտ է մարդկանց դատելը՝ առանց խորանալու ու պատմությունը տեղյակ լինելու: Բայց Աստվածաշունչը հորդորում է. «Ականջ մի՛ դիր սուտ լուրերին» (Ել. 23. 1): Մարդկանց մեղադրելուց առաջ հարկավոր ամեն ինչ անել ճշմարտությունը բացահայտելու և վստահ լինելու համար, որ սուտը չենք տարածում: Եթե ուզում ենք ինքներս մեզ պաշտպանել, «մեծամասնությունը հետևելով՝ չար գործերի հետևից չընկնենք» (Հմ. 2):

**Աղոթք** - Դայր, այս օրերին արագորեն տարածվող լուրերի մեջ դժվար է գտնել ճշմարիտը: Օգնի՛ր, որ լսեմ, ուշադրություն դարձնեմ ու խոսեմ միայն ճշմարտությունը: Ամեն:

**Կոթասահի, որ մարդիկ մեզ գրդարեն ու վնասեն: Բայց դեմք է գգույժ լինել և Աստու սված դասվիրանի համաձայն՝ միայն ձեմարտությունը հայցնել:**

Գիտենք, որ Աստուծոն սիրողներին բոլոր բաները գործակից են լինում: (Յոհ. 8.28)

## **ԾԻՇՏ ՀԱՍԿԱՆԱԼ**

«Ալեքսա», «Սիրի» և այլ ձայնային հավելվածներ, որ ներդրված են մեր «խելացի գործիքներում», հաճախ սխալ են հասկանում մեր ասածները: Օրինակ, վեցամյա մի երեխա իրենց տան սմարթ գործիքի հետ խոսել էր բլիթների ու տիկնիկների տան մասին: Շատ չանցած՝ մայրը մի նամակ ստացավ, որով հաստատում էին, որ շուտով իրենց կհասնի յոթ կգ բլիթ և 170 դոլար արժեքով տիկնիկների տունը: Նույնիսկ խոսող թուլթակին, որի տերը երբևէ համացանցով բան չէր գնել, հաջողվել էր պատվիրել նվերի տուփերի մի մեծ կապոց: Մեկ ուրիշն էլ գործիքին խնդրել էր միացնել հյուրանոցի լույսը, ինչին ի պատասխան լսել էր. «Կարկանդակի սենյակ չկա»:

Մինչդեռ սխալ հասկանալու խնդիր չկա, երբ խոսում ենք Աստծո հետ: Նա երբեք չի շփոթում, որովհետև մեզնից լավ գիտի մեր սրտերը: Հոգին քննում է մեր սրտերը և հասկանում Աստծո կամքը: Պողոս առաքյալը հոռոմեացիներին ասաց, որ Աստված խոստանում է իրագործել Իր բարի նպատակը՝ մեզ աճեցնել և Իր Որդու նման դարձնել (Հռոմ. 8.28): Նույնիսկ երբ մենք չենք իմանում, թե աճելու համար ինչի կարիք ունենք, Հոգին, Աստծո կամքին համաձայն, աղոթում է մեզ համար (Հմ. 26-27):

Տագնապում ես, թե ինչպես արտահայտես մտքերդ: Չգիտե՞ս՝ ինչ և ինչպես աղոթել: Ինչ որ կարող ես, ասա՛ քո սրտից: Հոգին կհասկանա ու կկատարի Աստծո կամքը:

**Աղոթք** - Շնորհակալ եմ, Հայր, որ գիտես իմ սիրտը: Դրա և շատ այլ բաների համար սիրում եմ Քեզ: Օգնի՛ր՝ խոհերս հայտնել Քեզ և վստահ լինել, որ կհասկանաս: Ամեն:

**Քաջալերվի՛ր, որովհետև Աստված գիտի ու լավ է հասկանում Քեզ ու քո վիճակը:**

Դուք պիտի ելնեք ու խայտաք՝ ինչպես կապից արձակված հորթեր: (Մաղ. 4. 2)

## **ԶՎԱՐՈՒՄՆԱԼ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՋ**

**Ե**րրորդ սերնդի ազարակապան Ջիմը շատ էր ազդվել, երբ կարդացել էր. «Ձեզ՝ իմ անունից երկյուղ կրողներիդ համար... դուք պիտի ելնեք ու խայտաք ինչպես կապից արձակված հորթեր» (Մաղ. 4. 2): Եվ աղոթել էր՝ ստանալու հավիտենական կյանքի Հիսուսի առաջարկը: Հիշելով փակ տարածքներից դուրս գալուց առաջ հորթերի ուրախ ցատկոտուժները՝ Ջիմը հասկացել էր Աստծո խոստացած ճշմարիտ ազատությունը: Այս մասին պատմեց Ջիմի աղջիկը, երբ խոսում էինք Մաղաքիա 4-ում նշված պատկերի մասին, որում մարգարեն զանազանում է Աստծո անունը հարգողներին ու իրեն հավատարիմ մնացողներին և միայն իրենց մասին մտածողներին (4.1-2): Այն ժամանակ, երբ շատերը, այդ թվում նաև կրոնական առաջնորդները, արհամարհում էին Աստծուն ու Նրա տված հավատարիմ կյանքի չափանիշները, մարգարեն Իսրայելի ժողովրդին քաջալերում էր հետևել Աստծուն (1. 12-14, 3. 5-9): Նա կոչ էր անում հավատքով ապրել դալիք ժամանակի համար, երբ Աստված կատարելու է այդ երկու խմբերի վերջնական զանազանումը: Մաղաքիան օգտագործել է ազատ արձակված հորթերի պատկերը՝ նկարագրելու համար այն ուրախությունը, որ հավատարիմ խումբը պիտի ունենա, երբ «արդարություն արեգակը պիտի ծագի, և բժշկություն պիտի լինի նրա շողերի մեջ» (4. 2): Տեր Հիսուսն այս խոստման գերազույն իրագործումն է: Մի օր Աստծո վերանորոգած ու վերափոխած ստեղծագործության մեջ մեք կատանանք այդ ազատությունը: Ի՛նչ սքանչելի ու աննկարագրելի է լինելու այդ ազատության պարզևած ուրախությունը:

**Աղոթք** - Տեր Հիսուս, օգնիր, որ կարողանամ ուրախությամբ ապրել՝ հիշելով միայն Քո տված ազատությունը: Ամեն:

**Եթե ունես Հիսուսի շնորհիվ ստացած ազատության փորձ, մտաբերի՛ր մի դասկեր, որը կներկայացնի այդ ուրախությունը:**



եղբայրներ, ինչ որ... առաքինություն է և թե գովասանք է, այն մտածեցեք: (Փիլ.4.8)

### «ԻՆՉ ՈՐ»-ՆԵՐԸ

Ամեն ուրբաթ մեր ընտանիքի դիտած ազգային լուրերը եզրափակվում են տրամադրությունն բարձրացնող մի պատմությունով: Որպես հակադրություն մնացած լուրերի՝ դա նման է լինում մաքուր օդ շնչելու: Վերջին ուրբաթօրյա լավ լուրն այն մասին էր, որ լրատվական բաժնի աշխատակիցը լիովին բուժվել է COVID-19-ից և պատրաստվում է արյուն հանձնել՝ օգնելու համար ուրիշներին: Թեև մասնագետները դեռ վստահ չէին, որ հակամարմինները օգտակար էին այդ առումով: Այն ժամանակ, երբ մեզանից շատերը անօգնական էին և պատրաստ չէին նույնիսկ արյուն տալ, այդ մարդը մտածեց, որ իր տվածը շատ փոքր բան էր հավանական արդյունքի հասնելու ճանապարհին:

Այդ լուրից հետո ես ու ընտանիքս քաջալերվեցինք և հույսով լցվեցինք: Դա «ինչ որ»-ների զորությունն է, որ Պողոս առաքյալը նշում է փիլիպպեցիներին ուղղված նամակի 4-ում. «Ինչ որ ճշմարիտ է, ինչ որ պարկեշտ, ինչ որ արդար, ինչ որ սուրբ, ինչ որ սիրուն, ինչ որ բարի անուն» (Հմ.8): Անշուշտ, Պողոսի մտքում չկար արյուն նվիրելու գաղափարը: Սակայն որևէ կարիքավորի համար զոհողություն անելը, այլ կերպ ասած՝ քրիստոսանման վարվելակերպը նրա համար պարտադիր պայման էր:

Այդ հուսադրող լուրը իր ամբողջական ազդեցությունը չէր թողնի, եթե սփռված չլիներ ուրբաթօրյա լուրերից հետո: Որպես Աստծո բարության վկաներ՝ մենք կարող ենք նայել ու լսել մեր շուրջը եղող «ինչ որ»-ները և հետո այդ մասին պատմել ուրիշներին, որպեսզի նրանք էլ քաջալերվեն:

**Աղոթք** - Հայր, գիտեմ, որ բոլոր գերազանց ու փառաբանության արժանի բաների հետևում Դու ես կանգնած: Սիրում եմ Քեզ: Ամեն:

**Եթե գիտես «ինչ որ»-ի մասին որևէ դասնություն, հայցնի՛ր այն ուրիշներին:**

Յերեկը Տերն իր ողորմությունը հաստատեց. գիշերը՝ նոր օրհներգություն. ես աղոթում եմ Աստծուն իմ կյանքի համար: (Սաղմ. 41.9)

## **ԱՍՏՎԱԾ ԳԻՏԻ՝ ԻՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԶԳՈՒՄ**

**Ս**իրան մտահոգված էր իր որդու հիվանդությունից և անզառնար աղոթում էր: Բայց նրան տանջում էր կասկածը, թե զուցե Աստծո համար իր հավատը բավարար չէ, որովհետև աղոթելիս ինքն անընդհատ լալիս է:

«Զգիտեմ՝ Աստված ինչ է մտածում,- ասացի նրան,- բայց գիտեմ, որ Նա կարող է տեսնել ու զգալ մեր ապրումները»: Ու ես էլ Սիրայի հետ աղոթեցի նրա որդու համար:

Աստվածաշնչում Աստծո հետ պայքարող մարդկանց բազմաթիվ օրինակներ կան: 41-րդ սաղմոսի հեղինակը, օրինակ, շատ է ուզում զգալ Աստծո խաղաղությունն ու հզոր ներկայությունը: Նա ընդունում է , որ հուսահատված է: Նրա ներքին կռիվը մակրնթացության ու տեղատվության նման է՝ ինքնավստահ փառաբանությունից մինչև Աստծո հավատարմության մասին հիշեցում: Քաջալերելով իր հոգին՝ սաղմոսերգուն գրում է. «Հույսդ դի՛ր Աստծու վրա, օրհներգի՛ր նրան, իմ անձը փրկողն Աստված է» (Հմ.12):

Աստված մեզ ձևավորել է Իր պատկերով ու զգացումներով: Ուրիշների համար թափած մեր արցունքները սիրո ու կարեկցանքի արտահայտություն են, և ոչ անպայման հավատի պակաս: Մենք կարող ենք Աստծուն մոտենալ մեր վերքերով կամ հին սպիներով, որովհետև Նա գիտի, թե մենք ինչ ենք զգում: Յուրաքանչյուր աղոթք, լինի այն լուռ, հեկեկալով կամ բարձրաձայն ասված, ցույց է տալիս մեր վստահությունը Իր հանդեպ

**Աղոթք** - Անփոփոխ Դայր, շնորհակալ եմ, որ գիտես անընդհատ փոփոխվող զգացումներս: Ամեն:

**Չաճախ դժվար է լինում Ասծո հետ անկեղծ լինել՝ մեր մտածողից կամ դժվարին զգացումների դասճառով: Սակայն դեռ է հավասար, որ Աստված մեզ շատ լավ գիտի:**

Ինձ մո'տ եկեք, բոլո՛ր հոգնածոներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: (Մատթ. 11.28)

## **ԼԱՎ ՀԱՆԳՍԱՆԱԼ**

**Կ**ես գիշերից երկու ժամ էր անցել, բայց ես դեռ չէի կարողանում քնել: Անկողինս շտկելով՝ փորձեցի մի կերպ քնել կամ համացանցում գտնել որևէ օգտակար խորհուրդ: Բայց ընդհակառակը՝ գտա այնպիսի բաներ, որոնք չպետք է անել, եթե քնել ես ուզում. «Երեկոյան մի՛ քնիր, սուրճ մի՛ խմիր, երկար մի՛ աշխատիր»: Քիչ ավելի կարդալով՝ նոր խորհուրդներ գտա, օրինակ, որ չի կարելի ուշ ժամի էկրանին նայել, նաև գրել: Այսինքն՝ եթե խոսքը լավ հանգստանալու մասին է, արգելված բաների մի ամբողջ ցանկ կա:

Հին Կտակարանում Աստված շաբաթ օրը հանգստանալու համար մի շարք կանոններ էր հաստատել: Նոր Կտակարանում Հիսուսը նոր ձև առաջարկեց. Նա Իր աշակերտներին կոչ արեց կանոններին հետևելու փոխարեն՝ Իր հետ հարաբերվել. «Ինձ մո'տ եկեք, բոլո՛ր հոգնածներ ու բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ» (Մատթ. 11.28): Մինչ այդ Հիսուսը մատնանշում է. «Ամեն բան ինձ իմ Հորից տրվեց, և Որդուն ոչ ոք չի ճանաչում, բացի Հորից, և Հորը ոչ ոք չի ճանաչում, բացի Որդուց, և ում որ Որդին կուզենա հայտնել» (Հմ.27): Հիսուսի վայելած հայրական օգնության ակնկալիքը մենք էլ կարող ենք ունենալ:

Երբ մենք իմաստնությունը զանց առնենք ժամանցի որոշ բաներ, որոնք կարող են խանգարել մեր քույր, կրնդունենք Քրիստոսով հանգստանալու կոչը, որն ավելի շատ նշանակում է Նրա հետ հարաբերվել, քան կանոնների ենթարկվել: Ես անջատեցի հեռախոսս ու ծանրացած գլուխս դրեցի Տեր Հիսուսի «հրավերի» բարձին:

**Աղոթք** - Տեր Հիսուս, շնորհակալ եմ, որ Քեզ հետ

հարաբերվելու միջոցով հանգստանալու ես կոչում: Ամեն:

**Հոգնությունն ու ծանրաբեռնվածությունը մեր ամենօրյա կյանքի մաս են կազմում: Սակայն մեր Տեր Ասվածը մեզ կանչում է Իր մոտ՝ հանգստացնելու և մխիթարելու:**

Հավիտենական Աստվածը, երկրի սահմանները հաստատող Աստվածը ո՛չ քաղց է զգում և ո՛չ էլ հոգնում: (Ես. 40. 28)

## **ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ**

**Մ**ի մեծ շուկայի ճաշարանում լարված նստած էի, որովհետև աշխատանքիս ժամկետը լրանում էր, չէի հասցնում: Երբ վերցրի սենդվիչն ու սկսեցի ուտել, նկատեցի, որ շուրջս բոլորն էին շտապում: Մտածեցի, թե որքան սահմանափակումներ ունենք մենք՝ ժամանակի, մտքի ու կարողություն:

Որոշեցի անելիքներիս ցանկը պատրաստել՝ նախապատվություններ տալով շտապ գործերիս: Բայց մինչ կվերցնեի գրիչը, մտածեցի Նրա մասին, որն անսահման է ու անսահմանափակ և իր բոլոր ուզածները կատարում է շատ հեշտ:

Եսային ասում է, թե Աստված կարող է «իր ափով չափել ջրերը, թզով՝ երկինքը և քլով՝ համայն երկիրը» (Ես. 40.12), երկնքի աստղերը անունով է կոչում և նրանց ուղի տալիս (Հմ.26), ճանաչում է երկրի իշխաններին և հսկում նրանց գործերը (Հմ. 23), ազգերը նման են «դուլլի մի կաթիլին, նույնն են, ինչ փոշեհատիկը՝ կշեռքի վրա» (Հմ.15): Նա հարցնում է. «Արդ, ո՞ւմ կուզենայիք նմանեցնել ինձ, որին զուգահավասար լինեի» (Հմ.25) և Եսային պատասխանում է. «Հավիտենական Աստվածը, երկրի սահմանները հաստատող Աստվածը ո՛չ քաղց է զգում և ո՛չ էլ հոգնում» (Ես. 40. 28):

Ճնշումն ու լարվածությունը լավ չեն մեզ համար, բայց մեզ կարևոր դաս են տալիս: Անսահմանափակ Աստվածը նման չէ մեզ: Նա իրագործում է այն ամենը, ինչ ցանկանում է: Ես, վերջացնելով նախաճաշս, մի պահ նստեցի ու լուռ Տիրոջը փառաբանեցի:

**Աղոթք** - Երկնավոր Հայր, Դու չունես սահմանափակումներ և իրագործում ես Քո տված բոլոր խոստումները: Ամեն:

**Միտ** էլ աշխատանքային դարձակադասությունների ժամկետային սահմանափակումները կձմեցն մեզ, բայց կարևոր է մի դրան կանգ առնել ու փառաբանել Աստծուն:

Իսրայելի փառքը վերացավ, որովհետև Տիրոջ տապանակը գերվեց: (Ա.Թագ.4.22):

### **ԻՔԱՐՈՂԻ ՓԱԽՈՒՄՍԸ**

«Քնկոտ խոռոչի լեզենդ»-ում Վաշինգտոն Իրվինգը պատմում է Իքաբող Գրեյն անունով ուսուցչի մասին, որը ցանկանում է ամուսնանալ Կատրինա անունով մի գեղեցիկ աղջկա հետ: Պատմության բանալին անգլուխ ձիավորն է, որը թափառում է շրջակա գյուղաքաղաքներում: Մի գիշեր Իքաբողը տեսնում է ուրվականի տեսքով այդ ձիավորին և վախեցած փախչում: Ընթերցողի համար պարզ է, որ այդ «ձիավորը» իրականում Կատրինայի փեսացուներից մեկն էր, որի հետ էլ հետագայում նա ամուսնանում է:

Իքաբող անունը Աստվածաշնչում էլ կա, և դարձյալ տխուր պատմություն ունի: Երբ իսրայելցիները կռվում էին փղշտացիների դեմ, Աստծո ուխտի տապանակը տարան իրենց բնակավայրը՝ մտածելով, որ դրանով իրենք կկարողանան հաղթել: Սակայն դա սխալ քայլ էր. ուխտի տապանակը գրավվեց ու Հեղիի երկու որդիները՝ Օփինին ու Փենեսերը, սպանվեցին (Ա.Թագ. 4.17): Մահացավ նաև Հեղի քահանան (Հմ.16): Փենեսեսի հղի կինը, իմանալով ամուսնու մահվան մասին՝ «լաց եղավ ու ծնեց, քանզի երկունքի ցավերը պատել էին նրան» (Հմ.19): Մահից առաջ նա նորածնին անվանակոչեց Իքաբող, որը բառացի նշանակում է «անպատիվ», որովհետև կնոջ ասելով՝ «Իսրայելի փառքը վերացավ» (Հմ.22):

Սակայն, բարեբախտաբար, Աստված շատ ավելի մեծ պատմություն էր պատրաստում: Ի վերջո Հիսուսով հայտնվելու էր Նրա փառքը, որի մասին Իր աշակերտներին ասաց. «Այն փառքը, որ ինձ տվեցիր, ես նրանց տվեցի» (Հովհ. 17.22):

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, շնորհակալ եմ, որ Տեր Հիսուսի միջոցով հայտնել ես Քո փառքը: Հիշեցրու՛ ինձ, որ Դու միշտ ինձ հետ ես: Ամեն:

**Դժվարության, ցավի ու նեղության ժամանակ հուսահատված ուզում եմ փախչել, սակայն Ասված Իր փառքով հայտնվում և դաժարանում է մեզ:**

Նորոգվեցե՛ք ձեր մտքի նորոգութեամբ: (Յուդ. 12.2)

## **ՈՒՐԱՆՈՒԹՅԱՄԲ ՍՈՎՈՐԵԼ**

Նդկաստանի Մայուր քաղաքում գնացքի վագոններում տեղակայված մի դպրոց կա: Տեղի մանկավարժները, տեսնելով չգործածվող երկու վագոնները, դիմել են երկաթուղային ընկերությունը, որպեսզի թույլտվություն ստանան դրանք վերածնվորելու ու դպրոց դարձնելու: Այնուհետև այդ դատարկ մետաղյա վագոններում տեղադրել են աստիճաններ, ներսում անցկացրել լույս ու հովացման համակարգ, ներսից ու դրսից ներկել են պատերը, դրանք զարդարել գունավոր որմնանկարներով: Գրասեղանների տեղադրումից հետո վագոնները դարձել են իսկական դասասենյակներ, ուր հաճախում է վաթսուն աշակերտ:

Ավելի հիանալի արդյունք կստացվի, եթե մենք հետևենք Պողոս առաքյալի խորհրդին, երբ ասում է. «Նորոգվեցե՛ք ձեր մտքի նորոգությամբ» (Հռոմ. 12. 2): Երբ արտոնենք, որ Սուրբ Հոգին մեզ անջատի աշխարհից ու նրա առաջարկած ուղիներից, մեր խորհուրդներն ու կեցվածքը կսկսեն փոխվել: Մենք կդառնանք ավելի սիրող, ավելի հուսառատ և կլցվենք ներքին խաղաղությամբ (Հմ.8.6): Վերափոխման այս ընթացքը շարունակական է ու հաճախ գնացքի ճամփորդությունից շատ ավելի տևական սկիզբ ու ընթացք է պահանջում, և դա էլ օգնում է մեզ հասկանալ, թե Աստված ինչ է ուզում մեր կյանքի համար: Մեզ տանում է մի տեղ, որպեսզի «մենք քնենք, թե ինչ է Աստուծո կամքը» (12.2): Իսկ իր կամքն իմանալը հնարավոր է, որ պարունակի առանձնահատկություններ կամ՝ ոչ, բայց միշտ էլ ներգրավում է մեզ իր նկարագրով ու աշխարհում իր կատարած գործով:

**Աղոթք** - Սիրելի՛ Հայր, հրավիրում եմ Քեզ՝ փոխակերպելու միտքս: Շնորհակալ եմ բոլոր այն բաների համար, որոնք հնարավոր են դառնում, երբ հանձնվում եմ Քեզ: Ամեն:

**Վսահաբար, մեր կյանքում ունենի վերափոխման կարոս մասեր: Ուսի կասարյալ վսահությամբ հանձնվենի Նրա կամքին:**

Իմ սրտի՛ Աստված, հավիտյան ինձ բաժին ընկած Աստված:  
(Սաղմ. 72. 26)

## **ԻՆՉԻ ԿԱՐԻՔ ՈՐ ՈՒՆԵՍ**

**Ն**ստելով սեղանի մոտ՝ հայացք նետեցի շուրջս տիրող ուրախ իրարանցմանը: Բոլոր հարազատներս հավաքվել էին և շատ երջանիկ էին ընտանեկան այդ հանդիպման, նաև համեղ ուտեստների համար: Ես նույնպես վայելում էի այդ ամենը, սակայն մի բան ցավ էր պատճառում ինձ. ես միակ կիսն էի, որ չունեի իմ ընտանիքն ու զավակները:

Ինձ նման բազմաթիվ միայնակ կանայք կան: Բայց քանի որ մեր՝ ասիական մշակույթում ամուսնությունն ու ընտանիքը շատ կարևոր արժեք ունեն, իմ վիճակը որպես թերույթյուն է դիտվում: Այսինքն՝ ինչ-որ բան չունենալով է որոշվում քո ով լինելը, իսկ ունենալը քեզ դարձնում է ավելի լիարժեք:

Դրա համար էլ Աստծո՝ «ինձ բաժին ընկած» լինելը շատ մխիթարական է ինձ համար (Սաղմ. 72.26): Երբ Իսրայելի ցեղերին երկրից տրվեցին իրենց բաժինները, ղևտացի քահանայական ցեղին ոչինչ չտրվեց: Դրա փոխարեն Աստված խոստացավ, որ «Տերն ինքն է նրանց բաժինն ու ժառանգությունը» (Բ. Օր. 10.9): Նրանք պետք է իր մեջ գտնեին կատարյալ գոհացում ու վստահեին, որ Նա իրենց կարիքները պիտի ամեն օր հոգար:

Մեզանից շատերը պակասի այդ զգացումը այլ պատճառներով կարող են զգալ. մեկն ավելի լավ աշխատանք կուզենա ունենալ, մեկ ուրիշը՝ ուսումնական հաջողություններ: Անկախ դրանցից՝ մենք կարող ենք ընդունել Աստծու մե՛ր բաժինը: Նա մեզ կդարձնի կատարյալ ու լիարժեք: Նրանով մենք ոչ մի բանի պակաս չենք ունենա:

**Աղոթք** - Հայր, շնորհակալ եմ, որ ինձ ամբողջացնում ես Քրիստոսով: Օգնիր ինձ, որ ես էլ սաղմոսերգուի նման կարողանամ ասել.« Ինձ համար բարիք է մերձենալ Աստծուն» (Սաղմ.72. 28): Ամեն:

**Բնականաբար, կարող ես մտածել, թե ինչ-որ մի բանի ղակաս ունես: Հանձնվիր Աստծուն ու գտիր րո բաժին գոհացումը:**



## Նյութերի ցանկ

Աղոթք.....	Հուլ. 1,6,8,15,22,25,31, օգ. 12,27, սեպ. 4, 22
Անարդարություն.....	օգ.1,8,27
Անկում.....	Հուլ. 12
Աշակերտություն.....	օգ. 10
Ապաշխարություն.....	Հուլ. 17
Առանձնություն.....	Հուլ. 11
Աստվածաշնչի հեղինակություն.....	օգ.17, սեպ. 11,13
Աստծվածաշնչի սերտողություն.....	Հուլ. 10, սեպ. 2
Աստծու երկյուղածությունը.....	սեպ. 27
Աստծու հետ հաղորդակցություն.....	Հուլ. 8, սեպ. 28
Աստծու սերն ու գուրգուրանք.....	Հուլ.2,11,16, 18,20, 24, 25, 28, օգ. 4,10, 16,18,21,24,31, սեպ. 5,6,9,17
Աստծուն վստահել.....	Հուլ. 4,20,22,24, օգ. 14,20, սեպ. 19,30
Արդարություն.....	Հուլ. 1
Ավետարանչություն.....	Հուլ. 5, օգ. 11,13, սեպ. 16
Բարեկամություն.....	Հուլ. 14
Գոհունակություն.....	Հուլ. 30
Երջանկություն.....	Հուլ. 27, սեպ. 11
Զգացումներ.....	սեպ. 25,26
Ինքնապատկեր.....	Հուլ. 10, օգ. 2
Խորհրդատվություն.....	Հուլ. 7
Ծառայություն.....	օգ. 5,16, սեպ. 8, 24
Կյանքի պայքարներ.....	Հուլ. 16, օգ. 14, 20
Հավածանք.....	սեպ. 19
Հանգիստ.....	Հուլ. 1, սեպ. 6,26,27
Հարաբերություններ.....	օգ. 22,25, սեպ.18
Հավատք.....	Հուլ. 31, օգ. 26
Հավատքի պատմություններ.....	Հուլ. 19× օգ. 21
Հեզություն.....	օգ. 5
Հոգեկան բարեփոխում.....	Հուլ.3,30, սեպ. 7,15,29





Հոգու պտուղները.....	Հուլ. 21
Հավիտենական կյանք.....	սեպ. 12.
Հույս.....	սեպ.10,24
Հուսահատություն.....	սեպ. 25
Մատակարարություն.....	Հուլ. 13,15
Մեղք.....	Հուլ. 8, 12, 17
Մեղքի թողություն.....	Հուլ. 13, սեպ. 12
Մենակություն.....	սեպ. 30
Մոլություն.....	սեպ. 15
Ներել ուրիշներին.....	օգ. 7
Ողորմածություն.....	օգ. 13, 15
Ուրիշներին դատել.....	Հուլ. 14
Սեր և ամուսնություն.....	Հուլ. 28, սեպ. 7
Սեր ուրիշների հանդեպ.....	Հուլ. 26, օգ. 9, 23, 25, սեպ. 14
Սուրբ Հոգի.....	սեպ. 1, 5, 22
Սրբություն.....	Հուլ. 19, օգ. 22
Վիշտ.....	Հուլ. 11
Տառապանք.....	օգ. 6, սեպ. 19
Ցեղապաշտություն.....	Հուլ. 17, օգ. 17
Փառաբանություն.....	օգ. 27, սեպ. 27
Փրկություն.....	Հուլ. 31, օգ. 11, 26, 29, սեպ. 3, 12, 15, 20
Քաջակերուժ.....	օգ. 13, սեպ. 18
Քավություն.....	Հուլ. 12
Քրիստոնեական կյանք և միություն.....	Հուլ. 23, 29, սեպ. 10
Քրիստոնեական տոնակատարություններ.....	օգ. 19
Քրիստոսի վերադարձը.....	օգ. 28
Քրիստոս՝ Փրկիչ.....	օգ. 29
Քրիստոսի համար ապրել.....	Հուլ. 2, 9, սեպ. 23
Քրիստոսի նման ապրել.....	Հուլ. 9, օգ. 3, 2, սեպ. 18, 21, 24



## Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ,

Եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցություն  
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռախոս՝ +374 10 54 35 76; +374 10 54 35 78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Արցախ

ք. Ստեփանակերտ

Ալեք Մանուկյան 7<sup>ա</sup>

Հեռ. +374 47 94 52 75

-----  
Անուն, ազգանուն .....

Հասցե.....

.....

Հեռախոս.....

-----



Գրքույկը ստանալու համար դիմել Ամերիկայի Հայ  
Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի և  
Արցախի մասնաճյուղերին

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18  
Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78  
Էլփոստ՝ [amaa.armenia@amaa.am](mailto:amaa.armenia@amaa.am)  
Էլկայք՝ [www.amaa.am](http://www.amaa.am)

Արցախ  
375000 ք. Ստեփանակերտ, Ալեք Մանուկյան 7ա  
Հեռ. (+374) 94 52 75, (+374) 95 02 95